ԸՍՏ «ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ»
ԱՄՍԱԳՐԻ՝ ԱՄԵՆԱՎԱՃԱՌՎՈՂ
ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Լ Ի Զ Ա
Բ Ի Վ Ե Ր

# ՈՒԺԵՂ

**ԱՄԵՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ**

---

*Ազդեցիկ և ջերմեռանդ կյանքով ապրելու համար*

Թանկագի՛ն ընկերներ

Իմ փափագն ու աղոթքն է, որ զորանաք, աճեք հավատքի մեջ և վերապրեք Աստծո, մարդկանց և ինքներդ ձեզ հետ ներդաշնակ ապրելու ուրախությունը: Դուք ուժ եք ստանում, երբ աճում եք հավատքի մեջ՝ կարդալով և խոսելով Աստծո Խոսքը և ապրելով Նրա Խոսքով:

Ուժեղ լինելը կոչում է և հրաման, բայց այն, թե որտեղից ենք ստանում մեր ուժը, նույնքան կարևոր է, որքան այն, թե ինչպես ենք դրսևորում դա: Մեր մշակույթը կասի, որ ուժը գալիս է ներսից, բայց ճշմարտությունն այն է, որ Աստված է մեր վստահության և ուժի աղբյուրը: Նրանում է մեր ապագան:

Դուք ուժեղ եք, որովհետև Քրիստոսի մեջ ձեզ տրվել են զորություն, սեր և զգաստություն, դուք ուժեղ եք Նրա Խոսքի ճշմարտությամբ, երբ փոխզիջման չեք գնում արդարության ձեր որոնումներում:

Վե՛ր կացեք և փնտրե՛ք ***Նրա*** ուժը ***ձեր*** կյանքում:

Միասին Քրիստոսում՝



Լիզա
LisaBevere@ymail.com

MessengerX

Messenger INTERNATIONAL

# ՈՒԺԵՂ

**ԱՄԵՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Ազդեցիկ և ջերմեռանդ կյանքով ապրելու համար*

Լ Ի Զ Ա   Բ Ի Վ Ե Ր

*Strong Devotions,* Armenian, by Lisa Bevere
© 2024 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as Strong Devotions by
Thomas Nelson, Nashville, USA.
ISBN 978-4002-1313-9
This version of the *Strong Devotions* published in cooperation with Thomas
Nelson, a registered trade mark of HarperCollins Christian Publishing Inc.

Additional resources in Armenian are available for free download and
video streaming at **MessengerX.com** and on the **MessengerX** app
To contact the author: LisaBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is
NOT FOR SALE

*Ուժեղ. ամենօրյա ընթերցանություն,* Լիզա Բիվեր, հայերեն
© 2024 Messenger International
MessengerInternational.org
Բնագիրը՝ անգլերենով՝ *«Strong Devotions»* վերնագրով.
«Thomas Nelson» հրատարակչություն, Nashville, USA.
ISBN 978-4002-1313-9
*«Ուժեղ. ամենօրյա ընթերցանություն»* գրքի այս տարբերակը
հրատարակվել է «Thomas Nelson» հրատարակչության հետ
համագործակցությամբ, որը «HarperCollins Christian Publishing Inc.»-ի
գրանցված ապրանքանիշն է:

Հայերեն հավելյալ նյութեր անվճար ներբեռնման և հոսքային
հեռարձակման համար հասանելի են **MessengerX.com** կայքում և
**MessengerX** հավելվածում:
Հեղինակի հետ կարող եք կապ հաստատել՝ գրելով LisaBevere@ymail.com
հասցեին:

Գիրքը նվեր է «Messenger International» ծառայության կողմից և
ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՍ 1. *Ուժեղ՝ Աստծո մեջ*


1 Ուժեղ լինելը լավ է . . . . . . . . . . . .2
2 Վստահ՝ Քրիստոսի մեջ . . . . . . . . . . .4
3 Դուք մենակ չեք. . . . . . . . . . . . 6
4 Աստված լսում է ձեզ . . . . . . . . . . . 8
5 Մեր իսկական ցանկությունը . . . . . . . . 10
6 Բավարարություն . . . . . . . . . . . . 12
7 Հանդարտվել Աստծո սիրով . . . . . . . . 14
8 Դուք ապահով եք . . . . . . . . . . . . 16
9 Դադարե՛ք . . . . . . . . . . . . . 18


## ՄԱՍ 2. *Ուժեղ՝ Հոգով*


1 Երգի ուժը . . . . . . . . . . . . . 22
2 Վստահ և ունակ . . . . . . . . . . . . 24
3 Առողջ սիրտ . . . . . . . . . . . . . 26
4 Ընդունել կնոջ էությունը . . . . . . . . . 28
5 Հանգիստ և ազդեցիկ . . . . . . . . . . 30
6 Կառավարել կրքերը. . . . . . . . . . . 32
7 Երկրպագությունն ավելին է, քան երգը . . . . . 34
8 Հոգևոր իշխանություն . . . . . . . . . 36
9 Աղոթե՛ք Հոգով . . . . . . . . . . . . 38

## ՄԱՍ 3. Ուժեղ՝ մաքրության մեջ


1 Մաքուր . . . . . . . . . . . . 42
2 Նվիրվել . . . . . . . . . . . . 44
3 Ներկայանալ լիարժեք . . . . . . . . . 46
4 Հրաշքով եք ձևավորվել . . . . . . . . . 48
5 Շնչավոր կապեր . . . . . . . . . . 50
6 Բժշկարար զղջում . . . . . . . . . . 52
7 Պատվել ամուսնությունը . . . . . . . . . 54
8 Պաշտպանության տակ . . . . . . . . . 56
9 Հարսնացու . . . . . . . . . . . 58


## ՄԱՍ 4. Ուժեղ՝ ճշմարտության մեջ


1 Իմաստուն՝ խոսքերով . . . . . . . . . 62
2 Զմսանատված սիրտ. . . . . . . . . . 64
3 Պարիսպներ . . . . . . . . . . . 66
4 Լինել շրջահայաց . . . . . . . . . . 68
5 Թողնել ափսոսանքի երկիրը . . . . . . . . 70
6 Սիրված կին . . . . . . . . . . . 72
7 Ոչ երկրորդ կարգի քաղաքացի . . . . . . . 74
8 Ձեր ամբողջ սերը . . . . . . . . . . 76
9 Քայլել լույսի մեջ . . . . . . . . . . 78


## ՄԱՍ 5. Ուժեղ՝ փոխհարաբերություններում


1 Աստված ընդունում է ձեզ. . . . . . . . . 82
2 Խաղաղություն կոնֆլիկտի ժամանակ . . . . . . 84
3 Հրապուրանք և ուղղություն . . . . . . . . 86
4 Ապահով և անվտանգ . . . . . . . . . 88
5 Իմաստուն՝ ընկերության մեջ . . . . . . . . 90

6 Արդարության Աստված . . . . . . . . . . 92
7 Չենթարկվել բամբասանքին . . . . . . . . 94
8 Ապրել ներդաշնակության մեջ . . . . . . . 96
9 Աճել բարեպաշտ համայնքում . . . . . . . 98

## ՄԱՍ 6. *Ուժե՛ղ պայքարի մեջ*

1 Ուշադիր և արթուն . . . . . . . . . . . 102
2 Խաղաղություն սեռերի միջև . . . . . . . . 104
3 Պայքար չներման դեմ . . . . . . . . . . 106
4 Ձեր ապաստանը . . . . . . . . . . . 108
5 Մենք պայքարի մեջ ենք . . . . . . . . . 110
6 Վահաններ և նետեր . . . . . . . . . . 112
7 Իրական պատերազմը . . . . . . . . . . 114
8 Պայքարել լույսի մեջ . . . . . . . . . . 116
9 Լինել վճռական. . . . . . . . . . . . 118

## ՄԱՍ 7. *Ուժե՛ղ շնորհքի մեջ*

1 Ձեր անցյալը ձեր ապագան չէ. . . . . . . . 122
2 Ներվել. . . . . . . . . . . . . . 124
3 Լինել գթառատ . . . . . . . . . . . 126
4 Աճ, ոչ թե մեղքի զգացում . . . . . . . . 128
5 Սրտի այգին . . . . . . . . . . . . 130
6 Դատաստանի տուփ. . . . . . . . . . . 132
7 Խոստովանել և բաց թողնել . . . . . . . . 134
8 Զինվել՝ կյանքի կոչելու համար . . . . . . . 136
9 Ոչ մի դատապարտություն . . . . . . . . 138

## ՄԱՍ 8. *Ուժեղ՝ ինքնատիրապետման մեջ*


1 Լսել ուշադիր . . . . . . . . . . . 142
2 Վերահսկել ախորժակը . . . . . . . . . 144
3 Բարկանալ կարելի է. . . . . . . . . . 146
4 Հետևե՛ք ձեր խոսքերին . . . . . . . . . 148
5 Փրկարար զղջում . . . . . . . . . . 150
6 Հաստատվել Խոսքի մեջ. . . . . . . . . 152
7 Ցանել և հնձել . . . . . . . . . . . 154
8 Հանգստության ուժը . . . . . . . . . 156
9 Աստծո դեսպան . . . . . . . . . . 158


## ՄԱՍ 9. *Ուժեղ՝ ազատության մեջ*


1 Արձակվել մեղքի կապանքներից . . . . . . . 162
2 Նոր սիրտ . . . . . . . . . . . . 164
3 Խոստովանության զորությունը . . . . . . . 166
4 Ազատվել մեղքից . . . . . . . . . . 168
5 Երբ չափազանց ցավոտ է . . . . . . . . 170
6 Հաստատուն՝ ազատության մեջ . . . . . . . 172
7 Ազատ՝ սահմանափակումներից . . . . . . . 174
8 Դուք նոր ստեղծված եք . . . . . . . . . 176
9 Ազատվել՝ Նրանը լինելու համար . . . . . . . 178


## ՄԱՍ 10. *Ուժեղ՝ սրբության մեջ*


1 Ոչ այս աշխարհից . . . . . . . . . . 182
2 Սովորել հնազանդություն . . . . . . . . 184
3 Սրբվել. . . . . . . . . . . . . 186
4 Մաքրվել կրակով . . . . . . . . . . 188
5 Ֆիզիկական ծոմապահություն . . . . . . . 190

6 Ընձայել սիրտը . . . . . . . . . . . . 192
7 Վերցնել խաչը . . . . . . . . . . . . 194
8 Աստծո Խոսքը . . . . . . . . . . . . 196
9 Համբերատարություն . . . . . . . . . 198

# Ուժեղ՝ Աստծո մեջ

I

# ՈՒԺԵՂ ԼԻՆԵԼԸ ԼԱՎ Է

*«Աստված ուժեղ է և ցանկանում է, որ դուք էլ ուժեղ լինեք»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.10, MSG

Սկսելով այս ճամփորդությունը, որի նպատակն է դառնալ ուժեղ՝ նախ մեր սրտում ամրապնդենք հետևյալը.

Ուժեղ լինելը սխալ չէ:

Շատ հաճախ քրիստոնյա կանայք ավելի շուտ տկարության, քան ուժի հետ են ասոցացվում: Կրոնը ոտքի կանգնելու փոխարեն ժամանակ առ ժամանակ մեզ սովորեցրել է թաքնվել: Ճիշտ է, մենք կանչված ենք լինելու հեզ, բայց ո՛չ թույլ: Հեզությունը լավագույնս սահմանվում է որպես վերահսկվող ուժ: Թե՛ Մովսեսը, թե՛ Հիսուսը հեզ էին, բայց ո՛չ թույլ: Հեզերը գիտեն, որ իրենց ուժն Աստծուց է: Եսթերը հեզ էր, բայց թուլակամ չէր: Հեզերը նաև խոնարհ են, քանի որ հասկանում են, որ իրենց ուժը սկիզբ է առնում ավելի բարձր զորությունից: Հեզերը գիտեն, թե ինչպես և երբ պայքարեն, բայց անախորժություն չեն փնտրում:

Ուժը երկսայրի սուր է, որ կարող է գործածվել որպես կործանարար զենք կամ գերիներին ազատ արձակելու միջոց: Եվ հաճախ առաջին գերին, որն ազատ արձակվելու կարիք ունի, մենք ենք:

Այս կյանքն ուժ է պահանջում: Եվ որքան երկար ենք ապրում, այնքան կյանքը դժվարանում է: Անաստված մշակույթում բարեպաշտ ապրելու համար անհրաժեշտ կլինի ավելի շատ ուժ, քան ինքներս կարող ենք ունենալ: Բարեբախտաբար մենք մենակ չենք: Մենք կքննենք եփեսացիների թղթի հետևյալ խոսքերը, որոնք ընդգծում են, թե ինչու յուրաքանչյուրս պետք է ընդունենք այս մարտահրավերը և դառնանք ուժեղ: Մեր փոխհարաբերությունները նկարագրելուց հետո Պողոսը Եփեսացիների 6.10-18-ը

սկսում է այսպես. «Այսուհետև, եղբայրնե՛րս, զորացե՛ք Տիրոջով և Նրա զորության կարողությունով» (10-րդ խոսք):

Փոխհարաբերությունները ուժ են պահանջում: Բայց ամեն անգամ, երբ փորձում եմ սիրել կամ նույնիսկ համակրել ինչ-որ մեկին իմ ուժերով, ես դատապարտված եմ ձախողման: Մենք ունենք մարդկային շատ սահմանափակ կարողություն՝ ապահովելու այն ուժը, որի կարիքն ունենք ամեն օր: Ահա թե ինչու մենք դիմում ենք մեր Տիրոջ ուժին և զորությանը: Աստվածաշնչի մեկ այլ թարգմանության մեջ այսպես է ասվում. «Աստված ուժեղ է և ցանկանում է, որ դուք էլ ուժեղ լինեք» (MSG):

Աստված գիտի, որ մենք ուժեղ չենք, դրա համար էլ մեզ ուժեղ է դարձնում: Դավիթն օգտվում էր ուժի այս Աղբյուրից, երբ Աստծուն երկրպագող հովիվ էր: Մեր Աստված Ամենակարող է՝ մեզ զորացնելու համար: Մեր Հայրն Ամենազոր է Իր դուստրերին զորություն տալու համար: Աստված ունի ծրագիր ձեր կյանքի համար, իսկ սատանան ունի հնարքներ: Նրա նպատակն է հեռացնել ձեզ Աստծո ծրագրից: Ես պետք է զգուշացնեմ ձեզ՝ սատանան արդար պայքար չի մղի: Այն պահին, երբ դարձաք Աստծո դուստր, դուք կնքվեցիք Աստծո Սուրբ Հոգով և հայտնվեցիք թշնամու ուշադրության կենտրոնում: Նախքան վերստին ծնվելը դուք նրա ծառան էիք, իսկ հիմա՝ թիրախ: Բայց երբ հանդիպում ենք մեր ուժի ճշմարիտ Աղբյուրին, ժամանակն է սպառազինվելու: «Եվ Աստծո սպառազինությունը հագե՛ք, որ կարող լինեք սատանայի հնարքներին հակառակ կենալ» (Եփեսացիների 6.11):

*Սիրելի՛ Երկնային Հայր, շնորհակալ եմ, որ Դու ուժեղ ես և ցանկանում ես, որ ես էլ ուժեղ լինեմ: Ես կսպառազինվեմ, որպեսզի հետևեմ Քո ծրագրին:*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՍՏՎԱԾ ԻՄ ՈՒԺԻ ԱՂԲՅՈՒՐՆ Է:

2

# ՎՍՏԱՀ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՋ

*«Եվ անապատում կբնակվի իրավունքը, և արդարությունը պտղաբեր արտում կնստի: Եվ արդարության գործը կլինի խաղաղություն, և արդարության արդյունքը՝ հանգիստ ու ապահովություն (անգլերենում՝ վստահություն) հավիտյան»:*

ԵՍԱՅԻ 32.16, 17

Երբ մտածում եք ինքնավստահ կնոջ կերպարի մասին, ի՞նչ եք պատկերացնում: Ամսագրերը, խանութների ցուցափեղկերը, վահանակները ցուցադրում են աշխարհի պատկերացումը ինքնավստահ կնոջ մասին. նա գրավում է շրջապատողների ուշադրությունը իր վստահ ժպիտով և անթերի ոճով: Պատահական չէ, որ այս վստահությունը հաճախ վաճառքի համար է՝ դիմահարդարման միջոցների կամ որոշակի կենսաոճ ներկայացնող ապրանքների տեսքով, որը մեզ պակաս ցանկալի «նախքան» վիճակից տանում է դեպի հիասքանչ «հետո»-ն: Բայց վերջին հաշվով հաջողության կամ գրավչության մեջ ինքնահաստատում փնտրելը դատարկ զբաղմունք է: Լուսանկարի համար քանի՞ հավանում է մեզ անհրաժեշտ, կամ քանի՞ անծանոթի մեկնաբանություն կպահանջվի, որ վերջապես ասենք. «Բավակա՛ն է… ես բավարարվա՛ծ եմ»: Խոստանում եմ, որ անգամ օրական միլիոն հավանումը կամ մեկնաբանությունը երբեք բավական չի լինի մեզ բավարարելու համար:

Եթե վստահենք հանրաճանաչությանը կամ գեղեցկությանը, շարունակ կնայենք ուրիշներին, որ հաստատեն մեր արժեքը և

ցանկալիությունը: Մեր ինքնագնահատականը բազմիցս փորձության և սպառնալիքի կենթարկվի այլ կանանց կողմից, և մեր վստահությունն անցողիկ կլինի: Բայց կա մեկ այլ ճանապարհ: Մենք ունենք Իշխան, որը մշտապես կամենում է գեղեցկացնել այն կանանց, որոնք մոտենում են Իրեն:

Վստահությունը, որ Նա տալիս է մեզ, թափանցում է ավելի խորը, քան նույնիսկ կարող ենք պատկերացնել: Խոսքը պարզապես ցուցափեղկի զարդարանքի, բջջային հավելվածներում զտիչների կամ նոր աքսեսուարի մասին չէ, այլ խոր, ջերմացնող փայլի մասին է, որ առաջանում է այն գիտակցումից, որ մենք խորապես սիրված և ճանաչված ենք: Երբ կինն այսկերպ սիրված է, դա ակնհայտ է: Քրիստոս Հիսուսն օրհնել է մեզ Իր բարեհաճությամբ: Ժամանակն է թույլ տալու, որ Նրա սերն ավելի, քան բավական լինի, և ժամանակն է դադարելու բավարարման այլ աղբյուր փնտրելուց:

Ժամանակն է հայացք նետելու մեր հոգու վիճակին՝ «նախքան» և հետո»: Ժամանակն է իսկապես գնահատելու, թե ինչ է Քրիստոսն արել, և այդ հիմքի վրա կառուցելու մեր վստահությունը: Այն սերը, որ Նա տալիս է, երբեք չի մարում: Նա փափագում է քնքշորեն խնամել յուրաքանչյուրիս, որպեսզի կարողանանք ծաղկել Իր սիրո մեջ:

*Տե՛ր, շնորհակալությո՛ւն, որ ամեն օր նորոգում, մաքրում և դարձնում ես ինձ այնպիսին, ինչպիսին Դու ես ինձ տեսնում: Ես ապավինում եմ Քո փրկարար շնորհքին:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀԻՍՈՒՍՆ ԻՄ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԱՂԲՅՈՒՐՆ Է:

3

# ԴՈՒՔ ՄԵՆԱԿ ՉԵՔ

*«Ձեզ ուրիշ փորձություն չի պատահել՝ բացի մարդկային փորձությունից. բայց Աստված հավատարիմ է, որ չի թողնի ձեզ ձեր կարողությունից վեր փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել»:*

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 10.13

Շատ հնարավոր է, որ ես երբեք չտեսնեմ ձեզ կամ պատիվ չունենամ իմանալու ձեր անունը, բայց գիտեմ, որ մենք այնքան էլ տարբեր չենք և մեր կյանքի ընթացքում կբախվենք միատեսակ շատ մարտահրավերների: Կորնթացիների թուղթը հուսադրում է մեզ, որ այն խնդիրները, որոնց առերեսվում ենք, միայն մերը չեն: Մենք մենակ չենք մեր փորձություններում կամ հաղթանակներում: Բայց սատանան՝ մեր հոգիների թշնամին, սիրում է մեկուսացնել և մեղադրել մեզ, ասես մենք մենակ ենք: Նա ստեր է շշնջում. «Դու միակն ես, որ պայքարում ես սրա դեմ: Ոչ ոք քեզ պես վատը չէ»: Ես գիտեմ, որ դուք լսել եք նման խոսքեր, որովհետև ինքս էլ լսել եմ այս ստերը:

Աստված անաչառ է Իր խոստումների և Խոսքի մեջ: Նա ընդունում է Իր առջև եկող խոնարհ և հնազանդ սիրտ ունեցողին: Սա չի վերաբերում ամբարտավաններին և ինքնահավաններին, որոնք երևակայում են, թե ամեն բան հասկանում են: Նա մեզ ամենից լավ լսում է այն ժամանակ, երբ մեր ուժերով գործելու փորձերից հոգնած ու սպառված մոտենում ենք Իրեն: Աստված բարձրացնում է հոգնածներին ու կոտրվածներին և առաջարկում. «Բայց եթե մեկը ձեզնից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան» (Հակոբոս 1.5):

Բազմաթիվ թանկագին կանայք մենակ և մեկուսացված են զգում: Ժամանակն է գիտակցելու, որ ինչպես մենք միասնական ենք մեր պայքարում, այնպես էլ կարող ենք միասնական լինել մեր ուժի մեջ: Հավանաբար, դուք մեկուսացված և մեղադրված եք զգացել: Սրանք ստեր են: Դուք մենակ չեք: Ձեր Տերը ձեր Փրկիչն է, ոչ թե ձեզ մեղադրողը:

Սա բազում պատճառներից մեկն է, որ հոգևոր համայնքն այդքան կարևոր է: Երբ միանում ենք այլ մարդկանց, որոնք արդեն անցել են այն դժվարությունների միջով, որոնց մեջ հիմա մենք ենք, մեր հավատքը զորանում է: Մենք քայլ ենք անում հավատքով և համարձակվում հավատալ, որ Աստված ինչպես հավատարիմ էր նրանց հանդեպ, այնպես էլ հավատարիմ կլինի մեր հանդեպ: Թո՛ւյլ տվեք հավաստիացնել ձեզ.

Աստված բարկացած չէ ձեզ վրա:

Նա չի մեղադրում ձեզ:

Նա ավելի, քան պատրաստ է օգնելու ձեզ:

Դուք մենակ չեք:

*Հա՛յր, փա՛ռք եմ տալիս Քեզ, որ ես մենակ չեմ, և Դու չես մեղադրում ինձ: Շնորհակալությո՛ւն, որ ընդունում ես ինձ Քո բժշկարար ներկայության մեջ: Երբ բժշկվեմ, իմ ճամփորդության մասին կպատմեմ ուրիշներին, որպեսզի նրանք էլ քաջալերվեն:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՄԵՆԱԿ ՉԵՄ: ԻՄ ՏԵՐԸ ԻՄ ՓՐԿԻՉՆ Է, ՈՉ ԹԵ ԻՆՁ ՄԵՂԱԴՐՈՂԸ:

4

# ԱՍՏՎԱԾ ԼՍՈՒՄ Է ՁԵԶ

*«Սակայն Աստված լսեց և իմ աղոթքի ձայնին մտիկ տվեց»:*

ՍԱՂՄՈՍ 66.19

Շատ ծնողներ, որոնք ունեն փոքր երեխաներ, ձեզ կպատմեն, որ երբեմն մեր թանկագին, գեղեցիկ հրեշտակները կռվում են, վիրավորում միմյանց կամ աղմուկ բարձրացնում՝ իրենց ուզածը ստանալու համար (ինչպես մենք՝ ժամանակ առ ժամանակ): Երկու տարեկանի հետ թեժ պայքարում, թվում է, ավելի հեշտ է զիջել: Թույլ տալ, որ նա հաղթի «այս ճակատամարտում» այն հույսով, որ հետագայում դո՛ւք կհաղթեք «պատերազմում»: Գուցե հաղթեք, բայց միայն ավելի մեծ դժվարությամբ և ավելի մեծ պայքարի գնով, քան սկզբում էր պահանջվում: Վատ վարքագծի խրախուսումը վերջին հաշվով բացասական հետևանք է ունենում ձեզ համար: Ի վերջո, դուք երեխային լավություն չեք անում, այլ արջի ծառայություն եք մատուցում: Աստված՝ մեր երկնային Հայրը, բոլոր ծնողներից ամենաիմաստունն է: Նա գիտի, որ երբ նյարդայնանում ենք ինչ-որ *բանի* համար, վտանգում ենք ավելի մեծարժեք բան… մեր բնավորությունը:

Խոստովանում եմ, որ պատահել է, երբ իմ ուզածին հասնելու համար պոռթկացել եմ, ինչի համար մեղավոր եմ զգացել: Ես գանգատվել եմ և դժգոհել. «Աստվա՛ծ, ինչո՞ւ նրանք ունեն սա, իսկ ես՝ ոչ»: Ուրիշ անգամներ հարցը վերաբերել է փոխհարաբերություններին. «Աստվա՛ծ, Դու գիտես՝ ես ճիշտ եմ, իսկ նրանք՝ սխալ: Ասա՛ կամ ցո՛ւյց տուր դա նրանց»: Այսպես

վարվում էի հատկապես, երբ տարաձայնություններ էի ունենում ամուսնուս կամ այլ քրիստոնյաների հետ: Ես պատկերացնում էի, որ Աստված ընդհատում էր նրանց աղոթքը, որպեսզի ասեր նրանց, որ ես ճիշտ եմ: Իհարկե, այսպիսի աղոթքները երբեք չէին պատասխանվում: Այնքան շնորհակալ եմ, որ Աստված հետամուտ էր իմ բարօրությանը, փոխանակ ինձ տալու այն, ինչ ցանկանում էի:

Աղոթքները չեն պատասխանվում բազմաթիվ պատճառներով, բայց երբեք մի՛ կարծեք, որ Նա չի պատասխանում, որովհետև չի լսում: Նա մշտապես հետամուտ է, որ մեր աճը ծառայի ավելի մեծ բարիքի, որն այդ պահին վեր է մեր հասկացողությունից: Անկախ նրանից՝ աղոթում ենք լավագույն մտադրություններով, թե սահմանափակ պատկերացմամբ՝ Նա ականջ է դնում մեր ձայնին՝ հստակ իմանալով, թե ինչի կարիք ունենք: Նա ունի հավիտենական տեսանկյուն: Հասունանալով ես համարձակվում եմ ինքս ինձ և ուրիշներին հանձնել Աստծո ձեռքերի մեջ, և Նրա արդարությունը հաղթում է՝ անկախ իմ հասկացողությունից: Մենք մշտապես կարող ենք հույս ունենալ, որ Նա կլսի և կարձագանքի մեզ այնպես, որ Իր բացարձակ գերիշխանությունը ցույց տա մեր կյանքում:

*Տե՛ր, ես շնորհակալ եմ, որ երբ խոսում եմ, Դու լսում ես ողորմածությամբ և պատասխանում ես Քո իմաստությամբ և Քո կամքի համաձայն: Իմ ապագան ապահով է Քո ձեռքերում:*

*Ես ուխտում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱ ՁԵՌՔԵՐՈՒՄ ԵՄ, ՈՎ ԳԻՏԻ, ԹԵ ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԱՊԱԳԱՅՈՒՄ:

5

# ՄԵՐ ԻՍԿԱԿԱՆ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

*«Ես բարձրացնում եմ իմ աչքերը դեպի սարերը. որտեղի՞ց կգա իմ օգնությունը: Իմ օգնությունը Տիրոջից է, որ երկինքն ու երկիրս արեց»:*

ՍԱՂՄՈՍ 121.1, 2

Բոլորը բավարարվածություն են փնտրում: Ոմանք դիմում են փողին, իշխանությանը կամ աշխարհիկ հաջողությանը՝ այն գտնելու համար: Ուրիշները փնտրում են դա սիրո, սեռական հաճույքի կամ հավանություն գտնելու մեջ: Բավարարվածություն հնարավոր է փնտրել նույնիսկ դրական բաներում, օրինակ՝ մարդկանց օգնելու կամ արդարությունը պաշտպանելու մեջ: Բայց վերջին հաշվով կհիասթափվենք, եթե բավարարվածություն փնտրենք Աստծուց դուրս: Մենք մշտապես հուսախաբվում ենք, երբ ճիշտը սխալ տեղում ենք փնտրում:

Մենք կարիք ունենք բարձրացնելու մեր աչքերը դեպի երկինք, որովհետև մեր օգնությունը մեր Արարչից է: Միայն այնտեղ կգտնենք մեր աղբյուրը և մեր բավարարվածությունը: Ահա տխուր ճշմարտությունը. երբ համառորեն հետամուտ ենք լինում այլ բաների, Աստված թույլ է տալիս, որ գնանք այդ ճանապարհով: Ինչպես Նա չխանգարեց Ադամին ու Եվային՝ քաղելու և ուտելու Պարտեզի պտղից, այնպես էլ չի խանգարում մեզ կառչելու ինչ-որ բանից՝ մեր ուզածին հասնելու համար: Նա ուզում է լինել մեր իսկական ցանկությունը, բայց թույլ է

տալիս, որ ունենանք այն, ինչ ցանկանում ենք, եթե նույնիսկ դա վնասակար է մեզ համար: Պողոսը մարդկանց մասին գրում է. «Եվ ինչպես որ չընտրեցին Աստծուն ունենալ իրենց գիտության մեջ, Աստված մատնեց նրանց անարգ մտքի, որ անարժան բաներ գործեն» (Հռոմեացիների 1.28):

Երբ ոտքերով գետնին ենք խփում և ասում. «Ո՛չ, ես ուզում եմ այն, ինչ ուզում եմ», Աստված նահանջում է և թույլ տալիս, որ ունենանք այն, ինչ մեր անմիտ կամքն է պահանջում: Միայն ավելի ուշ ենք հայտնաբերում, որ մեր հույսերը չեն արդարացել:

Աստված չի ցանկանում, որ մենք պատժվենք, ինչպես որ չի ցանկանում՝ գերության մեջ պահվենք: Լսե՛ք Նրա բաց հրավերը. «Հիմա եկե՛ք ու վիճաբանենք,- ասում է Տերը,- եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյան պես պիտի սպիտակեն. եթե նրանք որդան կարմիրի պես լինեն, ասրի պես սպիտակ պիտի դառնան: Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք» (Եսայի 1.18.19):

Եկե՛ք վերադառնանք Նրա մոտ հոժար և հնազանդ սրտով և դարձնենք Նրան մեր ուժի և օգնության աղբյուրը:

*Երկնայի՛ն Հայր, ների՛ր, որ դիմել եմ անհուսալի բաների, երբ Դու ես կյանքի և օգնության իմ իսկական աղբյուրը: Մաքրի՛ր ինձ և օգնի՛ր, որ ունենամ հոժար և հնազանդ հոգի:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՐԿՆՔԻ ԵՎ ԵՐԿՐԻ ԱՐԱՐԻՉՆ ԻՆՁ ԱՅԴՊԻՍԻՆ Է ՍՏԵՂԾԵԼ:

6

# ԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*«Իմ կյանքը կկշտանա ինչպես ճարպով և պարարտությունով, և իմ բերանը կօրհնի Քեզ ուրախ շրթունքներով: Երբ որ Քեզ հիշում եմ անկողնումս, գիշերվա պահերին Քեզ վրա եմ մտածում: Որովհետև Դու ինձ օգնություն եղար, և ես Քո թևերի հովանավորության տակ կցնծամ: Իմ անձը պինդ Քո ետևիցն է ընկնում. Քո աջը հաստատ պահում է ինձ»:*

ՍԱՂՄՈՍ 63.5-8

Մտաբերե՛ք մի դեպք, երբ մասնակցել եք ճաշկերույթի, որտեղ մատուցվել են առողջարար, համեղ ուտեստներ, և դուք ժուժկալություն եք ցուցաբերել: Դուք բավականաչափ օգտվել եք, բայց չափը չեք անցել: Գիշերը, երբ պառկել եք քնելու, ավելի շատ գոհունակություն, քան անհարմարություն եք զգացել: Երբ լավ սնվում եք և լավ հանգստանում, խորապես բավարարվում եք:

Մեր հոգին կարող է վերապրել նույնպիսի բավարարություն, ինչպիսին մեր մարմինն է զգում: Ինչպես Դավիթը, մենք կարող ենք պառկել անկողնում և հիշել Աստծո բարությունը: Եվ հակառակը, կարող ենք պառկել անկողնում և հիշել մեր դժվարություններն ու ձախողումները: Մեզ խրախուսվում է հանգստացնել մեր միտքը՝ խորհելով մեր Հոր հրաշքների շուրջ: Պատկերացրե՛ք մի հսկա թռչուն, որն իր թևերով պատսպարում և պաշտպանում է ձագերին (այս պահից սկսած ահա թե ինչպես եմ ես տեսնելու իմ Մխիթարիչին): Երբ քնում ենք, հանգստանում ենք: Երախտագիտության և հիացմունքի այս մթնոլորտում մեր սիրտը երգում է մեր կյանքում Տիրոջ օգնության և պաշտպանության մասին: Ամեն օրը կարող է Աստծո փառաբանություն լինել:

Քունը իսկական առեղծված է: Սա այն ժամանակն է, երբ մենք առավել խոցելի ենք: Մի քանի ժամով մեր գիտակցությունը թմրում է, և մենք աննկատ վերանում ենք: Շատերս երեխա ժամանակ ավելի խորն էինք քնում, քան հիմա, երբ չափահաս ենք: Գոհ և անհոգ՝ երեխաներն իրենց ցերեկային զբաղմունքը փոխանակում են գիշերվա քնի հետ: Մեզ՝ մեծահասակներիս համար ավելի դժվար է առօրյան առանձնացնել գիշերային հանգստից: Մենք հակված ենք մեզ հետ անկողին բերելու այն, ինչ պետք չէ: Երբ այսպես ենք վարվում, պայքարում ենք անհանգստության և վախերի դեմ մինչև լուսաբաց և արթնանում ենք ավելի հոգնած, քան քնելուց առաջ էինք:

Ես հայտնաբերել եմ, որ երբեք լավ չեմ քնում, երբ թույլ եմ տալիս, որ քնելուց առաջ անհանգստությունները գլուխ բարձրացնեն: Գիշերն այն ժամանակն է, երբ մեր աչքերը փակում ենք՝ հրաժեշտ տալով օրվան, և մեր սրտերը բացում ենք Նրա առջև: Սաղմոս 127.2-ը խոստանում է. «…Նա Իր սիրելիին քուն է տալիս»: Ուշադրությո՛ւն դարձրեք, որ գրված չէ՝ Նա քուն է տալիս կատարյալներին կամ նրանց, ովքեր կատարյալ օր են ունեցել: Նա քուն է տալիս Իր զավակներին, որոնց սիրում է: Դուք այդ զավակն եք: Ուզում եմ՝ պատկերացնեք, թե ինչպես են Նրա բարությունը և պաշտպանությունը ծածկում ձեզ այս գիշեր: Եթե պատկերացնեք, վստահ եմ, որ առավոտյան կարթնանաք երկրպագության երգով:

*Տե՛ր, ամեն գիշեր ես բաց կթողնեմ իմ անկատար օրը և կմտածեմ Քո կատարյալ սիրո մասին: Դու սիրում ես ինձ, որովհետև Դու սեր ես: Շնորհակալություն ինձ քուն պարգևելու համար:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՄՏՈՐՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈ ԲԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ,
ԵՎ ԻՄ ՀՈԳԻՆ ՀԱՆԳԻՍՏ Է ԳՏՆՈՒՄ:

7

# ՀԱՆԴԱՐՏՎԵԼ ԱՍՏԾՈ ՍԻՐՈՎ

*«Քո Տեր Աստված քո մեջ զորավոր է, Նա փրկում է, Նա պիտի ուրախանա քեզ վրա զվարճությամբ, Նա պիտի լռի Իր սիրով և պիտի ցնծա քեզ վրա խնդալով»:*

ՍՈՓՈՆԻԱ 3.17

Մեզնից շատերը՝ սեռական, ուրիշները՝ փոխհարաբերությունների, ոմանք՝ ֆինանսական մղձավանջի մեջ են: Ես հասկացել եմ, որ հաճախ մղձավանջի դեմ պայքարելու լավագույն միջոցը երազելն է:

Օրինակ՝ երբ երեխաներս կեսգիշերին արթնանում էին վախեցած, հիվանդ կամ չափազանց հուզված, ես մոտենում էի նրանց, որ հանգստացնեի: Օրորում էի, պառկում նրանց կողքին կամ, եթե ուշ ժամ էր, և ամուսինս տանը չէր, պառկեցնում էի իմ մահճակալին: Ինչո՞ւ: Ուզում էի, որ նրանք իմանան, որ ես իրենց մոտ եմ: Գրկում էի նրանց, լսում էի նրանց վախերի մասին՝ շոյելով նրանց մազերը: Շշնջում էի հուշակումներ Աստծո և իմ սիրո մասին և հիշեցնում Նրա հավատարիմ պաշտպանության մասին: Օրորոցային էի երգում, մինչև որ նրանց շնչառությունից հասկանում էի, որ քնել են:

Վախեցած զավակների հանդեպ մոր այսպիսի քնքուշ արձագանքը բխում է Աստծո սրտից: Դա մեզ մխիթարելու Նրա ցանկության ընդամենը փոքր արտահայտումն է: Երբ մենք ցավ ենք զգում, երբ ձախողվում ենք, երբ վախեցած ենք, Աստված ուզում է, որ մոտենանք Իրեն և երբեք չհեռանանք: Որպես Նրա զավակներ՝ մենք հրավիրված ենք ապահովության և սիրո Նրա գիրկը: Այնտեղ Նա կտա մեզ գեղեցկության տեսիլքներ, որոնք

ունակ են վերադարձնելու մեզ հանգստի և անդորրության մեջ: Ես սիրում եմ այն տեսարանը, երբ հայրը քնքշորեն օրորում է իր դստերը, որ նա քնի և հանգստանա ու բժշկվի: Ամբողջ սրտով հավատում եմ, որ ձեր Հայր Աստված ցանկանում է.

- մոտեցնել ձեզ Իրեն,
- մաքրել ձեզնից մեղքի և ամոթի բոլոր հետքերը,
- հեռացնել ձեր վախերը՝ բերելով դրանք ճշմարտության լույսի ներքո,
- տալ ձեզ հույս և ապագա,
- օրորել ձեզ, մինչև ձեր փոթորիկը հանդարտվի,
- վերադարձնել ձեզ հանգստի մեջ,
- վերականգնել ձեր սրտի երազանքը:

Աստված հեռու կամ անհասանելի չէ: Նա պատրաստ է օգնության հասնելու մեզ և Իր մեծ զորությամբ փրկում է մեզ: Նա չի ձանձրանում, երբ մենք աղաղակում ենք վախից կամ անօգնականությունից: Նա հաճույք է ստանում Իր զավակներին հանգստացնելուց, ինչպես մայրն է ուրախությամբ մխիթարում իր զավակներին: Բայց մոր մխիթարելու կարողությունը սահմանափակ է, մինչդեռ Աստծո մխիթարելու կարողությունը նույնքան անսահման է, որքան Նրա սերը: Աստծո բնավորության խորությունը հանգստացնում է մեզ, երբ Նա երգում է: Հրավիրե՛ք Նրան, որ մոտենա և հանդարտեցնի այն փոթորիկները, որոնք ինքներդ չեք կարող հանդարտեցնել:

*Երկնայի՛ն Հայր, ես մոտենում եմ Քեզ՝ հավատալով Սոփոնիա 3.17-ի խոստումին, որ Դու ինձ հետ ես և կհանգստացնես ինձ Քո սիրով: Այս երազանքն ավելի զորեղ է, քան ցանկացած մղձավանջ, որի մեջ եմ այժմ: Ես հանձնվում եմ՝ Քո մեջ հանգստանալու:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀԶՈՐՆ ԻՆՁ ՀԵՏ Է, ՆԱ ԵՐԳՈՒՄ ԵՎ ՀԱՆԴԱՐՏԵՑՆՈՒՄ Է ԻՄ ՀՈԳԻՆ ԻՐ ՍԻՐՈՎ:

8

# ԴՈՒՔ ԱՊԱՀՈՎ ԵՔ

*«Ամեն զգուշությունից առավել զգուշացի՛ր քո սրտին, որ նրանից է կյանքի ելքը»:*

ԱՌԱԿԱՑ 4.23

Ո՞րն է ձեր տան ամենաարժեքավոր իրը: Ի՞նչ կպատահի, եթե այն գողանան, կամ կորցնեք: Գուցե կարողանաք վերականգնել այն խնայողությունների կամ ապահովագրության միջոցով. սա անկասկած անհանգստություն կպատճառի, բայց մեծ աղետ չէ: Իսկ ո՞րն է ձեր տան ամենաանգին իրը հուզական առումով: Հավանաբար, ինչպես ինձ համար, լուսանկարչական ալբոմը կամ մեկ այլ իր, որը հիշեցնում է անցյալը: Եթե կորցնեք դա, գրեթե անհնար կլինի վերականգնելը: Դուք ստիպված կլինեք ընդունել այդ կորուստը: Դուք կտխրեք, բայց կյանքը կշարունակվի: Ճշմարտությունն այն է, որ եթե գողը մտնի ձեր տուն և գողանա բոլոր արժեքավոր իրերը, նա չի տանի ամենաարժեքավորը, որովհետև չի կարողանա գողանալ ձեր ամենաթանկ գանձը… ձեր սիրտը:

Իրականում սիրտը գողանալու միակ միջոցը այն կապելն է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի հետ, որն ունակ է այն գողանալու: Այս դեպքում ձեր կորուստը կարող է իսկապես մեծ լինել: Սա է պատճառը, որ Աստված ասում է՝ սիրենք Իրեն մեր ամբողջ սրտով, որովհետև միայն Նրա մեջ է մեր սիրտն ապահով: Ձեր սիրտը կամ «կապվածությունները», ինչպես գրված է Աստվածաշնչի թարգմանություններից մեկում, ունի զորություն՝ «ազդելու ձեր կյանքում ամեն ինչի վրա» (Առակաց 4.23, TLB):

Այս խոսքը, որը մեզ կոչ է անում պահպանելու մեր սիրտը,

նկարագրում է այն որպես աղբյուրի: Աղբյուրը ակունք է մաքուր, թարմ, անվտանգ ջրի, որը սնում է շրջապատող բույսերին և կենդանիներին: Այն, անշուշտ, ազդում է շրջակայքում ամեն ինչի վրա: Քաղաքակրթությունը, որպես կանոն, առաջանում է ջրի ակունքների շուրջը: Չոր վայրերում աղբյուրը վճռորոշ նշանակություն ունի կյանքի և մահվան համար: Եթե այն աղտոտվում է կամ խորքում կտրվում է իր ակունքից, տարածքում ամեն բան տուժում է: Բույսերը չորանում են, արարածները՝ մահանում: Հետևաբար աղբյուրն արժի պահպանել և խնամել՝ պաշտպանելով աղտոտումից և պահպանելով նրա կապը ակունքի հետ:

Մենք պահպանում ենք մեր սրտերն այնպես, ասես դրանք կենսատու ջրի աղբյուր են մեզ համար: Մենք պաշտպանում ենք դրանք աղտոտումից, երբ հեռու ենք պահում դառնությունից և վիրավորանքից: Մենք պաշտպանում ենք դրանք երաշտից՝ աղոթքի և փառաբանության միջոցով կապ պահպանելով ճշմարիտ ակունքի հետ: Մենք պաշտպանում ենք մեր սրտերը անառողջ կապվածություններից՝ հեռու պահելով դրանք այս աշխարհի անհուսալի բաներից, որոնք սրտերը գողանալու հատկություն ունեն: Երբ ջանասիրաբար պահպանեք ձեր սիրտը՝ սիրելով «ձեր Տեր Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ անձով և ամբողջ մտքով», ինչպես պատվիրեց Հիսուսը, Նա կպահի և կաճեցնի ձեզ (Մատթեոս 22.37):

*Աստվա՛ծ, ցո՛ւյց տուր, թե ինչպես սիրտս ամբողջությամբ նվիրեմ Քեզ և լավ պահպանեմ այն: Ես գիտեմ, որ այն ամենից ապահով է Քո խնամքի ներքո:*

*Ես ուխտում եմ.*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՄ
ԻՄ ՍՐՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ:

Գ

# ԴԱԴԱՐԵ՛Ք

*«Դադարե՛ք և ճանաչե՛ք, որ Ես եմ Աստված»:*

ՍԱՂՄՈՍ 46.10

Այս գիրքը՝ քննելուց առաջ, ուզում եմ՝ մի փոքր կատարեք: Ժամանա՛կ հատկացրեք՝ պառկելու լռության մեջ և բացելու ձեր սիրտը Աստծո առջև: Ընդունե՛ք պարզապես Աստծուն պատվելու, դադար առնելու և Նրան ճանաչելու հրավերը: Ճանաչելու ի՞նչ: Ճանաչելու Նրան՝ որպես Աստծո՝ թույլ տալով, որ Նա հայտնի Իրեն ձեր կյանքում՝ ձեր ուրախությունների, ինչպես նաև ցավերի, անախորժությունների կամ ճգնաժամերի մեջ: Նա ցանկանում է սիրո խոսքեր շշնջալ, նախքան քունը կտիրի ձեզ:

Խաղաղ լռության մեջ ոչինչ մի՛ ասեք... պարզապես լսե՛ք: Եթե անախորժության մեջ եք, մի՛ արդարացրեք ձեր դիրքորոշումը: Հանդարտվե՛ք և թո՛ւյլ տվեք, որ Աստված հայտնի Իրեն ձեզ լռության մեջ: Դուք ձեռք կբերեք Նրա հասկացողությունը և տեսանկյունը, երբ վայր դնեք բոլոր փաստարկները:

Աղոթքը և մտորումը ավելի շատ վերաբերում են նրան, թե ինչ ենք լսում, ոչ թե նրան, թե ինչ ենք խոսում: Մենք հաճախ մտածում ենք, որ աղոթքի միջոցով արտաբերում ենք մեր խոսքերը, արտահայտում մեր սրտի զեղումները, մեր խնդրանքները Նրա առջև: Այս ամենը լավ է: Բայց աղոթքն այսքանով չի սահմանափակվում: Այո՛, կա ժամանակ՝ խնդրելու Նրանից մեր սրտի ցանկությունները: Կա ժամանակ՝ աղաչելու և արդարություն խնդրելու Նրանից: Բայց մեր խոսքերի գետերը մեզ չեն մաքրի: Դրանք ընդամենը արտահայտում են մեր տեսակետը: Իմ

դատողությունների տարափը չափազանց աղոտ է և հախուռն՝ ինչ-որ բան մաքրելու համար. այն միայն բորբոքում է եղածը և լրացուցիչ աղբ կուտակում: Ես պետք է ձեռք բերեմ խորաթափանցություն խոր ջրերից, որոնք ի զորու են թարմացնելու ինձ և հեռացնելու իմ մեղավորությունն ու ամոթը:

Դադար: *Սելա*: Ժամանա՛կ հատկացրեք լսելու, թե ինչ է ձեր Աստված ասում: Եթե օրվա վերջում ձեր գլխում անհանգստություններ և հախուռն մտքեր են կուտակվում, դուք չպետք է թույլ տաք, որ դրանք սպառեն ձեր ուժերը և խանգարեն ձեր հանգիստը: Մի՛ պառկեք և անընդհատ մի՛ հիշեք օրվա լարվածություններն ու անհաջողությունները: Փոխարենը վերականգնե՛ք լռության պահը, որպեսզի լինեք Նրա հետ, ով կարող է բերել ճշմարիտ խաղաղություն: Միայն Նա կարող է իսկապես ազատել ձեզ այն մտքերից, որոնք հյուծում են ձեզ, և լցնել ձեր հոգին, մինչ դուք քնած եք: Երբ արթնանաք, կբացահայտեք, որ «Տիրոջ ողորմություններն են, որ չվերջացանք, որովհետև չպակասեցին Նրա գթությունները: Նրանք ամեն առավոտ նորանոր են. մեծ է Քո հավատարմությունը» (Երեմիայի ողբերը 3.22, 23):

*Հա՛յր, երբ պառկեմ քնելու, հանգստացրո՛ւ իմ հոգին և խոսի՛ր իմ սրտի հետ: Միայն Դու կարող ես կանգնեցնել իմ սրընթաց մտքերը: Իմ օրվա վերջին վայրկյանները տալիս եմ Քեզ՝ շնորհակալ լինելով նոր ողորմությունների համար, որոնք ցուցաբերելու ես ինձ առավոտյան:*

*Ես ուզում եմ,*

ԵՐԲ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ ԵՎ ԼՌՈՒՄ
ԵՄ ԻՄ ԱՍՏԾՈ ԱՌՋԵՎ:

# Ուժեղ՝
# հոգով

I

# ԵՐԳԻ ՈՒԺԸ

*«Տիրոջը նոր ե՛րգ երգեք, որ Նա հրաշքներ արեց. փրկեց Նրան Նրա աջ ձեռքը և Նրա սուրբ բազուկը»:*

ՍԱՂՄՈՍ 98.1

Գեղեցիկ և աստվածային կապ կա սիրո և երաժշտության միջև: Դրանք զարգացնում և բացահայտում են միմյանց: Երաժշտությունը մեզ տեղափոխելու զորություն ունի: Երաժշտության մեջ ընկղմված խոսքերն ի զորու են դիպչելու մեր սրտի այն տեղերին, որոնց ուրիշ ոչինչ չի կարող հասնել: Բոլորս հափշտակվել ենք մեծ ուրախությամբ կամ հայտնվել ենք խոր տրտմության մեջ երգի զորության ներքո:

Երաժշտությունը կարևոր բանալի է Աստծո հանդեպ մեր սերն արթնացնելու համար, որովհետև այն ի զորու է տեղափոխելու մեզ մեր իրականությունից դեպի Աստծո ներկայությունը: Այն բացահայտում է մեր իսկական և խոր հույզերը և մեզ ավելի է մոտեցնում Աստծո սրտին: Այն կարող է խոսել մեր փոխարեն, երբ դժվարանում ենք արտահայտվել և տոգորված ենք ճնշող զգացմունքներով:

Գիտեի՞ք, որ երաժշտության վրա կա օծություն: Հետևաբար իմաստությամբ պետք է ընտրեք այն: Հին կտակարանում օծությունն ամենից հաճախ ասոցացվում էր թագավորի, քահանայի կամ մարգարեի վրա յուղ լցնելու հետ: Յուղը Աստծո Հոգու խորհրդապատկերն էր: Նոր կտակարանում օծությունը խորհրդանշում է Սուրբ Հոգու ներբնակությունը և Քրիստոսին հայտնելու զորությունը: Այսպիսով՝ աստվածային, օծված երաժշտությունը լիազորված է Հոգուց՝ մեզ Նրա ներկայության մեջ ներգրավելու համար: Պատահել է,

երբ երկրպագության ժամանակ Նրա ներկայությունը լիովին տիրել է ինձ: Թեև ես Նրան չեմ տեսել իմ աչքերով, բայց Նա կարծես համակել է իմ ամբողջ էությունը: Այդ ներկայության մեջ ես լիովին ապահով և սիրված եմ զգացել:

Քանի որ երաժշտությունն ունի զորություն՝ հուզականորեն մեզ ինչ-որ վայրեր տանելու, կարևոր է, որ իմաստությամբ ընտրենք մեր նպատակակետը: Եթե ցանկանում եք քայլել մաքրության մեջ, պետք է պաշտպանվեք անցանկալի ազդեցություններից: Երաժշտությունը կշրջանցի ձեր պաշտպանության առաջին գիծը և բնակություն կհաստատի ձեր մտքում, նույնիսկ եթե դա չեք ցանկանում: Միգուցե դուք երբեք անձամբ չեք երգել տվյալ երգի բառերը, բայց դրանք ձեր մտքում են՝ շարունակ հիշեցնելով երգի ուղերձը: Բոլորս լսել ենք, թե ինչպես են մարդիկ դժգոհում. «Այդ երգը մտքիցս դուրս չի գալիս»:

Ուստի անմաքուր երգերը փոխարինեք այլ՝ երկնային երգերով: Ո՛չ բոլոր երկրային երգերն են վատը, բայց ո՛չ բոլորը ձեզ կմոտեցնեն Աստծուն: Երկնքի երգերը կմոտեցնեն: Երբ երգում ենք այդ երգերը, հռչակում ենք մեր սերն ու փափագը Աստծո հանդեպ: Դա երկրպագության ձև է, իսկ երկրպագությունը երկրպագողին մշտապես զինում է առավել խոր հայտնությամբ իր ցանկության առարկայի մասին: Դուք կարող եք գործածել երաժշտության ուժը Աստծո ներկայությունը վայելելու համար. այն անպայման ձեզ կօգնի մոտենալու Նրան:

*Տե՛ր, շնորհակալություն երաժշտության պարգևի համար: Մո՛տ եղիր ինձ, երբ սիրտս բարձրացնեմ երգով, և ցո՛ւյց տուր, թե ինչպես գործածեմ երաժշտության ուժը՝ հոգիս զորացնելու համար: Թո՛ղ իմ սրտի ամեն երգը փառավորի Քեզ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՁԱՅՆՍ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՄ
ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐԳ ԵՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

2

# ՎՍՏԱՀ ԵՎ ՈՒՆԱԿ

*«Եվ այսպիսի վստահություն ունենք առ Աստված Քրիստոսի ձեռքով: Ոչ թե մենք մեզնից բավական (անգլերենում՝ ունակ) ենք մի բան միտք անելու ինչպես մեզնից, այլ մեր բավական (անգլերենում՝ ունակ) լինելն Աստծուց է»:*

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.4, 5

Ես համոզված չեմ, որ իմ կյանքում կա որևէ բնագավառ, որտեղ լիովին վստահ և ունակ եմ զգում: Վստահ եմ, որ ունակ չեմ ինքնուրույն ինչ-որ բան անելու: Բարի լուրն այն է, որ հարկ չկա, որ մենք ունակ լինենք մեր ուժերով: Աստված է մեզ ունակ դարձնողը: Ոչ ոք չի կարող հավատքի կյանք ունենալ առանց Սուրբ Հոգու առաջնորդության: Դավիթ թագավորն աղոթում էր. «Սուրբ սի՛րտ ստեղծիր ինձանում, ո՛վ Աստված, և ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում: Դեն մի՛ գցիր ինձ Քո երեսից և Քո Սուրբ Հոգին մի՛ վեր առ ինձնից» (Սաղմոս 51.10, 11):

Դավիթը գիտեր, թե ով էր մաքուր սրտի իր աղբյուրը, և հասկանում էր Սուրբ Հոգու ներգրավվածությունը դրանում: Հովհաննեսի 20-ում Հիսուսն Իր աշակերտներին տվեց Սուրբ Հոգին: Նրանք Սուրբ Հոգու կարիքն ունեին, որպեսզի կարողանային ներել: Բ Կորնթացիների 3.6-ում գրված է. «Որ մեզ բավական (անգլերենում՝ ունակ) էլ արեց Նոր Կտակարանի պաշտոնյաներ լինելու՝ ոչ թե գրի, այլ հոգու, որովհետև գիրը սպանում է, այլ հոգին կենդանացնում է»: Ինչո՞ւ չհրավիրել Սուրբ Հոգուն, որ փչի սուրբգրային այն խոսքերի վրա, որոնց

անսպասելի հանդիպում եք, որպեսզի դրանք բերեն կյանք և կերպարանափոխում:

Սուրբ Հոգին խոստացված Մխիթարիչն ու Խորհրդատուն է, որը կսովորեցնի և կհիշեցնի մեզ այն ամենը, ինչ Հիսուսն ասաց: Այս թանկարժեք պարգևը խոսում է այն մասին, որ մենք ունենք Ուսուցիչ, երբ ուսումնասիրում ենք Խոսքը, և Ուղեցույց, երբ հետամուտ ենք Նրա սրտին: Հոգին բացում է մեր աչքերը, որ տեսնենք, մեր ականջները, որ լսենք, և մեր սրտերը, որ հավատանք:

*Երկնայի՛ն Հայր, շնորհակալ եմ, որ ես ունակ և վստահ եմ Քո մեջ: Սո՛ւրբ Հոգի, առաջնորդի՛ր ինձ և ստեղծի՛ր մաքուր սիրտ ու նորոգված, ուղիղ հոգի իմ ներսում: Տո՛ւր ինձ հնարավորություն և զորություն, որ ապրեմ այնպես, որ փառավորեմ Հորը:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՔՐԻՍՏՈՍՆ ԻՆՁ ՎՍՏԱՀ
ԵՎ ՈՒՆԱԿ Է ԴԱՐՁՆՈՒՄ:

3

# ԱՌՈՂՋ ՍԻՐՏ

*«Ուրախ սիրտը օգտակար է ինչպես դեղ, բայց կոտրած սիրտը ոսկորները կչորացնի»:*

ԱՌԱԿԱՑ 17.22

Աստվածաշունչը մեզ զարմանալի հասկացողություն է տալիս մեր առողջության աղբյուրի մասին: Ոսկրածուծում կամ ոսկորների խոռոչում կա հեղուկ: Ոսկրածուծում են գոյանում արյան բջիջները, և այստեղ է ամրապնդվում իմունային համակարգը: Կյանքն արյան մեջ է, և մեր արյունը թարմանում է ոսկրածուծի շնորհիվ: Եթե ոսկորները չորանում են, վտանգվում է մեր կյանքի իրական աղբյուրը: Սա կրկին հաստատվում է Առակաց 14.29, 30-ում. «Երկայնամիտ մարդը շատ խոհեմ է, բայց կարճամիտը հիմարություն է հանում: Մարմնին կյանք է մի հանդարտ սիրտը, բայց նախանձը փտություն է ոսկորներին»:

Աստվածաշունչը երկայնամտությանը հակադրում է կարճամտությունը, իսկ հանդարտությանը՝ նախանձը: Երկայնամտությունը բերում է խոհեմություն, մինչդեռ կարճամտությունը հիմարության ապացույց է: Խաղաղ սիրտը մարմնին կյանք է տալիս, մինչդեռ նախանձը կամ չարամտությունը ապականում կամ փտեցնում է ոսկորները: Մի՞թե զարմանալի չէ, որ քաղցկեղի որոշ տեսակներ բուժվում են ոսկրածուծի փոխպատվաստմամբ: Մեր ոսկրածուծի վիճակը չափազանց կարևոր է: Ոսկորները մեր մարմնի կառուցվածքային հենարանն են: Դրանք այն կմախքն են, որի շնորհիվ կանգնում ենք և առանց որի ընկնում ենք:

Աստվածաշունչը հաստատում է, որ կա իրական և հարատև փոխհարաբերություն հոգևոր սրտի և առողջության միջև: Ես չեմ ակնարկում, որ նրանք, ովքեր հիվանդ են, ունեն հոգևոր խնդիր:

Մենք ապրում ենք մեղանչած աշխարհում, որ հիվանդության և տկարության անեծքի մեջ է: Ասելիքս այն է, որ դառնությունը, չներումը, բարկությունը և սրտի այլ խնդիրներ ուղղակիորեն ազդում են ձեր իմունային համակարգի վրա: *«Դարձրո՛ւ բարկությունը քեզ դաշնակից»* գրքում Նեյլ Քլարք Ուորենը հայտնում է, որ հյուծող հիվանդությունները ամենից հաճախ կապված են զայրույթի հետ, իսկ երկրորդ տեղում հուսախաբությունն է: Նա թվարկում է այս տարածված տկարությունները, որոնք առաջանում են չհաղթահարված բարկության հետևանքով՝ գլխացավեր, ստամոքսի խնդիրներ, մրսածություն, կոլիտ և հիպերտոնիա:

Այլ ուսումնասիրություններ ներառում են արթրիտի տեսակները, շնչառական հիվանդությունները, մաշկային հիվանդությունները, պարանոցի և մեջքի խնդիրները, նույնիսկ քաղցկեղը: Աստվածաշունչը դարեր առաջ արդեն հայտարարել է այն, ինչ այսօր մարդիկ ճշմարիտ են համարում: Առակաց 3.5-8-ն իմաստության գանձարան է ճիշտ ապրելու համար.

> «Տիրոջն ապավինի՛ր քո ամբողջ սրտով և քո հասկացողությանը մի՛ վստահիր: Քո բոլոր ճանապարհներում ճանաչի՛ր Նրան, և Նա կուղղի քո ճանապարհները: Դու քո աչքի առաջ իմաստուն մի՛ եղիր, վախեցի՛ր Տիրոջից և հեռացի՛ր չարից: Սա առողջություն կլինի քո մարմնի համար և պարարտություն՝ քո ոսկորներին»:

Այստեղ մենք ունենք խոստում. եթե ապրենք Աստծո երկնային առողջության ծրագրի համաձայն, Նա ասում է, որ այն կբերի առողջություն մեր մարմնին և պարարտություն՝ մեր ոսկորներին:

*Տե՛ր, Դու միացրել ես իմ սիրտը և իմ առողջությունը հատուկ նպատակով: Խնդրում եմ, օգնի՛ր ինձ ապրելու առողջ հոգով, որպեսզի կարողանամ խուսափել անհարկի ֆիզիկական հետևանքներից: Օգնի՛ր, որ մարմինս և հոգիս սնեմ Քո իմաստությամբ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՄ ՈՒՐԱԽ, ԱՌՈՂՋ ՍԻՐՏ:

4

# ԸՆԴՈՒՆԵԼ ԿՆՈՋ ԷՈՒԹՅՈՒՆԸ

*«Բայց ճշմարիտ լինելով սիրո մեջ՝ աճենք Նրանում ամեն բանով, որ է գլուխը՝ Քրիստոսը»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.15

Որպես կին՝ մեր էությունը և ֆիզիկական կազմվածքը ստեղծված են խնամքի և քնքշության համար: Մենք կերտված ենք ոչ թե կոշտ, այլ նուրբ կորերով: Մենք ստեղծվել ենք քնքշության և սրտացավության ավելի մեծ կարողունակությամբ, քան տղամարդիկ: Մենք ավելի խորն ենք զգում և՛ սերը, և՛ ցավը: Մենք ավելի կարեկից ենք, քան տղամարդիկ, և կարող ենք արտասվել բոլորովին անծանոթի ցավի, պայքարի և կորստի համար: Երբ մեզ թույլ չեն տալիս պատշաճ արտահայտել այս հույզերը, մենք կանգնում ենք կա՛մ արտաքուստ, կա՛մ ներքուստ պոռթկալու վտանգի առջև:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ պոռթկում ենք: Իմ՝ երբեմնի ոչ այնքան սիրելի սուրբգրային խոսքերից երկուսը նկարագրում են դա ամուսնության համատեքստում: Երբ նոր էի ամուսնացել, հաճախ էի լսում այս մեջբերումը. «Լավ է բնակվել մի կտուրի անկյունում, քան թե կռվասեր կնոջ հետ՝ մեծ տան մեջ» (Առակաց 25.24): Կամ էլ պակաս գրավիչ մյուս տարբերակը. «Լավ է բնակվել ամայի երկրում, քան թե կռվասեր և բարկացկոտ կնոջ հետ» (Առակաց 21.19):

Ա՜խ: Կտուրի անկյունում ապրելը կնշանակի ենթարկվել բոլոր տարերքների ծայրահեղ դրսևորումներին: Կտուրը չի պատսպարում անձրևից, ձյունից, քամուց կամ կիզիչ արևից:

Սողոմոնն ասում էր, որ ավելի լավ է ապրել այսպիսի պայմաններում, քան մեծ տան մեջ՝ կռվարար կնոջ հետ: Ես ամուսնուս՝ Ջոնի հետ վիճում էի այն մասին, որ այն օրերին կտուրը գործածում էին որպես ծածկապատշգամբ, բայց ինձ համար դժվար եղավ բացատրել երկրորդ սուրբգրային խոսքը: Լավ է բնակվել ամայի երկրում կամ անապատում օձերի ու կարիճների հետ, քան բարկացկոտ, կռվարար և վիճող կնոջ հետ: Պատերազմը հյուծում է… ոչ միայն ուրիշներին, այլև մեզ:

Կանայք ստեղծված են լինելու առողջ և եռանդուն, սիրառատ և սրտացավ: Երբ դեմ ենք գնում արարչության մեր սկզբնական մտահղացմանը կամ նպատակին, իրականում ֆիզիկապես պատերազմում ենք մեր մարմնի դեմ: Մենք ոտնահարում ենք այն կենսատու, զորացնող և աջակցող դերը, որ կարող ենք կատարել մեր կյանքում՝ անկախ նրանից՝ ամուսնացած ենք, թե ոչ:

Երբ մինչև պոռթկալու աստիճան զսպում ենք մեր մտքերն ու հույզերը, հիշենք, որ սա օգտակար չէ որևէ մեկի համար: Սա չի փրկում մեզ կոնֆլիկտից, այլ միայն հանգեցնում է ներքին չարամտության, որը վնասում է մեզ և շրջապատողներին: Եկե՛ք խոսենք ճշմարտությունը սիրով, այնպես, որ լսելի լինի, և ներդաշնակ ապրենք Աստծուց տրված առողջ, եռանդուն, սիրառատ էության հետ:

*Տե՛ր, տո՛ւր ինձ ճշգրիտ պատկերացում իմ էության մասին՝ որպես կնոջ: Սովորեցրո՛ւ լինել հեզ, սակայն ուժեղ՝ ծառայելով Քեզ և գործածելով Քո տված ձայնը՝ ճշմարտությունը սիրով ասելու համար:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ԸՍՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՄ ԻՄ ԷՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԻՐՈՎ ԽՈՍԵԼՈՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ:

5

# ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ԱԶԴԵՑԻԿ

*«Մեղմ պատասխանը կհանգստացնի բարկությունը, բայց վիրավորիչ խոսքը բարկություն կգրգռի»:*

ԱՌԱԿԱՑ 15.1

Հաճախ կարող եմ հիշել խոսակցության մեջ շրջադարձային պահը, երբ այն հաճելի խոսակցությունից վերածվում է տհաճ խոսակցության կամ հակառակը: Երբեմն կարողանում եմ լսել, թե ինչպես է Սուրբ Հոգին զգուշացնում. «Խաղաղվի՛ր, իջեցրո՛ւ ձայնդ, մե՛ղմ պատասխանիր: Մի՛ ասա այն, ինչ ուզում ես ասել, այլ լսի՛ր Իմ մեղմ, բարակ ձայնը և փոխարենը խոսի՛ր Իմ խոսքերը»: Երբեմն ես հնազանդվում եմ և լսում… Երբեմն էլ նախքան հնազանդվելը փորձում եմ ևս մեկ դիտողություն անել և հայտնաբերում եմ, թե որքան թանկ արժեցավ իմ հիմարությունը:

Ես գտել եմ լսելի լինելու գաղտնիքը: Այն միանգամայն պարզ է. եթե ուզում ես՝ քեզ լսեն, խոսի՛ր այնպես, ինչպես կցանկանայիր լսել: Երեխաներս, ամուսինս, իմ աշխատակիցները, իմ շունը, իրականում բոլորը լսում են ինձ ավելի լավ, երբ խոսում եմ այնպես, ինչպես ինքս կցանկանամ լսել: Ես գերադասում եմ, որ ինձ հետ խոսեն մեղմ, հարգալից տոնով: Ես շատ ավելի լավ եմ լսում, երբ ինձ վրա չեն գոռում: Ձայնի բարձրությունը կամ բառերը կրկնելը չէ, որ գրավում են ուրիշների ուշադրությունը, շահում նրանց հարգանքը և նվիրվածությունը: Կարևորն այն է, թե ինչ ենք ասում և ինչ տոնով ենք ասում: Ոչ ոք լրջորեն չի ընդունում այն մարդուն, որն աղմուկ է բարձրացնում: Գուցե տվյալ պահին նա հասնում է իր ուզածին, բայց հետագայում դա թանկ է արժենում նրան: Մենք նյարդայնանում ենք և բարձրացնում մեր ձայնը տարբեր պատճառներով: Ահա դրանցից մի քանիսը.

1. Մենք վախենում ենք, թե մեզ չեն լսում:
2. Գոռալը նախկինում արդյունք է տվել (հասել ենք մեր ուզածին):
3. Մենք ուզում ենք վախեցնել կամ վերահսկել ուրիշներին:
4. Դա այն է, ինչ վերապրել ենք մանկության տարիներին:
5. Մենք դեռևս բարկացած ենք չլուծված խնդրի պատճառով:
6. Դա վատ սովորություն է:

Այս պատճառների մեծ մասն արմատավորված է վախի մեջ: Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության, սիրո և զգաստության (Բ Տիմոթեոս 1.7): Մենք գոռում ենք և աղմուկ բարձրացնում, երբ անզոր ենք զգում: Մենք ձգտում ենք վախեցնելու և վերահսկելու ուրիշներին, երբ մտածում ենք միայն մեր շահի մասին: Վերադառնում ենք մեր նախկին վիճակին, երբ կատարյալ սերը դեռ չի հեռացրել վախը: Չափազանց սուր ենք արձագանքում, երբ երեկվա խնդիրների ծանրությունը շարունակում ենք կրել այսօր:

Երբ նորոգում ենք մեր միտքը, վատ սովորությունները վերանում են, և վախի բռնակալությունը տապալվում է: Ես վաղուց հայտնաբերել եմ, որ անկախ իրավիճակներից՝ ես չեմ վերահսկում դրանք: Ես կարող եմ վերահսկել ինքս ինձ, բայց վերջին հաշվով Աստված է վերահսկում ամեն բան:

Այս ճշմարտությունն ընդունելը ձևավորում է ճիշտ վերաբերմունք, որը թույլ է տալիս հաղորդակցվել այնպես, որ մեզ լսեն:

*Տե՛ր, երբ պայքարում եմ և ձգտում վերահսկողություն պահպանելու, օգնի՛ր հիշելու, որ ես կարող եմ առնվազն վերահսկել իմ լեզուն և իմ ձայնի տոնը: Քո շնորհքով դարձրո՛ւ ինձ զգայուն Քո մեղմ, բարակ ձայնի նկատմամբ և թո՛ւյլ տուր, որ այն ուղղորդի ինձ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՄ ՀԱՆԳԻՍՏ ԵՎ ԱԶԴԵՑԻԿ:

6

# ԿԱՌԱՎԱՐԵԼ ԿՐՔԵՐԸ

*«...նա (մեղքը) քեզ է փափագում, բայց դու իշխի՛ր նրա վրա»:*

ԾՆՆԴՈՑ 4.7

Շատ հաճախ մեր մշակույթում «կիրք» բառին տրվում է միայն սեռական ցանկության նշանակություն, բայց դա շատ ավելի լայն հասկացություն է: Դժվար է սահմանել այն, քանի որ ներառում է երկու ծայրահեղ զգացմունքներ՝ սեր և ատելություն: Կիրքը սերտորեն կապված է բուռն զգացմունքի, խանդավառության, հուզմունքի, ցանկության, քնքշության, սիրո, հրապուրանքի հետ: Ո՞վ չէր ցանկանա այս ամենը: Մյուս կողմից՝ այն նաև ասոցացվում է այնպիսի զգացումների հետ, որոնք կարող են կապվածություն առաջացնել, օրինակ՝ սիրահարվածություն, տենչանք և մարմնական ցանկություն: Այնուհետև այն ասոցացվում է այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են պոռթկումը, կատաղությունը, բարկությունը, զայրույթը, մոլեգնությունը, վրդովմունքը և ցասումը:

Սիրո և ատելության այս ծայրահեղ զգացումների միջև ինչպե՞ս կարող ենք ապրել ջերմեռանդ կյանքով՝ չսպառվելով:

Որպես օրինակ դիտարկենք առաջին պատմությունը, երբ կիրքը հանգեցրեց վատ հետևանքի: Դա Կայենի և Աբելի պատմությունն է Ծննդոց 4-րդ գլխում: Աստված ընդունեց Աբելի զոհը, որը մատուցվեց ամբողջ սրտով, բայց մերժեց Կայենի զոհը, որը մատուցվեց անտարբերությամբ: Եվ Կայենը զայրացավ: Երբ Աստված տեսավ, որ Կայենը բորբոքվեց եղբոր նկատմամբ բարկությամբ, նրան ասաց. «... Ինչո՞ւ ես բարկացել և ինչո՞ւ ես երեսդ կախել: Չէ՞ որ եթե բարի լինես, կբարձրանա. բայց եթե բարի չլինես, մեղքը դռան մոտ պառկած է, և նա քեզ է փափագում, բայց դու իշխի՛ր նրա վրա» (Ծննդոց 4.6, 7):

Ցավոք, Կայենը չշտկեց իր հարաբերություններն Աստծո հետ: Մեղքին տիրապետելու և բարկությանն իշխելու փոխարեն նա սպանեց եղբորը: Աստծո զգուշացումը Կայենին զգուշացում է նաև մեզ: Գուցե մենք մարդասպանության եզրին չենք, բայց եթե չենք անում այն, ինչ ճիշտ է, մեղքը վստահաբար պառկած է դռան մոտ: Մենք պետք է իշխենք մեր զգացմունքներին և կենտրոնացնենք դրանք կառուցողական, ոչ թե կործանարար նպատակների ուղղությամբ:

Կիրքը կարող է լինել արժեքավոր ցուցիչ: Այն դրսևորվում է որպես ֆիզիկական և հուզական բարձր պատրաստվածություն՝ պաշտպանելու այն, ինչի նկատմամբ ջերմեռանդ վերաբերմունք ունենք: Մենք հակված ենք ջերմեռանդ լինելու այն ամենի նկատմամբ, ինչը կարևոր է մեզ համար: Մեզ չեն անհանգստացնում մանրուքները, քանի դեռ հեռանկարում դրանք կապված չեն մեզ համար նշանակալի որևէ բանի հետ: Այսպիսով՝ երբ մեր կրքերը բորբոքվում են, բացահայտում են այն, ինչ մեզ համար կարևոր է: Մենք կարող ենք այդ էներգիան կենտրոնացնել կյանքի ուղղությամբ և թույլ չտալ, որ այն սպառվի քաոսում, ինչպես արեց Կայենը: Անգամ հուզական ծայրահեղ վիճակում իշխանություն ունենք ընտրելու: Մենք ունակ ենք կառավարելու մեր կրքերը և կատարելու այնպիսի ընտրություն, որն առաջնորդում է դեպի կյանք:

*Հա՛յր, սովորեցրո՛ւ ճանաչել իմ կրքերը և բերել դրանք Քեզ մոտ՝ բավարարում ստանալու համար: Խնդրում եմ, այն, ինչ կարևոր է ինձ համար, համապատասխանեցրո՛ւ նրան, ինչը կարևոր է Քեզ համար:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԿԱՐՈՂ ԵՄ ԸՆՏՐԵԼ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԻՄ ԱՆՁԸ ԵՎ ԹՈՒՅԼ ՉՏԱԼ, ՈՐ ԻՄ ԿՐՔԵՐԸ ԼԻՈՎԻՆ ՏԻՐԵՆ ԻՆՁ:

7

# ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻՆ Է, ՔԱՆ ԵՐԳԸ

*«...լցվե՛ք Հոգով՝ խոսելով ձեր մեջ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով, երգե՛ք և սաղմոսե՛ք ձեր սրտերում Տիրոջը»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5.18, 19

Փառաբանությունն ու երկրպագությունն ավելին են, քան հոգևոր սովորություն. դրանք ուժգին ցանկություն են, հաճույք և բանալի՝ Աստծուն ավելի խոր սիրահարվելու համար: Դուք ավելի եք մոտենում Աստծուն՝ լսելով և երգելով սիրո երգեր Նրան և Նրա մասին:

Այսօրվա խոսքում մենք տեսնում ենք հորդոր՝ լցվելու Հոգով փառաբանության և երկրպագության ընթացքում: Մենք լցվում ենք Հոգով, երբ բարձրաձայն երգում ենք և նվագում մեր սրտում, բայց այս խոսքում ներկայացվում է ևս մեկ բանալի ...Աստծո մասին ուրիշների հետ մեր հաղորդակցությունը: Երկրպագությունն ավելին է, քան երգեցողությունը: Այն արտահայտվում է մեր խոսակցության մեջ, քանի որ միանգամայն բնական է խոսել այն մասին, ինչով լցված է մեր սիրտը: Երբ սիրում եք ինչ-որ մեկին, խոսում եք նրա մասին: Սիրված լինելը հուզիչ է, և իհարկե, կցանկանաք ուրիշներին հաղորդակից դարձնել դրա գեղեցկությանը:

Ընկերները միացած են ընդհանուր կապերով, և ընդհանուր ջերմեռանդությունը նման է այն բանին, որ ընկերները կանգնած են խարույկի շուրջը և ազատորեն վայելում են դրա

ջերմությունն ու գեղեցկությունը: Այս կապը ստիպում է մեզ շինություն տալ միմյանց ճշմարտությամբ: Սա է պատճառը, որ ընդհանուր երկրպագությունը շատ զորավոր է. դուք արտահայտում եք ձեր սերը Աստծո հանդեպ, մինչ շրջապատված եք ընկերներով:

Իսկական ընկերները բարձրացնում և կոչ են անում միմյանց՝ վարվելու այնպես, որ հաճեցնեն մեր Տիրոջը: Երբ ձեր ընկերները հետևում են Հիսուսին, բոլորդ ընթանում եք նույն ուղղությամբ: Շրջապատե՛ք ձեզ նրանցով, ովքեր մեկ են ձեզ հետ հոգով և ունեն միևնույն նպատակը: Միշտ չէ, որ դուք կհամաձայնեք ամեն ինչին: Պատրա՛ստ եղեք սովորելու և պահպանե՛ք ձեր կապը:

Լցվե՛ք Հոգով և երկրպագե՛ք ձեր խոսակցությամբ, երգով և հավատացյալների հետ միաբանությամբ:

*Սիրելի՛ Տեր, թո՛ղ փառաբանության խոսքեր ու երգեր հորդեն իմ կյանքից: Համակի՛ր ինձ Քո սիրով այնպես, որ չկարողանամ լռել այն մասին, թե որքան հրաշալի է Քեզնից սիրված լինելը:*

*Ես ուխտում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԶՈՐԱՆՈՒՄ ԵՄ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՎ:

8

# ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

*«Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սիրո և զգաստության»:*

Բ ՏԻՄՈԹԵՈՍ 1.7

Մուրբ Հոգին տալիս է մեզ զորություն, սեր և զգաստություն: Այս երեք առաքինությունների միությունն անշուշտ կձևավորի ուժեղ կնոջ: Համոզված եմ, որ պարգևները, որ Աստված տվել է մեզ, չեն զարգանա, եթե չգործեն Հոգու այս պարգևները: Այս խոսքի մեկ այլ տարբերակում ասվում է. «*Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սիրո և ողջամտության*» (Բ Տիմոթեոս 1.7, NKJV):

Ես չգիտեմ որևէ բան, որն ազդում է մեր զորության, սիրո և ողջամտության վրա ավելի, քան վախի ոգին: Պատճառներից մեկն այն է, որ վախը տանջում է մեզ այնպիսի հարցերով, որոնք թուլացնում են այս երեք հատկանիշերը: Նախևառաջ խոսենք զորության մասին: Այլ կերպ այն կարելի է անվանել հոգևոր իշխանություն: Ինքներս գործնականում ոչ մի զորություն կամ իշխանություն չունենք: Ադամը զիջեց այն իշխանությունը, որ Աստված պարտեզում շնորհել էր իրեն և Եվային: Հնազանդության միջոցով Հիսուսը հետ բերեց այն, ինչը կորսվել էր Ադամի անհնազանդությամբ: «Եվ Հիսուսը, մոտ գալով, նրանց հետ խոսեց և ասաց. «Ամեն իշխանությունն ինձ տրվեց երկնքում և երկրում»» (Մատթեոս 28.18):

Մեր իշխանությունն ու զորությունը Քրիստոսի մեջ են: Ինչո՞ւ վախենանք, եթե մեր կյանքը ծածկված է Նրա մեջ:

Տիմոթեոսի երկրորդ թղթում Պողոսը Տիմոթեոսին՝ Հիսուսի երիտասարդ ծառայողին և աշակերտին, քաջալերում է զարգացնել հավատքի պարգևը: Մենք սա գիտենք, որովհետև նախորդ խոսքում Պողոսը նրան հիշեցնում է. «Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է՝ իմ ձեռքերը քեզ վրա դնելով» (Բ Տիմոթեոս 1.6):

Անկախ նրանից՝ մեզ վրա ձեռք են դրել, թե ոչ, յուրաքանչյուրիս տրվել է հավատքի չափ, որը կարող ենք բազմապատկել՝ հոգ տանելով դրա համար: Հավատքի թեման Նոր կտակարանում հիշատակվում է գրեթե երեք հարյուր անգամ: Հավատքի վերաբերյալ ցայտուն պնդումներից մեկը Եբրայեցիների թղթում է. «Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե Նա կա և թե Իրեն խնդրողներին վարձահատույց կլինի» (11.6):

Շատերս հավատում ենք, որ Աստված կա: Մենք սայթաքում ենք այն ժամանակ, երբ հավատում ենք, որ Նա վարձահատույց կլինի նրանց, ովքեր ջերմեռանդորեն փնտրում են Իրեն: Վախն իր մեղադրանքներով կհարձակվի մեզնից ուժեղագույնների վրա: *«Դու բավականաչափ չես անում: Դու բավականաչափ ուժեղ չես: Դու բավականաչափ չես սիրում: Դու բավական չես»:* Հիսուսի շնորհիվ մենք պատասխանում ենք այս մեղադրանքներին այն ճշմարտությամբ, որ Քրիստոսում մենք ավելի, քան բավական ենք:

*Երկնայի՛ն Հայր, շնորհակալություն Քո Սուրբ Հոգին տալու համար, որը հիշեցնում է, որ Քրիստոսի մեջ ես կարող եմ վարվել սիրով, իշխանությամբ, խաղաղությամբ և մտքի պարզությամբ:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ ԻՆՁ ՏՐՎԵԼ Է ԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՍԵՐ ԵՎ ՈՂՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ:

9

# ԱՂՈԹԵ՛Ք ՀՈԳՈՎ

*«Ամեն աղոթքով և աղաչանքով աղո՛թք արեք ամեն ժամանակ Հոգով և սրանում հսկեցե՛ք բոլոր հարատևությամբ և աղաչանքով ամեն սուրբերի համար»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.18

Աղոթքը և հնազանդությունը հոգևոր պատերազմի ամենաhզոր զենքերն են, և մենք բարձր զգոնության ժամանակաշրջանում ենք: Ուշադրությո՛ւն դարձրեք, Պողոսն առաջարկում է, որ աղոթենք Հոգով ոչ թե երբեմն, այլ ամեն ժամանակ: Ինչպե՞ս ենք աղոթում Հոգով: Միջոցներից մեկը Աստծո Խոսքով աղոթելն է: Երբ կարդաք Սուրբ գիրքը, կհայտնաբերեք, որ որքան տարբեր կարիքներ, այնքան էլ տարբեր աղոթքներ կան: «Հա՛յր մեր» աղոթքը ամենօրյա հրաշալի աղոթք է, բայց օրվա ընթացքում մենք բացահայտում ենք տարբեր իրավիճակներ, որոնց համար պետք է աղոթել: Մենք տեսնում ենք կարիքավոր մարդկանց, ճգնաժամի մեջ հայտնված երկրներ, առաջնորդների, որոնք իմաստության և խորաթափանցության կարիք ունեն: Մենք պետք է աղոթենք մեր ընկերների, մեր ընտանիքների և մեր թշնամիների համար:

Հոգով աղոթելու մեկ այլ միջոց է աղոթելիս Սուրբ Հոգու առաջնորդությանն ուշադիր լինելը: Կլինեն ժամանակներ, երբ կզգաք, որ ինչ-որ բան այն չէ, կամ ինչ-որ մեկը կարիքի մեջ է: Աղոթե՛ք նրա համար: Իմ կյանքում հաճախ է պատահել, երբ աղոթել եմ ինչ-որ մեկի համար և ավելի ուշ պարզել, որ նա դժվարության մեջ էր:

Աղոթքը կարող է լինել ընդհանրական և անձնական: Դուք

կարող եք աղոթել կանգնած, նստած, պառկած կամ ծնկած: Աղոթքը կարող է լինել սրտի լուռ մտորում կամ աղաղակ: Աղոթքը պետք է լինի այնքան բնական, որքան շնչառությունն է: Մեզ խրախուսվում է. «Ամեն ժամանակ ուրա՛խ եղեք: Անդադար աղո՛թք արեք: Ամեն բանի մեջ գոհացե՛ք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ վրա Քրիստոս Հիսուսում» (Ա Թեսաղոնիկեցիների 5.16-18):

Սուրբ Օգոստինոսն այսպես է ասել. «Աղոթե՛ք այնպես, ասես ամեն բան կախված է Աստծուց, և աշխատե՛ք այնպես, ասես ամեն բան կախված է ձեզնից»:

Մենք հզոր ենք այնքան, որքան մեր աղոթքներն են հզոր: Ուժեղ կանայք ուշադիր են իրենց աղոթքի կապը ամուր պահելու հարցում: Ես սիրում եմ աղոթել, երբ լսում եմ երկրպագության երաժշտություն: Սիրում եմ նաև պահել աղոթքի օրագիր. տասնամյակների ընթացքում դրանք դարձել են Աստծո հավատարմության վկայություններ:

Մեր երկնային Հայրը գիտի, թե ինչ մարտերի մեջ ենք հայտնվելու, և մատակարարել է այն ամենը, ինչի կարիքն ունենք ոչ միայն կանգուն մնալու, այլև հաղթելու համար: Թշնամին կշարունակի կռվել մեր դեմ, բայց չի հաղթի:

*Երկնայի՛ն Հայր, սովորեցրո՛ւ ինձ աղոթել, մինչև որ աղոթելը դառնա այնքան բնական, որքան խոսելը: Շնորհակալություն Քո Սուրբ Հոգու առաջնորդության համար:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԻՄ ԱՂՈԹՔՆԵՐՆ ՈՒԺԵՂ ԵՆ:

# Ուժեղ՝ մաքրության մեջ

I

# ՄԱՔՈՒՐ

*«Եվ Նրան, որ կարող է պահել ձեզ սայթաքելուց և անարատ կանգնեցնել Իր փառքի առաջ մեծ ցնծությունով, միակ Աստծուն, մեր Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, փառք, մեծություն, զորություն և իշխանություն բոլոր դարերից առաջ և հիմա և հավիտյան: Ամեն»:*

ՀՈՒԴԱ 24, 25, ESV

Մենք անկարող ենք մեզ մաքուր պահել, բայց Նա կարող է: Առաջին հայացքից կարող է թվալ, թե մաքրությունը նույնն է, ինչ սրբությունը, բայց այդպես չէ: Սրբությունը վերաբերում է առանձնացվելուն կամ նվիրաբերվելուն, մինչդեռ մաքրությունն այն է, թե ինչպես ենք մեզ պահում որպես նվիրաբերված: Մաքրությունը սրբության կողմնակի արդյունքն է: Մենք սովորում ենք մեզ մաքուր պահել՝ դնելով հիմք, որը հաստատված է Աստծո կենդանի Խոսքի վրա:

Աստված ցանկանում է լինել մեր կյանքի աղբյուրը: Եթե դուք իսկապես համարձակ եք, հրավիրե՛ք Սուրբ Հոգուն՝ քննելու ձեր սիրտը և շարժառիթները Աստծո ճեղքող և թափանցող Խոսքի լույսի ներքո: Եբրայեցիների 4. 12, 13-ում գրված է.

> «Որովհետև Աստծո խոսքը կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ է և թափանցում է մինչև շնչի և ոգու և հոդվածների և ծուծի բաժանվելը և քննող է սրտի մտքերը և խորհուրդները: Եվ չկա մի արարած՝ աներևույթ Նրա երեսից. բայց ամենն էլ մերկ և բաց է Նրա աչքերի առաջ, որի հետ է մեր բանը»:

Հավատացե՛ք, սա թուլասիրտների համար չէ: Աստծո Խոսքը պարզապես գիր չէ թղթի վրա … այն կենդանի է: Եթե ցանկանում եք իրական ուժ, որը գալիս է ճշմարտությունն ընդունելուց, կոչ եմ անում հավատալու Նրա Խոսքին և մոտենալու Նրան: Նրա կենդանի Խոսքը փափագում է պարել ձեր սրտում և գիշերը շշնջալ ձեր ականջին: Այն այնքան սուր է, որ կարող է բաժանել շունչը հոգուց և միաժամանակ հայտնել թաքնված մտքերն ու վերաբերմունքը:

Հիշե՛ք, ոչինչ ծածկված չէ Աստծուց: Նա տեսնում է ամենը, նույնիսկ եթե մենք չենք կարողանում տեսնել: Հաճախ մեր սրտերը խաբում են մեզ, բայց եթե խնդրենք ճշմարտությունը, Աստված Իր Խոսքի միջոցով կտա մեզ Իր խորաթափանցությունը: Մենք չենք ուզում մարդու խորհուրդը… Մենք ուզում ենք Աստծո իմաստությունը և խորաթափանցությունը: Մարդու խորհուրդը մշտապես կրում է մշակույթի և այս դարաշրջանի չափանիշերի ազդեցությունը: Այն հիմարություն է, որը վերահարմարեցվում է գրեթե ամեն տասնամյակը մեկ՝ արտացոլելով հասարակության բարոյական մթնոլորտը: Բայց Աստծո Խոսքը մնում է հավիտյան, և այն չափանիշ է, որով հաշիվ ենք տալու:

Դուք կառերեսվեք Աստվածաշնչի ճշմարտություններին և խոստումներին, որոնք կարող են սկզբնապես անհնարին կամ անիրատեսական թվալ… բայց այդպես չէ: Երբ խորամուխ լինենք Խոսքի մեջ, կսովորենք, որ մաքրությունը և սրբությունը հնարավոր են: Որովհետև Աստծո՝ սրբության կոչը ոչ թե կանոններ պահելու, այլ Իրենը լինելու մասին է:

*Երկնայի՛ն Հայր, խնդրում եմ, որ Քո Խոսքը կենդանի և զորավոր լինի իմ կյանքում: Դու ես ինձ սրբացնողը, այնպես որ, զատի՛ր ինձ այն ստերից, որոնք ասում են, թե անհնար է մաքուր լինել: Ուզում եմ ապրել այնպես, որ ուրիշներն իմանան, որ ես Քոնն եմ:*

*Ես ուժեղ եմ։*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ԿԵՆԴԱՆԻ
Է ԵՎ ԶՈՐԱՎՈՐ ԻՄ ԿՅԱՆՔՈՒՄ:

21

# ՆՎԻՐՎԵԼ

*«Ձեզ համար նախանձավոր եմ Աստծո նախանձով: Ձեզ խոստացա մեկ ամուսնու՝ Քրիստոսին, որ մաքուր կույս կանգնեցնեմ Նրա առաջ: Բայց վախենում եմ՝ միգուցե ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, այնպես էլ ձեր միտքը խոտորվի Քրիստոսին անկեղծ և մաքուր նվիրվածությունից»:*

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 11.2, 3 (NIV)

Ես ուժգին ցանկություն ունեմ տեսնելու, որ մաքրության զորությունը տիրում է յուրաքանչյուր կնոջ կյանքում՝ անկախ նրանից՝ ամուսնացած է, թե ոչ, երիտասարդ է, թե տարեց: Երբ եկեղեցում խոսում ենք մաքրության մասին, հաճախ խոսում ենք սեռական հակումների և վարքագծի մասին, բայց մաքրությունը, ինչպես վկայակոչված է այսօրվա խոսքում, վերաբերում է մեր ներքին «մաքուր նվիրվածությանն Աստծուն»: Մաքրությունը սկսվում է մեր մտքում: Եվ մաքրության համար պայքարը ենթադրում է հրաժարվել խոտորվելուց, որին դրդում է մոլորեցնողը: Սա նշանակում է փնտրել ճշմարտությունը Խոսքի մեջ և հրավիրել Սուրբ Հոգու զորությունը ձեր սրտի մեջ՝ ճշմարտությունը ստից բաժանելու համար:

Ինչպես Պողոսը մատնանշում է այսօրվա խոսքում, մենք կարող ենք խոտորվել Քրիստոսին մաքուր նվիրվածությունից: Մենք կարող ենք ընտրել, թե ում խոսքերն ենք լսելու՝ մեր Փրկչի՞, թե՞ փորձիչի, որը որոնում է մեր կյանքը: Բարձրագույն հեղինակությունը Աստծո Խոսքն է: Եթե փնտրեք Աստծուն, Նա կվերցնի Հոգու սուրը և կկտրի ու կհեռացնի ամեն սուտ ձեր կյանքից:

Եթե որևէ իրավիճակում մեզ վրա բավականաչափ ճնշում գործադրվի, մենք կպարտվենք ցանկացած մարտում, որը ներքուստ չենք հաղթել: Եկե՛ք սկսենք մտքի մաքրությունից: Երբ ամեն միտք գերի վերցնենք և հնազանդեցնենք Քրիստոսին (Բ Կորնթացիների 10.5), կտեսնենք, թե ինչպես է մաքրությունը թափանցում կյանքի յուրաքանչյուր բնագավառ:

*Սիրելի՛ Երկնային Հայր, Դու մաքուր և սուրբ ես: Ես Քոնն եմ և նվիրվում եմ ընդունելու Քո Խոսքը՝ փալով Նրան պատիվ, գերազանցություն և իշխանություն իմ կյանքի յուրաքանչ-յուր բնագավառում: Խնդրում եմ, որ Քո Խոսքի սուրը կտրի ամեն անառողջ և անբարեպաշտ կապ և մաքրի ինձ ներսից:*

*Ես ուխտում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՓՆՏՐՈՒՄ ԵՄ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ
ԻՆՉՊԵՍ ԳԱՆՁ՝ ՈՒԺ ԱՌՆԵԼՈՎ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԽԱՐԴԱԽ ԽՈՍՔԻՑ:

3

# ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ԼԻԱՐԺԵՔ

*«...մարդը փեսնում է աչքի առաջինը,*
*բայց Տերը սրփին է նայում»:*

Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 16.7

Դուք կարող եք կարդալ այսօրվա խոսքը և վիճել, որ տեսքը չպետք է կարևոր լինի, որովհետև Աստված նայում է սրտին: Փառք Աստծուն, Նա նայում է մեր սրտին, բայց մենք դեռևս ապրում ենք երկրի վրա, որտեղ բոլորը նայում են արտաքինին և շարժվում իրենց տեսածով:

Մեզ հորդորվում է ուշադիր լինել, թե ինչպես ենք ներկայանում: Մեզ զգուշացվել է, որ ունայնությունն անցողիկ է, հետևաբար անմտություն է մեր տեսքին վստահելը: Բայց քանի որ չենք վստահում մեր արտաքին տեսքին, չի նշանակում, որ պետք է անտեսենք այն:

Փաստն այն է, որ մենք մշտապես հաղորդակցվում ենք՝ անկախ նրանից՝ ունենք մտադրություն, թե ոչ: Մեր ուղերձները փոխանցում ենք երեք ուղիներով՝ ինչ ենք ասում (մեր խոսքերը և ձայնի տոնը), ինչ ենք անում (մեր շարժուձևը և արարքները) և ինչ տեսք ունենք (արտաքին տեսքը կամ ներկայանալու ձևը): Եվ հաճախ մարդկանց վրա ավելի մեծ ազդեցություն է թողնում այն, ինչ տեսնում են, քան այն, ինչ լսում են:

Երբ հասկանանք սա, կկարողանանք գործածել հօգուտ մեզ և արդյունավետորեն հաղորդել մեր մտադրությունները: Վստահ եմ, որ լսել եք հին ասացվածքը. «Դուք երբեք երկրորդ հնարավորություն չեք ունենա լավ առաջին տպավորություն թողնելու համար»: Գուցե սա հին է, բայց, անշուշտ, երբեք ավելի ճիշտ չի եղել: Արտահայտման այսքան շատ տարբերակներ երբեք չեն եղել, բայց ի՞նչ ենք մենք իստակորեն հաղորդում:

Այն, թե ինչպես եք հագնվում և ներկայանում, ոչ միայն անմիջական ուղերձ է ուրիշներին, այլև կարող է ակնարկել ավելին, քան մտադիր էիք հայտնելու: Դա կարող է բացահայտել, թե ինչ եք իրականում մտածում ձեր մասին կամ ինչին եք վստահում կամ ձեր կարծիքով ինչ ազդեցություն եք կրում կամ էլ, իհարկե, թե ում եք պատկանում:

Ես չեմ պատրաստվում նորաձևության որոշակի խորհուրդներ տալու, որովհետև միայն դուք կարող եք պատասխանել այս հարցերին. ի՞նչ եք ներկա պահին հայտնում, ի՞նչ ուղերձ եք փոխանցում, արդյո՞ք դա ձեր իսկական էության ճշգրիտ արտացոլումն է, թե՞ պարզապես կեցվածք եք ընդունում՝ համացանցում հրապարակելու համար:

Ենթադրենք՝ ձեր զգեստը և տեսքը ճշգրտորեն արտացոլում են, թե ով եք դուք: Դուք կարող եք ասել. «Ես մասնագետ եմ, և իմ զգեստը համապատասխանում է իմ մասնագիտությանը»: Կամ գուցե ուսանող եք և զգում եք, որ ձեր զգեստի ոճը հիանալիորեն արտացոլում է դա: Բայց եկե՛ք ավելի խորը մտածենք: Ինչպե՞ս եք ազդում մյուսների վրա ձեր հագուստով: Մարդիկ տեսնում են ձե՞զ, թե՞ միայն այն, ինչ հագել եք: Երբ ուրիշները նայում են ձեզ, ի՞նչ են տեսնում:

Թեև մենք երբեք չպետք է վստահենք մեր տեսքին, բայց կարող ենք գործածել հաղորդակցման այս ձևը իմաստությամբ և բարեպաշտությամբ, ինչպես վերաբերվում ենք մեր խոսքերին և գործերին:

*Տե՛ր, ցո՛ւյց տուր, թե ինչպես իմաստուն լինեմ հաղորդակցության բոլոր ձևերում, այդ թվում՝ ինչպես ներկայացնեմ ինձ: Հայտնի՛ր, թե իրականում ինչ եմ ասում իմ տեսքով, և թո՛ղ ամենը լինի Քո փառքի համար:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ ԵՄ ԼԻԱՐԺԵՔ՝ ՆԵՐՔՈՒՍՏ ԵՎ ԱՐՏԱՔՈՒՍՏ ՆՎԻՐՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ:

4

# ՀՐԱՇՔՈՎ ԵՔ ՁԵՎԱՎՈՐՎԵԼ

*«Քեզ որովայնում չստեղծած՝ ես քեզ գիտեի»:*

ԵՐԵՄԻԱ 1.5

Աստված անմիջական մասնակցություն ունի մեր ձևավորման մեջ: Նա ձևավորեց մեզ արգանդում շատ ավելի վաղ, քան մեր մայրը կարող էր զգալ մեր գոյությունը: Նախքան կկարողանայինք ճանաչել ինքներս մեզ… Նա գիտեր մեզ: Մինչ մենք ծածուկում աճում էինք, Նա ծրագրեց մեր կյանքի օրերը և մեր առջև բացեց մեզ համար նախասահմանված ուղին: Դուք ամենևին բջիջների մի կույտ չէիք. դուք մշտապես կենդանի էիք Նրա մեջ:

Յուրաքանչյուր ծնված երեխա հույսի պարգև է՝ վստահված մեր խնամքին: Եթե երբևէ ականատես եք եղել մարդու ծննդյան հրաշքին, գիտեք, որ յուրաքանչյուր մանկիկ զարմանալի ներուժ ունի:

Հիշում եմ, որ մինչ կիմանայի, որ հղի եմ երրորդ զավակով, զգացի, թե ինչպես է նրա կյանքն աշխուժանում իմ մեջ: Ջոնը ծառայում էր Ռոչեստրում (Նյու Յորք), երբ երկրպագության ծառայության ժամանակ անսովոր թուլություն զգացի: Թվաց, թե ուշագնաց էի լինում, ուստի նստեցի: Այդ պահին լսեցի Սուրբ Հոգու շշնջոցը. «Դու կյանք ես կրում… Քո ներսում որդի է մեծանում»: Նույն պահին զգացի Աստծո ճնշող ներկայությունը: Սա պարզապես օրինակ է նրա, թե որքան ջերմորեն է Աստված կապված արգանդում մեծացող մանուկների հետ:

Իսկ եթե ձեզ երբեք չեն ասել սա: Իսկ եթե ոչ ոք երբևէ չի ասել, որ ձեր Արարիչը հրաշքով ձևավորել և անձամբ ճանաչում է ձեզ: Իսկ եթե փոխարենը լսել եք այնպիսի արտահայտություններ, որոնք ակնարկում են, որ դուք պատահականություն եք կամ սխալմունք: Եթե մենք չգիտակցենք մեր արարչության հրաշքը, մեզ համար դժվար կլինի ճանաչել հրաշքը ուրիշների մեջ: Եթե մեզ դաստիարակել են այն զգացողությամբ, որ *մենք* բեռ ենք, հեշտ կլինի երեխային ընդունել որպես խոչընդոտ:

Չափազանց շատ կանայք ճնշված են զգում՝ փորձելով հավասարակշռել ամեն բան՝ կարիերա, մայրություն, լրացուցիչ գործունեություն, որովհետև կապիտալիզմի մշակույթը զրկել է մայրությանն իր արժեքից: Շատ առումներով կյանքը ժամանակի քննություն է: Դուք միշտ կարող եք առաջխաղացում ունենալ ձեր աշխատանքի մեջ և լինել ժամանակակից մայր: Իմ երեխաներն ինձ ավելի շատ ուրախություն են պատճառել և աճի ավելի լայն հնարավորություններ են տվել, քան գործնական ցանկացած ձեռքբերում: Եթե դուք ուզում եք լինել մայր, մի՛ ամաչեք: Դա ձեզնից կպահանջի ավելին, քան կարող էիք պատկերացնել, բայց միևնույն ժամանակ կվերադարձնի ավելին, քան երբևէ կարող էիք երազել:

*Երկնայի՛ն Հայր, Դու ես կյանք տվողը: Ես հավատում եմ, որ Դու ձևավորել ես ինձ հրաշքով և ժպիտով հաստատել ես իմ օրերը: Դու մայրերին վեհ գործ ես վստահել, որովհետև երեխաները պարգև են Քեզնից:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՄ ՆՐԱ ՀԱՄԱՐ ԵՎ ՆՐԱՆՈՎ:

5

# ՇՆՉԱՎՈՐ ԿԱՊԵՐ

*«Մի՛ կարծեք, թե Ես եկա երկրիս վրա խաղաղութ-յուն գցելու. չեկա խաղաղություն գցելու, այլ սուր»:*

ՄԱՏԹԵՈՍ 10.34

Հիսուսը ցանկանում է ազատել մեզ այն ամենից, ինչը հեռու է պահում Իրենից: Հոգևոր պատերազմը ենթադրում է հակառակվել ցանկացած կուռքի կամ խոչընդոտի, որը կանգնած է Աստծո հետ մեր փոխհարաբերության ճանապարհին:

Ես հավատում եմ, որ մենք կարող ենք հակառակվել գերությանը: Երբ Հիսուսը տեսնում էր շղթաներ, կոտրում էր դրանք. երբ Հիսուսը տեսնում էր դևեր, քշում էր դրանց, երբ Հիսուսը տեսնում էր տանջված և հիվանդ մարդկանց, բժշկում էր նրանց, երբ Հիսուսը տեսնում էր մեղքով բռնված մարդկանց, ներում էր նրանց, այնուհետև հնարավորություն տալիս գնալու և այլևս չմեղանչելու: Ես սիրում եմ Հիսուսին, որովհետև Նա այնքան իրական է, արդարացի և գործնական:

Ես հասկացա, որ անառողջ շնչավոր կապերի գերության մեջ էի, որոնք անհրաժեշտ էր խզել: Ի՞նչ է շնչավոր կապը: Պարզ ասած՝ դա այն է, երբ մեր շունչը միանում է ուրիշի շնչին: Սա կարող է լինել թե՛ լավ, թե՛ վատ: Մոր շունչը միանում է նորածնի շնչին: Բայց երբ նա մեծանում է և դառնում տղամարդ, նրա փոխհարաբերությունը մոր հետ պետք է փոխվի, որպեսզի նա կարողանա սիրտը նվիրել իր կնոջը: Ամուսնու շունչը պետք է միանա կնոջ շնչին, որպեսզի երկուսը դառնան մեկ մարմին: Սրանք լավ և առողջ կապեր են, որոնք միահյուսում են մեր սրտերը սիրով: Այսպիսի առողջ կապերը կարող են նաև

ձևավորվել ընկերական հարաբերություններում, ինչպիսին Դավթինն ու Հովնաթանինն էր: Ձեր կապը գուցե քրոջ կամ մտերիմ ընկերոջ հետ է: Դուք հասկանում եք իրար առանց խոսքի:

Բայց երբ ձևավորվում են անառողջ շնչավոր կապեր, միաբանության և ընկերակցության փոխարեն գործ ունենք վերահսկողության և վախի հետ: Դրանք կարող են ձևավորվել ապօրինի սեռական հարաբերությունների, անառողջ կախվածությունների, անբարենպաստ կամ բռնարար հարաբերությունների միջոցով: Անառողջ շնչավոր կապերը թողնում են մեզ կոտրված վիճակում: Հաճախ փորձում ենք քանդել դրանք, բայց ես հասկացել եմ, որ ավելի լավ է թույլ տալ, որ Աստված անցկացնի Իր սուրը և կտրի այն, ինչը կապում է մեզ: Միայն Աստված կարող է բժշկել և վերականգնել մեզ:

Մենք ունենք հավատարիմ և կարեկից Քահանայապետ, որը լավ է ճանաչում մեզ: Նա պատրաստ է գործածելու Իր սուրը, որպեսզի կտրի այն ամենը, ինչը հետ է պահում ձեզ Իրենից: Նա ցանկանում է, որ ամեն անառողջ շնչավոր կապ կտրվի, որպեսզի մնա միայն այն, ինչն առողջ է: Նա կուղարկի Իր Խոսքը՝ ձեր շունչը բժշկելու և վերականգնելու համար: Որոշ ժամանակ հատկացրե՛ք աղոթքին՝ թույլ տալով, որ Աստված իրականացնի Իր սրբագործումը ձեր կյանքում: Խնդրե՛ք, որ Սուրբ Հոգին հայտնի ամեն անառողջ շնչավոր կապ, այնուհետև հրավիրե՛ք, որ Նրա Խոսքի սուրը կտրի այն: Հավատարիմ է խոստացողը:

*Տե՛ր, խնդրում եմ, ցո՛ւյց տուր ցանկացած անառողջ շնչավոր կապ իմ կյանքում և քանդի՛ր դա Քո Սուրբ Հոգու զորությամբ: Բժշկի՛ր ինձ և վերականգնի՛ր իմ շունչը: Հայտնի՛ր, թե ինչպես հոգ տանեմ իմ կյանքի լավ կապերի համար և առողջ պահեմ դրանք:*

*Ես ուզում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՄ ՇՈՒՆՉԸ ՄԻԱՀՅՈՒՍԵԼ ԵՄ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ:

6

# ԲԺՇԿԱՐԱՐ ԶՂՋՈՒՄ

*«Որովհետև Դու ստեղծեցիր իմ երիկամունքները և ծածկեցիր ինձ իմ մոր որովայնում: Գոհանում եմ Քեզնից, որ ահավոր և զարմանալի կերպով ստեղծվեցի. զարմանալի են Քո գործերը, և իմ անձը լավ հասկացել է: Իմ ոսկորները չծածկվեցին Քեզնից, երբ ես ստեղծվեցի ծածուկ տեղը և երկրի խորություններում ճարտարությունով կազմվեցի: Քո աչքերը տեսան իմ կերպարանքը՝ դեռ անպատրաստ, և Քո գրքում գրված էին այն բոլոր օրերը, որ լինելու էին, երբ նրանցից մեկը դեռ չկար: Քանի՜ պատվական են ինձ համար Քո խորհուրդները, ո՛վ Աստված. քանի՜ մեծ է նրանց թիվը»:*

ՍԱՂՄՈՍ 139.13-17

Այստեղ Դավիթը մանրամասն նկարագրում է յուրաքանչյուր կյանք, որը զարդարում է արգանդը: Իսկ եթե դուք վերապրել եք արհեստական վիժեցման ցավը: Եթե այդպես է, բժշկության խոսքեր պետք է ասեմ ձեզ: Գուցե դուք եղել եք ահաբեկված դուստր, որը խաբվել է, կամ գուցե կորցրել եք ձեր թոռնիկին: Ինչ իրավիճակ էլ լինի, և ով էլ լինեք, հավատում եմ, որ Հայր Աստված ասում է. «Դու ներված ես, և քեզ նոր կյանք է սպասում»:

Հղիության ընդհատումների դեպքում հազվադեպ են բացահայտ սգում: Այս փոքրիկների կյանքի գեղեցկությունը ջնջվում է ճարպկորեն: Միայն հետագայում է մեղքի և ամոթի զգացումը պատում մայրիկին, հայրիկին և յուրաքանչյուրին, ով մասնակից է եղել հղիության արհեստական ընդհատմանը:

Մենք ապրում ենք մի մշակույթում, որը չափազանց եսասեր է: Այն երբեք չի կարող զորացնել ձեզ՝ աստվածապաշտությամբ ապրելու համար, որովհետև ղեկավարվում է «ես»-ի

պահանջներով: Մենք նաև փորձում ենք հաղթահարել այն եկեղեցիների խնդիրը, որոնք անողորմ են չամուսնացած հղիների նկատմամբ կամ դատում են նրանց: Վերջերս ես մասնակցում էի քննարկման, որտեղ հինգ քրիստոնյա կանանցից երկուսը հղիության արհեստական ընդհատման էին դիմել, որովհետև չէին կարողացել դիմակայել եկեղեցու դատին և ամոթանքին: Այդպիսի կանայք հասարակությունից լսում են բոլորովին այլ խոսույթ. «Դու երիտասարդ ես և գեղեցիկ… քո ամբողջ կյանքն առջևում է»: «Մի օր դու հրաշալի մայր կդառնաս, բայց այսօր չէ այդ ժամանակը»: «Դու կարող ես ունենալ երեխաներ, երբ պատրաստ լինես»: «Ամեն երեխա արժանի է ցանկալի լինելու, իսկ այս երեխան ցանկալի չէ»:

Ես լսել եմ երիտասարդ և տարեց կանանց, որոնք հետևել են նման խորհուրդների և հետագայում զղջացել դրա համար: Նրանք մտել են կլինիկա երկուսով և դուրս եկել կոտրված ու փշրված սրտով: Մի՞թե մենք, որ ճանաչում ենք Հիսուսի սերն ու ողորմությունը, չպետք է լինենք ավելի աջակցող, քան հղիության ընդհատման կլինիկաները: «Հանուն կյանքի» շարժումը դիրքորոշում չէ, որի համար պետք է քվեարկել. այն կենսակերպ է, որն աջակցում է որդեգրությանը և խիզախ ընտրություններին:

Որքան էլ ցավոտ լինի զղջումը, երբեք չենք կարող հետ գնալ և փոխել կատարվածը: Մեր հույսը առաջ նայելու մեջ է: Դուք պետք է ընդունեք Աստծո ճշմարտությունը և ներումը: Եթե կատարել եք հղիության ընդհատում, ներե՛ք ինքներդ ձեզ և թո՛ւյլ տվեք, որ բժշկությունը սկսվի:

*Երկնայի՛ն Հայր, ցո՛ւյց տուր, թե ինչպես լինեմ բժշկության, ոչ թե դատապարտանի գործիք: Ուզում եմ տեսնել կյանքի գեղեցկությունն ու արժեքը այնպես, ինչպես Դու ես տեսնում:*

*Ես ուխտում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԸՆՏՐՈՒՄ ԵՄ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՀՈՒՅՍԸ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԶՂՋՈՒՄԸ ԵՎ ԱՄՈԹԸ:

7

# ՊԱՏՎԵԼ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

*«Ամուսնությունն ամեն կողմից պատվական է, և անկողինը՝ սուրբ. բայց շնացողներին և պոռնիկներին Աստված կդատի»:*

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13.4

Այս խոսքը հասկանալու համար նախ պետք է հասկանանք «պատիվ» բառը: Մենք պատվում ենք ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին, երբ ավելի ենք կարևորում այն: Ես պատվում եմ ամուսնուս, երբ խոսում եմ հարգանքով և գործում եմ ոչ թե նրա դեմ, այլ նրա հետ: Իսկ երբ անարգում եք ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան, դուք անխոհեմ եք, քանի որ չեք գնահատում նրան կամ նշանակություն չեք տալիս դրան: Ամուսինները կարող են անարգել իրենց կանանց, կանայք էլ՝ ամուսիններին՝ չհասկանալով պատվելու այս սկզբունքը: Եբրայերենում այս խոսքը վերաբերում է «ամուսնական անկողինը» պատվելուն:

Մենք պատվում ենք մեր ամուսնությունը մինչև հարսանիքը՝ մաքուր մնալով: Արտամուսնական սեռական կապն անարգում է ամուսնության ուխտը, դրանում ներգրավված անհատներին և Աստծուն: Իսկ ամուսնության ուխտի մեջ սեռական կապը պատվում է Աստծուն, անհատներին և նրանց ամուսնությունը: Ամուսնությունը պատվելու մեկ այլ միջոց է երբեք թույլ չտալը, որ ուրիշները կամ այլ բաներ թափանցեն սեռական մտերմության վայր: Մենք չենք ներգրավվում նրանում, ինչը նսեմացնում է եզակի սեռական միության գեղեցկությունը: Այդպիսի միջոցներից են պոռնկագրությունը, ձեռնաշարժությունը, այլասերվածությունը, մարմնավաճառությունը:

Քանի որ ես չէի ապրել այս ճշմարտություններով նախքան ամուսնանալը, առերեսվեցի շատ հետևանքների, երբ ամուսնացա: Ես պետք է տրվեի ամուսնուս, բայց հասկացա, որ կապված էի իմ անցյալի ընտրություններով:

Մենք ստեղծված ենք սեռական միության մեջ լինելու մեկ անձի հետ, որովհետև սեռական մտերմությունը երկուսի համար է, որոնք դառնում են մեկ՝ ամուսնության ուխտով: Դա պետք է լինի եզակի, որպեսզի լինի մտերիմ: Եթե մենք որոշում ենք սեռական հարաբերություն ունենալ շատերի հետ, դա նսեմացնում է այն, ինչը յուրահատուկ է մեկի համար:

Սա պատճառներից մեկն է, որ շնությունը տարածված է իր բազում ձևերով: Չհասկանալով ուխտի իմաստը՝ մարդիկ ասում են. «Ամուսնությունն ընդամենը թղթի կտոր է»: Ամուսնությունը պարզապես երկու մարդու միավորվելը չէ. Աստված երկուսին մեկ է դարձնում: Եթե չենք գիտակցում, որ ամուսնության մեջ ներգրավված են երեքը, ոչ թե մեկը, այն պարզապես դառնում է… թուղթ:

Աստծո Խոսքը պատվելը ամրություն, համաձայնություն և մտերմություն է բերում ամուսնության մեջ: Աստված վերականգնում է այն, ինչ վնասվել է, և բժշկում է այն, ինչ անարգվել է:

*Երկնայի՛ն Հայր, սովորեցրո՛ւ պատվել ամուսնությունը: Սո՛ւրբ Հոգի, բացահայտի՛ր պղծության և անարգանքի ցանկացած ոլորտ, երբ դա վերաբերում է իմ ամուսնությանը կամ ամուսնության իմ պատկերացմանը (այսպես կարելի է աղոթել, անգամ եթե ամուսնացած չեք): Ուզում եմ իմ կյանքում պատվել Քո հաստատած սեռական մտերմության ուխտը:*

*Ես օրհնյալ եմ,*

ԵՐԲ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՄ ՍԵՌԱԿԱՆ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐԺՈՒՄ ԱՅՆ, ԻՆՉԸ ԽԱԽՏՈՒՄ Է ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՈՒԽՏԸ:

8

# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

*«Տե՛ր, իմ վե՛մ և իմ բե՛րդ և իմ ազատի՛չ»:*

ՍԱՂՄՈՍ 18.2

Ես ցնցված էի: Մեր հովիվը խնդրեց ինձ խոսել մի խումբ աղջիկների հետ սեռական մաքրության մասին, իսկ ես գաղափար չունեի, թե ինչ էի ասելու: Ոչ միայն չգիտեի, այլև գրեթե սարսափահար էի: Ի՞նչ էր կատարվում ինձ հետ: Տարիներ շարունակ ճանապարհորդել էի աշխարհով մեկ, խոսել տարբեր տարիքի կանանց մեծ խմբերի առջև: Ինչո՞ւ էի վախենում մեր տեղական ավագ դպրոցի երիտասարդ աղջիկների խմբի առջև խոսելուց: Ես խոր շունչ քաշեցի: Պետք է հավաքեի ինձ: Վերջին հաշվով, նախկին երիտասարդական հովվի կին էի: Այդ երկու տարին քիչ թե շատ հաջողություն էի ունեցել: Հետո հասկացա, որ ինձ անհանգստացնում էր ոչ թե տարիքային խումբը, այլ թեման: Ես գիտեի, որ նրանք կհարցնեին, թե ինչ կարող են և ինչ չեն կարող անել տղաների հետ իրենց փոխհարաբերություններում:

Ի՞նչ պետք է ասեի նրանց «սահմանների» մասին: Ես նույնիսկ դուստր չունեի, և գրեթե ժամանակ չկար պատրաստվելու:

Ընկա հատակին և աղոթեցի. *«Հա՛յր, ես իսկապես պատասխանի կարիք ունեմ այս աղջիկների համար: Ուզում եմ հաղորդել ոչ թե իմ կամ մեկ ուրիշի կարծիքը, այլ Քո իմաստությունը: Եվ ես շուտ պետք է իմանամ սա»:*

Սպասեցի: Ոչինչ տեղի չունեցավ: Գնացի լոգարան: Հաջորդ օրը կարևոր էր: Միտքս թափառում էր, երբ լսեցի Սուրբ Հոգու ձայնը և կենտրոնացրի ուշադրությունս. «Դու փնտրում ես կանոններ՝ նրանց վարքագիծը սահմանափակելու համար: Կանոնները չեն պահի նրանց: Նրանց անհրաժեշտ զորությունը

պետք է բխի փոխհարաբերությունից: Մի՛ ասա նրանց, թե ինչ չեն կարող անել. ասա՛ նրանց, թե ինչ կարող են անել: Ասա՛, որ ընկերոջ հետ փոխհարաբերություններում կարող են թույլ տալ այն, ինչ առանց անհարմար զգալու կանեն իրենց հոր ներկայությամբ»:

Ահա իմ պատասխանը: Հայրերը պետք է լինեն դուստրերի առաքինության պաշտպանները: Գուցե ձեր դեպքում այդպես չէ կամ դուք չունեք երկրային հայր, որը ձեզ կպաշտպանի: Բարի լուրն այն է, որ դուք ունեք երկնային Հայր: Նա երբեք չէր ցանկանա, որ ձեզ բռնության ենթարկեն: Գուցե դուք չափազանց հեռու եք գնացել: Անկախ նրանից, թե ինչ է եղել անցյալում՝ Նա հսկում է ձեր ապագան: Սա չի վերաբերում միայն դեռահասներին, այլ յուրաքանչյուր դստեր համար է, որը դժվարանում է լինել մաքուր անմաքուր մշակույթում:

Կանոնները չեն փոխում մեր սիրտը: Մենք արձագանքում ենք ավելի բարձր կարգադրության: Մենք արձագանքում ենք սիրուն: Սա վերաբերում է մեր երկնային Հոր հետ փոխհարաբերությանը: Քարին փորագրված սահմանափակումների, էթիկայի կանոնների փոխարեն մենք ունենք մեր սրտում գրված կենդանի ճշմարտություններ: Երբ մեր հավատքը վերածում ենք ցանկի, որտեղ նշված է, թե ինչ է կարելի, և ինչ չի կարելի, կորցնում ենք փոխհարաբերությունը Նրա հետ, Ով ցանկանում է լավագույնը մեզ համար:

*Երկնայի՛ն Հայր, թո՛ղ իմ մաքրությունը բխի Քեզ հետ փոխհարաբերությունից: Անկախ իմ անցյալից՝ ես կոչում եմ Քեզ իմ պաշտպան և հրավիրում իմ կյանքի ամենամտերմիկ տարածքներ:*

*Ես ուզում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՁՈՐԱՆՈՒՄ ԵՄ ՈՉ ԹԵ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՎ, ԱՅԼ ՀՈՐ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՎ:

*9*

# ՀԱՐՍՆԱՑՈՒ

*«…փեսան հարսի վրա ուրախանալու պես պետք է քեզ վրա ուրախանա քո Աստված»:*

ԵՍԱՅԻ 62.5

Ինձ դուր է գալիս, որ Աստված համեմատում է մեզ հարսնացուի հետ: Վերջերս իմ որդիներից երկուսն ամուսնացան: Առջևի շարքում նստած՝ նկատեցի, թե ինչպես նրանք լաց եղան՝ տեսնելով մոտեցող հարսնացուներին, ինչը, անշուշտ, ստիպեց ինձ նույնպես լաց լինել: Հարսնացուները փայլում էին սպիտակ հանդերձներով և հրաշալիորեն զարդարված էին: Կուզեի մտածել, որ հենց այդպիսին է Հիսուսը տեսնում մեզ: Հայտնություն 19.7-ում կարդում ենք. «…և նրա կինը պատրաստեց իրեն»:

Ինչպե՞ս ենք մենք պատրաստվում: Պատասխանը գտնելու համար մի փոքր ավելի խորը գնանք: Ինչպե՞ս է հարսնացուն պատրաստվում փեսայի համար: Սա ավելին է, քան գեղեցիկ զգեստը, մազերը և շպարը. սա այն նախապատրաստությունն է, որ լինում է սրտում: Ստորև ներկայացնում եմ իմ մտքերը:

Հարսնացուն.

- ամեն կերպ փափագում է հաճեցնել իր փեսային,
- ցանկանում է լինել մաքուր և ջերմեռանդ այն ամենում, ինչ անում է,
- փափագում է, որ առանց խոսքի իրեն հասկանան,
- պետք է զգա ապահով, երբ երբ անկեղծանում է,
- սիրում է ունենալ առանց վախի արտահայտվելու ազատություն,
- հաճույք է ստանում անակնկալներից և անսպասելի նվերներից,
- սիրում է գաղտնիքներ փոխանակել փեսացուի հետ,

- սիրում է, երբ սիրեկանը սիրահետում է իրեն, և երբ ինքն է սիրահետում նրան,
- սիրում է ճաշակել պատկանելության ուրախությունը,
- ցանկանում է, որ խնամեն, պաշտպանեն, ուղղորդեն և նույնիսկ մեղմորեն շտկեն իրեն,
- համակված է փեսայի հանդեպ սիրով:

Ես հավատում եմ, որ այսպիսի ցանկություններ կան Աստծո յուրաքանչյուր դստեր սրտում: Մենք կարող ենք թույլ տալ, որ այս ցանկությունները բորբոքեն մեր սրտերը, որովհետև Նրա ամենախոր ցանկությունն է սիրել մեզ այնպիսին, ինչպիսին ստեղծել է: Հիսուսը՝ մեր փեսան, թախանձում է. «Թո՛ւյլ տուր, որ սիրեմ քեզ»:

Ուրիշ ոչ ոք չի կարող սիրել մեզ այսպես: Այս ցանկություններն այնքան խորն են, որ ոչ մի տղամարդ չի կարող լիովին բավարարել դրանք: Երկրային սերը կարող է խույս տալ մեզնից և հիասթափեցնել, որովհետև մենք ուրիշի ենք փափագում: Ձեր երկնային Իշխանը երբեք չի հիասթափեցնի և չի վիրավորի ձեզ: Նա է ձեր մեջ դրել ցանկություններ և միշտ եղել այն, ինչը ձեր սրտի փափագն է:

Նա ապահովել է ձեզ այն ամենով, ինչի կարիքն ունեք: Ինչո՞ւ չծածկվել Նրա արդարությամբ: Զարդարվե՛ք Նրա երկրպագությամբ: Ուրախացե՛ք Նրա գրկում, և թո՛ղ ձեր սիրտը պարի Նրա առջև:

*Սիրելի՛ երկնային Հայր, սիրի՛ր ինձ այնպիսին, ինչպիսին ստեղծել ես: Ես կպատրաստեմ իմ անձը Քեզ համար ինչպես հարսնացու: Դրոշմի՛ր ինձ Քո սրտում ինչպես կնիք և թո՛ւյլ տուր զգամ. որ Քո ժպիտն ուղեկցում է ինձ, մինչ մուտք եմ գործում այն ամենի մեջ, ինչ պատրաստել ես ինձ համար:*

*Ես սիրված եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՄ ՓԵՍԱՆ
ՈՒՐԱԽԱՆՈՒՄ Է ԻՆՁՆՈՎ:

# Ուժեղ՝

# Ճշմարտության մեջ

I

# ԻՄԱՍՏՈՒՆ՝ ԽՈՍՔԵՐՈՎ

*«Մեղրի խորիսխ է վայելուչ խոսքը, քաղցր է հոգուն և բժշկություն՝ ոսկորներին»:*

ԱՌԱԿԱՑ 16.24

Հովհաննես առաքյալն իր ընկերոջը՝ Գայիոսին, գրեց. «Սիրելի՛, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է» (Գ Հովհաննես 2):

Հովհաննեսը, ըստ երևույթին, գիտեր, որ մեր առողջության վրա ազդում է մեր հոգու բարեկեցությունը: Այս երկուսը ոչ մի կերպ հնարավոր չէ բաժանել: Դրանք սերտորեն փոխկապակցված են: Թեև խոսքերը չեն կարող ֆիզիկական վնաս պատճառել, Աստվածաշունչը համեմատում է դրանք մահաբեր զենքի և բալասանի հետ: «Շատախոս է լինում, որ սրի պես խոցոտում է, բայց իմաստունների լեզուն բժշկություն է» (Առակաց 12.18):

Վիրավորական և կոպիտ խոսքերն ազդում են մեզ վրա դանակի խոցած վերքերի պես: Մեկը հարվածում է մեր ուսին, մյուսը՝ փորին, մեկ ուրիշը նշան է բռնում մեր թևին, այնուհետև փախուստի է դիմում: Հարձակումը հանկարծակիի է բերում մեզ, և մեր հագուստը ներկվում է արյունով: Թուլություն զգալով՝ մի պահ փակում ենք մեր աչքերը՝ զարմանալով, թե ինչպես կարող են խոսքերն այդքան մեծ վնաս հասցնել:

Այնուհետև լսում ենք մեկ այլ ձայն: Այն մեղմ է և հեզ: Մենք զգում ենք նրա ջերմությունը, երբ լույսի ոսկի մշուշը ցրում

է խավարը։ Կյանքի խոսքերը և բժշկությունը ջնջում են այն խոսքերը, որոնք վիրավորել են մեզ։ *Ես սիրում եմ քեզ։ Ես քեզ հետ եմ։ Դու Իմն ես։* Դրանց ջերմությունը հանգստացնում է այրող ցավը։ Յուրաքանչյուր հաճելի խոսք վերականգնող ազդեցություն ունի։

Ահա թե ինչ զորություն ունեն խոսքերը մեր հոգու վրա։ Խոսքերը կարող են վիրավորել, դրանք կարող են բուժել։ Սա իմանալով՝ գործածենք մեր խոսքերը՝ ուրիշներին ազատելու և բժշկելու, ոչ թե խոցելու և վիրավորելու համար։ Անփույթ չվերաբերվենք մեր խոսքերին, փոխարենը զգույշ լինենք և իմաստությամբ օգտագործենք դրանք։ Վերահսկելով մեր խոսքերը՝ մենք հարգում ենք դրանց զորությունը։

Քաջալերանքի և կարեկցանքի պարզ խոսքերը կարող են մեծ նշանակություն ունենալ ինչ-որ մեկի համար։ Մենք առաջարկում ենք կենսատու դեղամիջոց, երբ խոսում ենք Աստծո Խոսքից։ Միայն Նա է բժշկող, ուստի զարմանալի չէ, որ Նրա խոսքերը բժշկություն են բերում։ Ուրիշներին քաջալերելն այնքան քիչ բան է պահանջում, բայց նրանց համար օգտակար է ավելի շատ, քան կարող ենք երբևէ պատկերացնել։

Ընտրությունը ձերն է։ Ի՞նչ կխոսեք այսօր՝ չարի՞ք, թե՞ առողջություն։

*Աստվա՛ծ, ցո՛ւյց տուր ինձ խոսքերի զորությունը և օգնի՛ր, որ գործածեմ իմ խոսքերը՝ բժշկություն և քաջալերանք բերելու նրանց, ում դրել ես իմ ճանապարհին։*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԸՆՏՐՈՒՄ ԵՄ ԳՈՐԾԱԾԵԼ ԻՄ ԽՈՍՔԵՐԸ
ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԿՅԱՆՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

Զ

# ՉՄԱՍՆԱՏՎԱԾ ՍԻՐՏ

*«Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ Քո ճանապարհը, որ գնամ Քո ճշմարտության մեջ. միացրո՛ւ իմ սիրտը, որ Քո անունից վախենա»:*

ՍԱՂՄՈՍ 86.11

Միևնույն հիմա հիշում եմ հռոմեացիների մասին մեր էքսկուրսավարի պատմությունը, երբ Ջոնը և ես տարիներ առաջ այցելեցինք Իսրայել: Նա պնդում էր, որ հռոմեացիներն ինչ-որ չափով բարյացակամ նվաճողներ էին: Նրանք նույնիսկ թույլ տվեցին, որ հրեաները պահեն իրենց կրոնական համոզմունքները այն պայմանով, որ ընդունեն հռոմեական մշակույթը: Հռոմեացիները ցանկանում էին, որ հրեաները նման լինեին իրենց, ապրեին և գործեին իրենց նման: Այդ ժամանակվանից ներխուժման մարտավարությունը շատ չի փոխվել:

Ներկա ժամանակի խորհուրդը մեզ կոչ է անում. «Դուք կարող եք ունենալ ձեր կրոնը, եթե աջակցեք նաև մեր դավանանքի համակարգին: Մի՛ խաբվեք. չկա միայն մեկ ճշմարտություն, դրանք շատ են: Դուք կարող եք հավատալ այն ամենին, ինչ ցանկանում եք, եթե վարվեք մեզ պես»:

Անշուշտ, սա մեզ համար չէ: Աստված երբեք չի կանչել մեզ մեկանալու մեր մշակույթի հետ: Մենք մեկ ենք Նրա՛ հետ: Սա նշանակում է, որ մենք հավատում ենք Հիսուսին, երբ Նա ասում է. «… Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհաննես 14.6):

Մենք հետևում ենք մեր Տիրոջը, ոչ թե ինչ-որ ճշմարտության, որը համարվում է ժամանակակից ուղղություն: Նրա Ճշմարտությունը ներշնչում է մեզ հետևում թողնել մեր ճանապարհները և ձեռք բերել Աստծո հեռանկարը: Աստծո մտածելակերպը

ամբողջովին տարբերվում է մեր ընկալումներից: Փոխզիջման դատարկ խոսքերը խրախուսում են մեզ մնալ նույնը՝ արդարացնելով մեր վարքագիծը: Այս աշխարհը մեր տունը չէ. այն պարզապես անցուղի է մեզ համար, ինչը նշանակում է, որ մենք այլևս չենք նմանվում մեր մշակույթին, այլ կերպարանափոխվում ենք մեր Սուրբ Աստծո հետ փոխհարաբերության միջոցով:

Մենք խորհուրդ ենք գտնում ոչ թե այս ուժասպառ աշխարհի հնարամտության և իմաստության, այլ Աստծո Խոսքի մեջ: Որպես Քրիստոսի հետևորդներ՝ մենք կանչված ենք քաջալերելու միմյանց: Սա նշանակում է, որ մենք զորացնում ենք միմյանց՝ խոսելով Աստծո խոստումները: Աշխարհն ասում է մեզ. «Արա՛ այն, ինչ ցանկանում ես: Որոշողը դու ես»: Բայց մենք երկնքի դեսպաններ ենք, որ քայլում ենք այս երկրի վրա մեծ խառնաշփոթի ժամանակաշրջանում: Եվ ինքներս մեզ համար ապրելու փոխարեն մենք ապրում ենք Նրա համար:

Տիրոջ Խոսքը չպետք է արժեզրկել այնքան, որ այն նեղաշնակորեն միաձուլվի այս դարաշրջանի իմաստությանը: Աստծո Խոսքը չունի իրեն հավասարը: Մենք մեծ ճիգեր ենք գործադրում, երբ քայլում ենք երկու աշխարհներում, որովհետև մեր սերը մասնատվում է: Այսօրվա խոսքում Դավիթը շեշտում է, որ մենք չմասնատված սրտի կարիք ունենք: Ես հավատում եմ, որ դուք կարդում եք սա, որովհետև ցանկանում եք ծառայել Աստծուն ամբողջ սրտով: Նա չի ուզում, որ մեծ ճիգեր գործադրենք մեր կապվածությունների համար: Նա առաջարկում է, որ նախ մեր սիրտը հանձնենք Իր ապահով և հոգատար ձեռքերի մեջ, այնուհետև պատերազմենք մեր հոգու թշնամիների դեմ:

*Տե՛ր, Քո թագավորությունն է իմ մշակույթը: Տո՛ւր ինձ չմասնատված սիրտ, որ վախենամ Քո անունից:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԻՄ ՍԻՐՏԸ ՄԱՍՆԱՏՎԱԾ ՉԷ:

3

# ՊԱՐԻՍՊՆԵՐ

*«Այն օրը այս երգն է երգվելու Հուդայի երկրում. «Մենք մի զորավոր քաղաք ունենք, Նա փրկությունը դնում է իբրև պարիսպ ու պատնեշ»»:*

ԵՍԱՅԻ 26.1

Հնում քաղաքների շուրջը կառուցվել են պարիսպներ՝ որպես պաշտպանության միջոց: Դրանք եղել են արգելքներ, որոնք հեռու են պահել վայրի գազաններին և թշնամիներին: Մեզ համար սա խորթ է, բայց հնում քաղաքները շրջապատված են եղել անմատչելի պարիսպներով որպես զգուշացում նրանց, ովքեր այն կողմում էին. «Ձեզ չի թույլատրվի մտնել, մինչև չիմանանք, որ անվտանգ եք»: Դրանք նաև պատնեշ էին ծառայում նրանց համար, ովքեր ապրում էին պատերից ներս: Քաղաքների բնակիչները սովոր էին վստահել պարիսպներին և դռնապաններին՝ զավթիչներից պաշտպանվելու համար: Այս պարիսպները պաշտպանում էին քաղաքացիներին հիվանդության կործանարար ազդեցություններից: Դրանք ծառայում էին որպես արգելք քամու, անձրևի և փոթորիկների դեմ:

Այս ամենի լույսի ներքո պատկերացրե՛ք մի քաղաք առանց պարիսպների, որն անարգել զավթում և թալանում են: Թշնամիները գալիս և գնում են: Ո՞վ կցանկանար ապրել այնտեղ, որտեղ չկա պաշտպանություն… որտեղ չկա ապաստան:

Երբ չենք պաշտպանում մեր հոգին, բնակվում ենք նման վայրում: Մեր սիրտն այլևս ապահովության և խաղաղության ապաստան չէ, այլ դառնում է ավերված, թալանված քաղաք: Մենք տրվում ենք մեր տրամադրությանը, մղումներին և ցանկացած ստի կամ կործանարար խոսքի, որ հնչում է մեր

ականջին: Հուսախաբությունը դառնում է մեր ամենօրյա հացը, և տրտմությունն ու ափսոսանքը՝ մեր բաժինը:

Այսպիսով՝ ինչպե՞ս ենք վերակառուցում պաշտպանական պարիսպները: Կարող ենք սկսել՝ իմաստավորելով մեր խոսքերը, գիտակցաբար գործածելով այնպիսի բառեր, որոնք բժշկում և կառուցում են: Սովորե՛ք Աստծո Խոսքը և թե ինչպես կարող եք կիրառել այն ձեր ամուսնության մեջ, երեխաների կյանքում, աշխատանքի և ընկերության մեջ: Օրհնե՛ք ձեր կյանքի այս բնագավառները և հրաժարվե՛ք դրանք անիծելուց: Թո՛ւյլ տվեք, որ Աստծո Խոսքը կերպարանափոխի ձեր անձը, և դուք կքաղեք օգուտները:

Չափազանց կարևոր է թույլ տալ Աստծուն ազատել ցանկացած շփոթությունից կամ ծուղակից, որ առաջացել է պոռթկումների կամ վիրավորական խոսքերի հետևանքով: Դրանք կարող են լինել ձեր կամ ուրիշների ասած կործանարար խոսքերը, որոնք հրթիռների պես արձակվել են ձեր պատերի ուղղությամբ: Ուշադի՛ր եղեք ինքնաոչնչացնող խոսքերի նկատմամբ, որ գործածում եք ձեր դեմ, օրինակ. «Ոչ ոք իրականում չի մտածում իմ մասին: Ես կմնամ մենակ և դավաճանված» կամ «Ես տգեղ եմ և գեր: Ինչո՞ւ պիտի ինչ-որ մեկը հավանի ինձ»: Այս խոսքերը խոցում են մեզ և ստիպում, որ մեր պարիսպները քանդվեն: Փոխարենը քննե՛ք Խոսքը որպես շինանյութ. օգտագործե՛ք Աստծո խոստումները՝ բացահայտելու և հռչակելու ճշմարտությունը ձեր մասին, և թո՛ւյլ տվեք, որ դրանք դառնան պաշտպանական ամուր պարիսպ ձեր սրտի շուրջը:

*Սիրելի՛ երկնային Հայր, ցո՛ւյց տուր ճշմարտությունը իմ և իմ կյանքի մասին Քո Խոսքի մեջ: Օգնի՛ր ինձ՝ կառուցելու ճշմարտության ամուր պարիսպներ սրտիս շուրջը, որպեսզի կարողանամ բարգավաճել դրանց պաշտպանության ներքո:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՄ ՍԻՐՏՍ ԱՍՏԾՈ ԽՈՍՔՈՎ:

4

# ԼԻՆԵԼ ՇՐՋԱՀԱՅԱՑ

*«Որովհետև ծածուկ բան չկա, որ չհայտնվի, և ոչ թաքուն բան, որ չիմացվի և հայտնվի»:*

ՂՈՒԿԱՍ 8.17

Երբ տեղափոխվեցի Կոլորադո, գնացի խանութ՝ մեր հյուրասենյակի համար բազմոց գնելու: Հիշում եմ՝ գտա մեկը, որն իսկապես հավանեցի: Մտածեցի. «Ահա՛ հրաշալի բազմոցը»: Այն հիանալի տեսք ուներ սրահի պատի մոտ, շուրջը՝ գեղեցիկ աքսեսուարներ և նկարներ: Բայց հետո հիշեցի, որ մեր տանը բազմոցի հետևում պատ չի լինելու: Բազմոցը պետք է հրաշալի տեսք ունենար առանձին՝ առանց պատի: Երբ բազմոցը պատից հեռու հրեցի, հասկացա, որ դա այն չէր, ինչ ուզում էի: Եթե նայեի բազմոցի միայն առջևի կողմը, այն տուն կտանեի: Ես կհավանեի այն… քանի դեռ չէի տեսել հետևի կողմը:

Շատերս տեսնում ենք միայն մեղքի արտաքին կողմը: Մեզ դուր է գալիս նրա տեսքը, առաջացրած զգացողությունը, և ինքներս մեզ ասում ենք. «Ես կվերցնեմ այն»: Միայն ավելի ուշ ստուգում ենք հետևի կողմը և հայտնվում դժվար կացության մեջ:

Բայց երբ ասում կամ անում ենք մեղսալի բաներ ծածուկում, ոչ թե Աստված, այլ ինքներս ենք մեզ գցում շփոթության մեջ: Դա նման է գաղտնի սերմեր ցանելուն, այնուհետև Աստծո վրա բարկանալուն, երբ տեսնում ենք հողից դուրս եկած սածիլը: Հավանաբար մենք մտածում ենք, որ այսօրվա խոսքը չի վերաբերում մեր հանգամանքներին, քանի որ ունակ ենք հմտորեն քողարկելու իրերը: Բայց եթե Սուրբ գիրքն ասում է, որ ոչինչ ծածուկ չի մնա, նշանակում է՝ բացառություն չկա:

Հաշվի առնելով սա՝ կարևոր է, որ ապրենք մեր վարքագծի առավել խոր գիտակցմամբ: Եփեսացիների գրքում խոսվում է զգուշությամբ ապրելու մասին. «Բայց ամեն բան՝ լույսից հանդիմանված, հայտնի է լինում, քանզի ամեն բան, որ հայտնի է լինում, լույս է: Արդ նայե՛ք, թե ինչպես զգուշությամբ վարվեք. ոչ թե ինչպես անխելքներ, այլ ինչպես իմաստուններ…» (Եփեսացիների 5.13, 15, 16):

Զգուշությամբ ապրել նշանակում է ապրել այն գիտակցմամբ, որ մեր կյանքում ամեն բան փոխկապված է, և մեր անցյալից ինչ-որ իրադարձություն իր ազդեցությունն է թողնում մեր ապագայի վրա: *Զգուշություն* բառի փոխարեն անգլերենում գործածված է *circumspectly* բառը, որը կազմված է երկու արմատից՝ *circum,* որ նշանակում է «շրջել» կամ «շրջապատել», և *spec*, որ նշանակում է «տեսնել կամ նայել ինչ-որ բանի», ինչպես շինարարն է մանրամասն նկարագրում տունը, որպեսզի հավանական գնորդները կարողանան գնահատել իր վարպետությունը նախքան այն գնելը: Նմանապես մեզ հանձնարարված է ապրել մեր կյանքը՝ գնահատելով մեր որոշումներն ու արարքները ամեն կողմից և ամեն տեսանկյունից: Մենք պետք է քննենք մեր որոշումները, դիտարկենք բոլոր միջոցները և համոզվենք, որ այն, ինչ ընտրել ենք, մեզ դուր է գալիս բոլոր տեսակյուններից: Այնուհետև կարող ենք գործել իմաստությամբ և կայացնել ճիշտ որոշումներ, որոնք մեզ ավելի կուժեղացնեն:

*Տե՛ր, հիշեցրո՛ւ ինձ, որ Քեզ ամեն բան հայտնի է: Չկա որևէ բան, որ կարող եմ թաքցնել Քեզնից: Թո՛ղ լինեմ զգույշ իմ բոլոր գործերում՝ վարվելով այնպես, որ Քեզ պատիվ բերեմ:*

*Ես ուժեղ եմ,*

ՔԱՆԻ ՈՐ ՉԵՄ ԱՊՐՈՒՄ ՄԻԱՅՆ
ԱՅՍՕՐՎԱ ՀԱՄԱՐ:

5

# ԹՈՂՆԵԼ ԱՓՍՈՍԱՆՔԻ ԵՐԿԻՐԸ

*«Եվ քաղաքի դռանը չորս բորոտ մարդ կար, և նրանք իրար ասացին. «Մենք ի՞նչ ենք այստեղ նստում, մինչև որ մեռնենք»:*

Դ ԹԱԳԱՎՈՐԱՑ 7.3

Գալիս է ժամանակ, երբ յուրաքանչյուրս պետք է որոշենք, որ բավական է: Ափսոսանքը խժռում է մարդու սիրտը, ինչպես որ բորոտությունը խժռում է մարդու մարմինը: Ուժեղ աղջիկները գիտեն, թե երբ է վեր կենալու և քայլելու ժամանակը: Որպեսզի խուսափեք ափսոսանքով ապրելուց, ապրե՛ք հստակ նպատակով՝ նայելով ապագային: Մենք պետք է քայլենք՝ չմոռանալով մեր նախասահմանությունը: Քայլելը դառնում է դեգերում, երբ չունեք նպատակակետ: Իրականում չկա ճանապարհորդելու ուրիշ միջոց, որպեսզի հասնեք այնտեղ, ուր ցանկանում եք: Հավանաբար հիմա հայտնվել եք մի վայրում, ուր չէիք ցանկանա գնալ: Գուցե դուք ապրում եք ափսոսանքի մռայլ երկրում: Ես ձեզ գաղտնիք ունեմ ասելու. ափսոսանքը կպահի ձեզ այդտեղ:

Ժամանակն է, որ փոխանակեք «եթե միայն» արտահայտությունը «հենց հիմա» արտահայտությամբ: Ափսոսանքը կշարունակի արձագանքել մեր կյանքում այնքան ժամանակ, քանի դեռ դրա հարցերը չենք լուծել:

Հավատում եմ, որ յուրաքանչյուր սերունդ ունի հնարավորություն և լիազորություն՝ շտկելու իր սխալները՝ խոսելով

ճշմարտությունը և զգուշացնելով հաջորդ սերնդին: Սա մի բան է, որ երբեք չենք կարող անել, եթե մնանք ափսոսանքի մեջ: Երբ թողնում ենք մեր ափսոսանքները և շտկում մեր սխալները, փոխանցում ենք գիտելիքի և փորձի արժեքավոր ժառանգություն: Սա նշանակում է, որ հաջորդ սերունդը կունենա հնարավորություն՝ ավելի բարձր կանգնելու, ավելի հստակ տեսնելու և խուսափելու այն որոգայթներից, որոնց մեջ մենք ենք ընկել: Հիմա ժամանակը չէ անտարբեր նստելու և ափսոսալու անցյալի անհաջողությունների համար կամ աննպատակ թափառելու: Ժամանակն է առաջ շարժվելու:

*Աստվա՛ծ, ես հրաժարվում եմ ափսոսանքի երկրում մնալուց: Ես ոտքի եմ կանգնելու և առաջ եմ շարժվելու, որպեսզի ուրիշներին ուժ հաղորդեմ իմ գործողություններով: Ես փոխանակում եմ «եթե միայն» արտահայտությունը «հենց հիմա» արտահայտությամբ և անցյալի ափսոսանքի փոխարեն ընդունում եմ Քո տեսիլքը իմ ապագայի համար:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՄՏԱԴՐՎԱԾ ԵՄ
ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԻՄ ԱՓՍՈՍԱՆՔԸ:

6

# ՍԻՐՎԱԾ ԿԻՆ

*««Որովհետև քո այրը քեզ Ստեղծողն է, Զորաց Եհովա է Նրա անունը, և քո Փրկիչը Իսրայելի Սուրբն է, Նա կոչվում է բոլոր երկրի Աստված: Որովհետև Տերը քեզ մի երեսից ծգված և հոգով վշտացած կնոջ պես կանչեց...»,- ասում է քո Աստվածը»:*

ԵՍԱՅԻ 54.5,6

Այսօրվա հատվածը հատուկ խոստում է կանանց: Աստված կարող էր ասել՝ «Քեզ Ստեղծողը քո հայրն է», բայց Նա այդպես չասաց: Նա ներկայացավ որպես սիրող ամուսին, որը վերականգնում է անհնազանդ կնոջը: Նա նկարագրում է Իր խոստման հուսալիությունը. «Որովհետև սարերը կքաշվեն, և բլուրները կսասանվեն, բայց Իմ ողորմությունը քեզնից չի քաշվի, և Իմ խաղաղության ուխտը չի սասանվի...» (10-րդ խոսք): Որքան էլ ուժգին լինեն ձեր կյանքի ցնցումները, Աստծո սերը ձեր հանդեպ երբեք չի սասանվի: Թո՛ղ այս հարցը մեկընդմիշտ լուծվի ձեր մտքում:

Սուրբգրային այս խոսքը անհերքելի է: Այն ներառում է կանանց, որոնք ամուսնացած չեն, ամուսնալուծված են, ամուլ են կամ այրի: Այն ընդգրկում է կանանց, որոնք կոտրված, ոչ լիարժեք, անհամապատասխան կամ չափազանց անզոր են զգում: Այս խոստումը վերաբերում է բոլոր տարիքային խմբերին: Այն Աստծո ձայնն է, որ խոսում է Իր սիրելի և թանկագին մարդկանց հետ: Նա խաղաղություն է խոսում Իր սիրելի կանանց: Ուստի ընդունե՛ք Նրա խաղաղությունը, և թո՛ղ այն հանդարտեցնի ամեն բարկություն, անհանգստություն կամ վախ ձեր սրտում:

Կանանց շնորհված է յուրահատուկ հնարավորություն: Մեր մեջ ամեն բան ստեղծված է ծառայելու և խնամելու համար: Բայց հաճախ մենք ապրում ենք այն վախով, որ չենք հաճեցնի մեր երկնային Հորը, և հոգնում ենք՝ բարի գործելով: Մենք վախենում ենք, որ ոչ մի ջանք երբևէ բավական լիարժեք չի լինի, ոչ մի զոհ երբևէ բավական մեծ չի լինի: Հիշե՛ք, կարևորն այն չէ, թե ինչ եք դուք անում, այլ այն, թե ինչ է արվել ձեզ համար: Մեզնից ոչ ոք չի կարող ապրել այնպիսի հաճեցնող կյանքով, որը կբավարարի Աստծո պահանջները: Մենք պետք է լինենք Նրա սրտի համեմատ կանայք, բայց չենք ձգտի Նրան, եթե վախենանք մերժվելուց և Նրա բարկությունից: Սա ստեղծում է հուսախաբության մթնոլորտ: Աստված ցանկանում է ազատել Իր դուստրերին այս ծանր բեռից:

Դուք կին եք՝ Նրա աստվածային մտադրությամբ և նպատակով: Սա մի բան է, որի համար պետք է ուրախանալ, որովհետև դուք ստեղծված եք «ահավոր և զարմանալի կերպով» և սիրված եք անսասան սիրով:

*Տե՛ր Աստված, դրոշմի՛ր իմ հոգում, թե ինչպիսի կին ես ցանկանում, որ լինեմ: Ես ընդունում եմ Քո անսասան սերը և այն ամենը, ինչ արել ես ինձ համար: Ավելի՛ մոտեցրու ինձ Քեզ՝ օգնելով գտնելու խաղաղություն իմ կանացիության մեջ:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ
ՄՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՄ ՍՏԵՂԾՎԱԾ:

7

# ՈՉ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱՑԻ

*««...Ես ձեզ հայր կլինեմ, և դուք Ինձ որդիներ և աղջիկ-ներ կլինեք»,- ասում է Ամենակարող Տերը»:*

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 6.18

Երբ դարձա քրիստոնյա և գիտակցեցի, որ Աստված իրապես սիրում է ինձ, դա չափազանց խորթ էր իմ հասկա-ցողությանը: Նման հրաշալի ողորմությանը ես արձագանքեցի Նրա հոգատարությանը հանձնվելով: Ես երբեք չէի մտածել, որ կին լինելը կարող է խնդիր լինել:

Երբ գնացի եկեղեցիներ և մասնակցեցի համաժողովների, լսեցի այնպիսի բաներ, որոնք շփոթություն առաջացրին իմ հանդեպ Նրա սիրո հարցում: Տպավորություն էր, որ ես սողոս-կել եմ փրկագնման մեջ որպես թագավորության երկրորդ կարգի քաղաքացի: Չեմ կարծում, որ ինչ-որ մեկը երբևէ ասել էր դա, բայց կար այսպիսի ենթատեքստ. կանանց չպետք է վստահել, և նրանք մի կերպ են փրկագնվել:

Առաջին շփոթեցնող դեպքը պատահեց քոլեջում ուսանելու տարիներին: Քրիստոնեական մի համաժողովում՝ երկրպա-գությունից հետո, հովիվն աղոթեց և բեմ հրավիրեց իր կնոջը: Հաճելի և գեղեցկատես մի կին բարձրացավ բեմ հազարավոր մարդկանց առջև: Հովիվը սկսեց կատակներ և նվաստացուցիչ դիտողություններ անել իր կնոջը: Մի քանիսին կինը կատա-կով պատասխանեց: Բոլորը ծիծաղեցին, բայց ես վատ զգացի: Հովվի հարվածները թերևս ավելի խորն էին, քան կնոջինը: Նա կարծես գիտեր իր սահմանները:

«Գիտե՞ք, թե որտեղ կլինեինք մենք՝ տղամարդիկ, առանց կանանց»,- բարեսրտորեն հարցրեց հովիվը: Հուսով էի, որ նա մի հաճելի բան կասեր նվաստացուցիչ դիտողություններից հետո:

«Տղամարդիկ մինչև հիմա կլինեին Պարտեզում»: Դահլիճը պոռթկաց ծիծաղից: Մի՞թե միայն ես շփոթվեցի: Մի՞թե ես դուրս էի եկել ամոթի մի աշխարհից, որպեսզի ծաղրի ենթարկվեի մյուսում: Այտերս այրվեցին, և աչքերս լցվեցին արցունքով:

Հաջորդ օրը ծառայությանը մասնակցելու փոխարեն ներողություն խնդրեցի և ցանկություն հայտնեցի ծառայելու մանկասենյակում: Ավելի հանգիստ էի զգում, երբ օրորում էի փոքրիկներին ու հավատում, որ Աստված սիրում է ինձ: Երբ գրկում էի նրանց, պատկերացնում էի, թե ինչ էր զգում Աստված իմ հանդեպ: Ներքուստ լաց էի լինում, իսկ Նա մեղմորեն խոսում էր ինձ հետ: Ես Նրա դուստրն էի, Նա՝ իմ Հայրը: Շատ բաներ ես չէի հասկանում, բայց գիտեի, որ Նրա սերն անփոփոխ էր:

Ինչո՞ւ են կանայք հանդուրժում սուր դիտողություններ: Գուցե վախենո՞ւմ են: Ո՛չ, թերևս, պատճառն ավելի խորն է: Նրանք հավատում են, որ դրանք ճշմարիտ են որոշ չափով, հետևաբար արժանի են դրանց: Մի՛ հավատացեք դրանց: Աստված կանանց վրա բարկացած չէ նրանց կին լինելու պատճառով: Նա չի ստեղծել մեզ որպես երկրորդ կարգի քաղաքացիներ: Նա սիրում է մեզ, ինչպես Հայրը՝ իր զավակին, և Նրա սերը մեր հանդեպ անփոփոխ է:

*Տե՛ր, շնորհակալություն ինձ կին ստեղծելու համար: Ցո՛ւյց տուր ճշմարտությունը իմ արժեքի և Քո սիրո մասին: Քաջալերի՛ր և զորացրո՛ւ Քո դուստրերին այսօր:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆՐԱ ԴՈՒՍՏՐՆ ԵՄ: ԵՍ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՉԵՄ. ԵՍ ՆՐԱ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆ ԵՄ:

8

# ՁԵՐ ԱՄԲՈՂՋ ՍԵՐԸ

*«Աստված մարդ չէ, որ սուտ խոսի...»:*

ԹՎՈՑ 23.19

Այնքան շատ կանայք են ապրում այն թյուր պատկերացմամբ, որ չեն մտնի իրենց նախասահմանության մեջ, մինչև չամուսնանան և չստանան անվախճան սիրո խոստումը իրենց երազանքների տղամարդուց: Ասես մոռացել ենք, որ մենք Նրա երազանքն ենք: Մենք չպետք է սպասենք, որ սերը գտնի մեզ. այն արդեն գտել է: Հիսուսն առաջինը սիրեց մեզ: Այս հարցը՝ արդյոք մենք սիրված ենք, պետք է լուծվի:

Բայցևայնպես, դարեր շարունակ Եվայի դուստրերն աղաղակում են Ադամի որդիներին. «Տո՛ւր ինձ քո ամբողջ սերը: Պաշտպանի՛ր ինձ: Լրացրո՛ւ ապահովության և անվտանգության իմ ամենախոր կարիքները»: Ի պատասխան՝ Ադամի որդիները տալիս են խոստումներ, որոնք չեն կարող պահել՝ հույս ունենալով, որ Եվայի դուստրերը կբավարարեն իրենց ուժգին ցանկությունը, որը բառերով անկարող են արտահայտել: Երկու ձգտումներն էլ դատապարտված են ձախողման, որովհետև միայն Աստված կարող է բավարարել յուրաքանչյուրիս այս խոր ցանկությունները:

Ջոն Էլդրիջի՝ «Սրտով վայրի» հիասքանչ գրքում նկարագրվում է այն հիասթափությունը, որ տղամարդիկ վերապրում են, երբ իրենց բավարարվածությունը փնտրում են նրանից, ում հեղինակն անվանում է «շիկահեր օրիորդ»: Ա՜հ, իսկ ի՞նչ կասեք կանանց մասին: Մի՞թե մենք էլ զուր հույսեր ենք փայփայել: Մենք չափազանց երկար ենք Ադամից բավարարվածություն փնտրել, թեև նա անխուսափելիորեն մեզ հուսախաբ էր անելու:

Ադամը Եվայի համար շատ ավելին էր, քան ամուսին: Ինչ-որ առումով նա հոր կերպար էր, քանի որ Եվան միակ կինն էր, որ ծնվել էր տղամարդուց: Օձը խաբեց նրան, և նա մեղք գործեց, այնուհետև հիասթափվեց Ադամի ընտրությունից, ինչպես որ հիասթափվել էր իր ընտրությունից: Իրականում, մենք կարիք ունենք տղամարդկանց, որոնք իրենց ուժը ստանում են ոչ թե մեզնից, այլ առավել հզոր աղբյուրից:

Մեղավորը Ադամի որդիները չեն. նրանք չեն կարող տալ մեզ այն օրհնությունը, որ փնտրում ենք, և մենք վախեցրել ենք նրանց՝ տալով այդքան մեծ իշխանություն մեր անձերի վրա: Մենք պետք է հասկանանք, որ այն օրհնությունները, որոնց կարիքն իսկապես ունենք, միայն Աստծուց են: Մենք պետք է թույլ տանք, որ Աստված մեզ նոր անուն տա, որովհետև այլևս Եվայի դուստրերը չենք, որոնք թաքնվում են ստվերում, այլ լույսի և խոստման դուստրերը՝ Նրա հարսնացուն:

Տղամարդկանց հետ մեր փոխհարաբերություններում մենք կարող ենք գտնել սեր, կարող ենք գտնել ընկերություն, կարող ենք գտնել կյանքի ընկերոջ, բայց երբեք չենք գտնի Փրկչի: Հիսուսն է միակ Տղամարդը, որը չի կարող ստել, որովհետև Նա է Ճշմարտությունը: Նրա Սուրբ Հոգին մեզ ավելի մոտ է, քան մեր շունչը: Հիսուսի մեջ մենք փրկված ենք, պաշտպանված, փայփայված և բժշկված այնպես, ինչպես հնարավոր է միայն Նրա միջոցով, ով սիրում է կատարյալ սիրով:

*Տե՛ր, Դու ես այն Ճշմարտությունը, որը չի կարող ստել: Միայն Դու կարող ես ինձ լիարժեք դարձնել: Ների՛ր ինձ, որ, Քեզնից բացի որևէ մեկին տվել եմ իշխանություն իմ անձի վրա:*

*Ես հավատում եմ,*

ԵՐԲ ԻՄ ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ԳՏՆՈՒՄ ԵՄ ՈՉ ԹԵ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ, ԱՅԼ ԱՍՏԾՈ ՄԵՋ:

9

# ՔԱՅԼԵԼ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ

*«Բայց եթե լույսի մեջ ման գանք, ինչպես Նա է լույսի մեջ, հաղորդություն ունենք իրար հետ, և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մեզ սրբում է ամեն մեղքից»:*

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 1.7

Ի՞նչ է նշանակում՝ «լույսի մեջ ման գանք, ինչպես Նա է լույսի մեջ»: Պատասխանելու համար պետք է նայենք, թե ինչ է գրված նախորդ խոսքերից մեկում՝ Ա Հովհաննեսի 1.5-ում. «...Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում»: Աստված միայն չի քայլում լույսի մեջ. Նա Լույս է: Այս լույսը չի արձակվում որևէ արտաքին ծածկույթից, այլ սկիզբ է առնում հենց Աստծուց: Նրա մեջ խավար չկա: Այս միտքը դժվար է հասկանալ, առավել ևս պատկերացնել: Այն ամենը, ինչ տեսնում ենք, այս կամ այն ձևով ծածկված է ստվերում: Մեր իմացած լույսի յուրաքանչյուր աղբյուր ստվեր է առաջացնում: Հովհաննես առաքյալը չէր խոսում լույսի մի աղբյուրի մասին, որը սկիզբ է առնում կամ լույս է տալիս դրսից կամ մեր շուրջը: Նա խոսում էր լույսի այն աղբյուրի մասին, որն արձակվում է մեզնից:

Հովհաննեսը նկատի ուներ ոչ թե բնական, ֆիզիկական լույսը, այլ մեր հոգու լույսը (թեև երկնքում այն կարող է ֆիզիկապես տեսանելի լինել, ինչպես եղավ Մովսեսի հետ): Մենք քայլում ենք լույսի մեջ այս խավար և ստվերածածկ աշխարհում՝ վարվելով սրտի մաքրությամբ: Մենք հեռացնում ենք խավարը մեր կյանքի բնագավառներից՝ թույլ տալով, որ Հիսուսի արյունը սրբի մեզ: Սա վերականգնում և պահպանում է մեր հաղորդակցությունը հավատացյալների և Աստծո հետ: Բայց «Եթե ասենք,

թե մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք, և ճշմարտությունը չկա մեզնում» (Ա Հովհաննես 1.8):

Եթե ունենանք բավականաչափ գիտակցություն, շատերս երբեք չենք պնդի, որ մեղքեր չունենք: Բայց, առանց գիտակցելու, կարող ենք խաբել ինքներս մեզ: Երբ արդարանում ենք, մեղադրում կամ արդարացնում մեր վարքագիծը, ըստ էության, պնդում ենք, որ մաքուր ենք: Սա կարող է արտահայտվել մեր խոսակցության մեջ. «Ներողություն: Գիտեմ, որ չպետք է… բայց (բերում եք ձեր պատճառաբանությունը)»: Շատերիս չափազանց ծանոթ է այսպիսի դատողությունը: Մանկությունից ի վեր այս կամ այն ձևով գործածել ենք այն: Բայց սա ներողություն չէ, սա մեղադրելու միջոց է: Մենք իսկապես չենք զղջում, մինչև պատասխանատվություն չենք վերցնում մեր արարքների համար:

«Ներողությո՛ւն, բայց դու ինձ զայրացրիր»: Սա մեղադրելու մեթոդ է, որն ասում է, որ մենք այլընտրանք չունեինք այս հարցում: Ա Հովհաննեսի 1.8-ում ասվում է, որ երբ պնդում ենք, թե մեղք չունենք, խաբում ենք ինքներս մեզ, և «ճշմարտությունը չկա մեզնում»: Մեկ բան է իմանալ ճշմարտությունը, և բոլորովին այլ բան է դրանով ապրելը:

Աստված ուզում է մաքուր ձեռքեր և մաքուր սիրտ: Դրանք կարող ենք ունենալ միայն խոնարհության, անկեղծության և ազնվության միջոցով:

*Սիրելի՛ Տեր, ցո՛ւյց տուր, թե ինչպես քայլեմ լույսի մեջ և դադարեմ մեղադրելուց և խավարի ամեն դրսևորման համար արդարանալուց:*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԼՈՒՅՍԻ ԱՂԲՅՈՒՐՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ԻՆՁ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ:

# Ուժեղ՝<br>փոխհարաբե-<br>րություններում

1

# ԱՍՏՎԱԾ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՁԵԶ

*«...Նրա բարկությունը ակնթարթի չափ է, բայց Նրա քաղցրությունը՝ ամբողջ կյանքում...»:*

ՍԱՂՄՈՍ 30.5

Ի՞նչ եք անում, երբ գիտեք, որ ցավեցրել կամ զայրացրել եք ինչ-որ մեկին: Դառը փորձից գիտեմ, որ եթե հեռանում, խուսափում եմ տվյալ մարդուց կամ արդարացումներ փնտրում, փոխհարաբերությունը փլուզվում է: Մյուս կողմից՝ եթե սրտանց դիմում եմ նրան և խոնարհաբար ներողություն խնդրում (սա դժվար մասն է), կա հնարավորություն, որ փոխհարաբերությունը կբժշկվի: Սա ճիշտ մոտեցումն է մեր փոխհարաբերություններում, նույնիսկ եթե չենք տեսնում ճիշտ արձագանք ուրիշներից: Կլինեն ժամանակներ, երբ մարդիկ չեն ների ձեզ, բայց դուք պետք է իմանաք սա. Աստված երբեք նման բան չի անի: Նրա սերը և ներումը միշտ հաղթում են: Աստված երբեք չի մերժի ձեզ, նույնիսկ երբ թվում է, թե շրջել է Իր երեսը:

Կան ժամանակներ, երբ գիտեմ, որ Աստված այնքան էլ գոհ չէ իմ վարքագծից: Այն պահին, երբ ազնիվ եմ լինում ինքս ինձ հետ, ապաշխարում եմ և խնդրում Նրա ներումը, սիրտս լցվում է Նրա լույսով ու սիրով: Նույնիսկ երբ գիտեմ, որ արժանի եմ դատաստանի, Նա պատում է ինձ ողորմությամբ: Նա արագ հավաստիացնում է. «Դու Իմն ես: Ես սիրում եմ քեզ: Ես հավատում եմ, որ դու ուզում ես փոխվել: Ես արդեն ներել եմ քեզ: Այժմ ժամանակն է մոռանալու դա»: Այս պահին Նա ցանկանում է նույնը ձեզ փոխանցել:

Դուք Նրա զավակն եք: Գուցե Նա մերժում է ձեր արարքները, խոսքերը կամ վարքը, բայց երբեք չի մերժի ձեզ: Երբ գիտեք, որ արել եք ինչ-որ բան, որը հաճելի չէ ձեր Հորը, դարձե՛ք դեպի Նա՝ Նրանից հեռանալու փոխարեն: Հեռանալը կամ թաքնվելը երկարաձգում է գործընթացը և զրկում է «Նրա քաղցրությունը ամբողջ կյանքում» վերապրելուց: Բացե՛ք ձեր սիրտը և ընդունե՛ք թե՛ Նրա սերը, թե՛ այն դասը, որ պետք է սովորեք:

*Հա՛յր, ես գիտեմ, որ Դու ինձ այնքան ես սիրում, որ ցույց կտաս իմ սխալները: Քո Խոսքի և Հոգու միջոցով ցո՛ւյց տուր իմ կյանքի այն բնագավառը, որը Քո ողորմությամբ սրբվելու կարիք ունի: Ես ընտրում եմ վազել դեպի Քեզ, այլ ոչ թե հեռանալ Քեզնից:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԳԻՏԵՄ, ԹԵ ՈՒՄ ԴԻՄԵՄ,
ԵՐԲ ՍԽԱԼ ԵՄ:

2

# ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԺԱՄԱՆԱԿ

*«Եթե կարելի է, որքան ձեզնից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությո՛ւն ունեցեք»:*

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.18

Որբեմն ավելի հեշտ է խոսել կոնֆլիկտի լուծման մասին, քան լուծել այն: Երբ կոնֆլիկտը քրիստոնյաների միջև է, մենք առնվազն ունենք հայացքների նույն շրջանակը կամ չափանիշերը խնդիրներ լուծելու համար: Բայց երբեմն մարդիկ հրաժարվում են հաշտվելուց: Այդ դեպքում ի՞նչ ենք անում: Ես մի քանի անգամ հանդիպել եմ նման իրավիճակի: Ակամա վիրավորել էի ընկերուհուս և զգում էի, որ մեր միջև անդունդ է գոյացել: Սիրտս քննելուց հետո գնացի նրա մոտ և հարցրի, թե արդյոք ցավեցրել կամ վիրավորել եմ նրան: Ես կամովին ընդունեցի այն փաստը, որ գուցե անգիտակցաբար անհարգալից էի վերաբերվել նրան, և հավաստիացրի, որ չեմ ուզում՝ այդ իրավիճակը պահպանվի: Նա ասաց, որ ես ոչինչ չեմ արել, բայց մեր միջև հեռավորությունը պահպանվեց: Ես նրա համար նվեր գնեցի և երկտող թողեցի՝ կրկին ներողություն խնդրելով: Պատասխան չստացա: Նորից անձամբ խոսեցի նրա հետ: Նա վստահեցրեց, որ ոչինչ չի եղել, բայց շարունակեց հեռու մնալ ինձնից: Ի վերջո գնացի մեր ընդհանուր ընկերուհիներից մեկի մոտ և հարցրի՝ արդյոք գիտեր, թե ինչով վիրավորել նրան: Նա չգիտեր: Ես պատմեցի ամբողջ պատմությունը՝ փորձելով այն իմաստավորել: Վերջապես, ինձ լսելուց հետո նա ասաց.

«Լի՛զա, դու խնդրե՞լ ես, որ նա ների քեզ»: «Այո՛»,- վստահեցրի նրան: «Կապ հաստատե՞լ ես նրա հետ»: «Այո՛, բազմիցս»,- ասացի ես: «Եթե դու արել ես այս ամենը, և նա դեռ չի ընդունում քեզ, դու պետք է բաց թողնես նրան»:

Նրա խոսքերն ինձ ազատ արձակեցին: Ես հասկացա, որ հնազանդվել եմ Հռոմեացիների 12.18-ին. «Եթե կարելի է, որքան ձեզնից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությո՛ւն ունեցեք»: Ես մեղավոր ու շփոթված էի զգում, որովհետև նույնիսկ համոզված չէի, թե որն էր իմ հանցանքը: Ճշմարտությունն այն է, որ միանգամայն հնարավոր է՝ նա այլևս բավականություն չէր ստանում մեր ընկերությունից, կամ մեր կյանքի ժամանակաշրջանները փոխվել էին: Ես տեսել եմ, թե ինչպես են որոշ ընկերներ հայտնվել իմ կյանքում և անհետացել, երբ Աստված որոշակի աշխատանք է կատարել իմ կամ նրանց մեջ:

Մեր պատասխանատվությունն է աղոթել հաշտության համար և հարցնել Աստծուց, թե ինչ դեր ունենք այդ գործընթացում: Եթե խոնարհությամբ ու սիրով գնում ենք այն անձնավորության մոտ, որի հետ ցանկանում ենք հաշտվել, և մերժվում ենք, երբեմն պատճառն այն է, որ նա դեռևս պատրաստ չէ արձագանքելու: Դա կարող է ցավոտ լինել, բայց դուք անհաջողակ չեք, եթե հնազանդվում եք Աստծո Խոսքին:

*Սիրելի՛ Աստված, խնդրում եմ, տո՛ւր ինձ ուժ՝ լինելու հաշտեցնող իմ փոխհարաբերություններում, և իմաստություն՝ հասկանալու, թե երբ են ուրիշների արձագանքներն իմ վերահսկողությունից դուրս: Որքան որ կախված է ինձնից, օգնի՛ր, որ խաղաղություն բերեմ:*

*Ես ուխտում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԽԱՂԱՂ ԱՊՐՈՒՄ ԵՄ
ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԱՍՏԾՈ ՀԵՏ:

3

# ՀՐԱՊՈՒՐԱՆՔ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

*«Պահի՛ր ինձ, ո՛վ Աստված, որովհետև Քեզ եմ հուսացած: Ասացի Տիրոջը, թե Դու ես իմ Տերը. բարիք չունեմ Քեզնից բացի: Ես Տիրոջը դրեցի իմ առաջ ամեն ժամանակ, որովհետև Նա իմ աջ կողմն է. ես չեմ սասանվի: Սրա համար իմ սիրտն ուրախ է, և իմ փառքը ցնծում է. մարմինս էլ հույսով կբնակվի»:*

ՍԱՂՄՈՍ 16.1, 2, 8, 9

Ձեր հրապուրվածությունները կուղղորդեն ձեր որոշումները: Այն, ինչով հրապուրված եք, ի վերջո կազդի ձեր կյանքի ամեն ոլորտի վրա: Ովքեր ձգտում են, որ Աստված դառնա իրենց հրապուրանքի կենտրոնը, առերեսվում են այս հարցին. «Ինչպե՞ս սրտանց փափագեմ մի Աստծո, որին չեմ տեսնում»:

Եթե ուզում եք ինչ-որ բան ձեռնարկել, նախ խոսում եք նրա հետ, ով սովորել է դա լավ անել: Դավիթը գիտեր ինչպես որոնել Աստծուն և պահպանել իր բուռն սերը Նրա հանդեպ: Նա որոնում էր Աստծուն այնպես, ինչպես ուրիշ ոչ ոք չէր արել իրենից առաջ: Նա չէր կասկածում Աստծո սիրուն կամ հավատարմությանը և ապրում էր՝ մշտապես շնորհակալություն հայտնելով Նրան:

Դավիթը «Տիրոջը դնում է իր առջև»՝ արտահայտելով սրտի զեղումները: Մեր սիրտը բացահայտվում է մեր խոսքերով՝ աղոթքում, կոնֆլիկտի մեջ թե զրույցի ընթացքում: Եվ հակառակը, մեր սիրտը վերափոխվում է մեր խոսքերով: Այս սաղմոսում Դավիթը ներկայացնում է մի քանի հզոր ճշմարտություններ, որոնք պետք է մերը դարձնենք.

1. Դարձրե՛ք Աստծուն ձեր ապաստանը… նույնիսկ թագավորները չեն կարող իրենց պաշտպանել:
2. Եղե՛ք անմիջական… անվանե՛ք Նրան ձեր Տերը:
3. Ասե՛ք Նրան, որ չկա ոչինչ, որ Նրանից ավելի եք ցանկանում:
4. Մշտապես նայե՛ք Նրան:
5. Տվե՛ք Նրան նախաապատվություն և պատվե՛ք Նրան ձեր կյանքով:
6. Հետևե՛ք Նրան այն ամենում, ինչ անում եք:
7. Կանգնե՛ք Նրա կողքին, որովհետև ամեն բան Նրա իսկողության տակ է:
8. Հանգստացե՛ք և ցնծացե՛ք, քանի որ դուք այլևս չեք վերահսկում:
9. Ապավինե՛ք Նրան այս հզոր ճշմարտությունների համար:

Երբ Աստծո հետ ուխտի և Նրա հանդեպ սիրո հռչակումներ ենք անում, մեր կապն ամրապնդվում է: Մեր փոխհարաբերությունները հաստատում և ընդլայնում ենք մեր խոսքերով և արարքներով: Խոսքերը կարող են բժշկել և մաքրել մեր կյանքի ծածուկ տարածքները, ինչպես նաև վիրավորել մեր էությունը:

Որպեսզի ձեր սիրտը միանա Աստծուն, ընտրե՛ք ձեր խոսքերն այնպես, ինչպես ընտրում եք ձեր ընկերներին… իմաստությամբ: Նրանք գուցե քիչ են, բայց թանկ են: Որոնե՛ք Նրան ձեր շուրթերից դուրս եկող խոսքերով և Դավթի նման կտեսնեք, թե ինչպես է Նրա հանդեպ ձեր բուռն սերը աճում:

*Սիրելի՛ Տեր, ուզում եմ ճանաչել Քեզ. հետևել Քեզ այնպիսի ջերմեռանդությամբ և նպատակասլացությամբ, ինչպես կհետևեի մարդկային ամենաթանկ փոխհարաբերությանը: Երբ սկսեմ աղոթել, թո՛ղ Քո նկատմամբ իմ հրապուրվածությունն աճի:*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՄ ԽՈՍՔԵՐԸ ՀԱԳԵՑԱԾ ԵՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ԱՍՏԾՈ ՍԻՐՈՎ:

4

# ԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ

*«Եվ Տերը ապավեն է աղքատին, ապավեն՝ նեղության ժամանակներում»:*

ՍԱՂՄՈՍ 9.9

Սեռական բռնությունը և ֆիզիկական բռնությունը համավարակի պես տարածվում են: Ինչպե՞ս իմ Հայրը կցանկանար, որ ինձ հետ վարվեին:

Սա շատ կարևոր հարց է, երբ խոսքը այն մարդկանց հետ փոխհարաբերությունների մասին է, որոնք անմիջական կապ ունեն մեզ հետ: Նրանք կարող են լինել բժիշկներ, ուսուցիչներ, ընտանիքի անդամներ և ընկերներ: Կարող են լինել այնքան մոտ մարդիկ, ինչպիսին ընկերն է, կամ այնքան մտերիմ, ինչպիսին ամուսինն է: Լսե՛ք ինձ. եթե դուք բռնության եք ենթարկվում կամ փոխզիջման եք գնում որևէ կերպ, լռելը սիրո դրսևորում կամ օգտակար քայլ չէ: Մի՛ մնացեք փոխհարաբերության մեջ նրանց հետ, ովքեր բռնություն են գործադրում ձեր նկատմամբ կամ վատ են վարվում ձեզ հետ: Ինչպես բարեպաշտ հայրերը պաշտպանում են իրենց դուստրերին, այնպես էլ ձեր անվտանգությունը շատ կարևոր է ձեր երկնային Հոր համար:

Ձեր երկնային Հայրը երբեք չէր ցանկանա, որ ձեզ ոտնահարեին: Նա ուզում է, որ ձեզ պաշտպանեն և խնամեն: Մի՛ վախեցեք մարդկանցից կամ նույնիսկ ձեր սխալ ընտրություններից: Նա կլինի ձեր կողքին՝ ձեզ սատարելու համար, երբ հստակ կողմնորոշվեք: Երբևէ մի՛ պատկերացրեք, թե Նա նման դիտողություններ կանի. «Ինքդ ես այդպես ուզել» կամ «Ինչ ցանել ես, այն էլ հնձում ես»: Նա երբեք նման բան չի ասի: Նա կասի. «Դո՛ւրս արի, գնա՛ տուն և ապահո՛վ եղիր»: Դուք ունեք

բոլոր իրավունքները՝ օգտագործելու ձեր ձայնը և համապատասխան մարմիններին հայտնելու բռնության փաստը:

Սա վերաբերում է հարաբերություններին, ընկերությանը, կազմակերպություններին կամ ցանկացած մեկին, ում հետ սերտ կապի մեջ եք: Ղուկասը հորդորում է՝ «աղո՛թք արեք ձեզ նեղացնողների համար», բայց աղոթքը նույնքան ազդեցիկ է հեռվից (Ղուկաս 6.28): Պողոսն ասում է. «Եթե կարելի է, որքան ձեզնից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությո՛ւն ունեցեք» (Հռոմեացիների 12.18): «Որքան ձեզնից է կախված» արտահայտությունը ենթադրում է, որ որոշ չափով դա կախված է մյուսներից: Դուք ունեք և՛ իրավունք, և՛ կարողություն՝ արտահայտելու ձեր դիրքորոշումը և պահպանելու ողջամիտ հեռավորություն նրանցից, ովքեր ձեզ վնասելու մտադրություն ունեն: Եթե հարաբերության մեջ եք ինչ-որ մեկի հետ, որը վերահսկում է, և հասկանում եք, որ չեք կարող դիմադրել, հրաժարվե՛ք նրա հետ հանդիպելուց: Ոչ մի դեպքում չպետք է համակերպվել սեռական կամ ֆիզիկական բռնությանը:

Տարածություն պահպանելը ձեր և նրա միջև, ով վնասել է ձեզ, ոչ միայն պաշտպանում է ձեզ, այլև թույլ է տալիս նրան իմանալ, որ իր վարքագիծն անընդունելի է: Դուք կարող եք ներել ինչ-որ մեկին՝ թույլ չտալով հետագայում մոտենալ ձեզ կամ մտնել ձեր կյանք: Նրան ներելը կպահպանի ձեր հոգու առողջությունը, որն Աստված շատ բարձր է գնահատում:

Դուք Աստծո սիրելի դուստրն եք: Իմացե՛ք, թե ինչպես Նա կցանկանար, որ ձեզ հետ վարվեին:

*Հիսո՛ւս, տո՛ւր ինձ Քո ուժը և իմաստությունը անառողջ փոխհարաբերություններում ճիշտ վարվելու համար: Ես վստահ եմ, որ Դու կկանգնես իմ կողքին:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՍԱՀՄԱՆՆԵՐ ԵՄ ԴՆՈՒՄ ԲՌՆԱՐԱՐ ԿԱՄ ՎՆԱՍԱԿԱՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ:

5

# ԻՄԱՍՏՈՒՆ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*«Լավ է հայտնի հանդիմանությունը, քան թե ծածուկ սերը: Անկեղծ են բարեկամի փված վերքերը, բայց առատ են ատողի համբույրները»:*

ԱՌԱԿԱՑ 27.5, 6

Ընկերությունը կարող է հզոր ազդեցություն ունենալ մեզ վրա: Իսկական ընկերները կասեն մեզ ճշմարտությունը խոսքերով, որոնք կարող են վիրավորել մեր հպարտությունը, բայց ի վերջո կբուժեն մեզ: Վստահելի ընկերները կասեն այն, ինչ կարիքն ունենք լսելու, ոչ թե այն, ինչ ուզում ենք լսել: Մեզ զգուշացվում է. «...չար ընկերակցություններն ապականում են բարի վարքերը» (Ա Կորնթացիների 15.33): Լավ է շրջապատված լինել մարդկանցով, որոնց ցանկանում եք նմանվել:

Ահա մի քանի միտք, թե ինչպես են ուժեղ կանայք ընկերների ընտրում:

Նախ համոզվե՛ք, որ ձեր ընկերները ձեր կողմից են, ոչ թե ձեր դեմ: Արդյո՞ք ընկերական շփումից հետո մեծ մասամբ դժգոհում եք կամ զգում եք հոգնած, սպառված կամ բարկացած: Գտե՛ք ընկերներ, որոնք ներդրում են կատարում ձեր աճի մեջ, և իրենք էլ եղե՛ք այդպիսին:

Երկրորդ՝ ձեզ անհրաժեշտ է այնպիսի ընկեր, որը մղում է աճելու և կենտրոնանալու, թե ով եք ուզում լինել: «Երկաթը երկաթով է սրվում, և մարդս սրում է իր ընկերոջ երեսը»,- ասվում է Առակաց 27.17-ում: Դուք ուզում եք ունենալ և լինել այնպիսի ընկեր, որը սիրով կասի ճշմարտությունը՝ շողոքորթելու

փոխարեն: Անհամաձայնությունը կարող է օգտակար լինել, և «անկեղծ են բարեկամի տված վերքերը»:

Եղե՛ք համբերատար: Վստահությունը և ընկերությունը ժամանակ են պահանջում: Մտերմությունը չափից շատ անկեղծանալը չէ: Դուք իրականում չեք ճանաչում ինչ-որ մեկին, միայն քանի որ միմյանց մասին գիտեք ավելին, քան հարկն է: Ես տեսել եմ, թե ինչպես է ընկերությունն ակնթարթորեն ձևավորվել և նույնքան արագ էլ փլուզվել: Ինչպես ցանկացած արժեքավոր բան, առողջ ընկերությունը պահանջում է ջանք: Ընկերոջ իսկական կամ կեղծ լինելը բացահայտվում է այն ժամանակ, երբ կարգավորում ենք կոնֆլիկտը:

Սոցցանցերը ընկերություն ձևավորելու համար չեն. դրանք ծանոթություններ են ստեղծում: Եղե՛ք ուշադիր ընկերների ընտրելիս: Խնդրե՛ք Հորը, և Նա ցույց կտա ձեզ տարբերությունը «կեղծ ընկերոջ» և նրա, ով շարժվում է այն ուղղությամբ, որով դուք եք ուզում գնալ: Եթե մեկը շարունակ նսեմացնում, դավաճանում կամ անտեսում է ձեզ, հարցրե՛ք ինքներդ ձեզ, թե ինչու եք ընկերներ: Ստուգե՛ք ձեր շարժառիթները: Գուցե անառողջ հարաբերությունների մե՞ջ եք կամ ուզում եք ճանաչվա՞ծ լինել: Աղոթե՛ք, որ իմանաք Աստծո կամքը:

Մենք կարող ենք լավ հարաբերություններ ունենալ բազմաթիվ մարդկանց հետ: Բայց երբ ներդրում եք կատարում նրանց կյանքում, համոզվա՛ծ եղեք, որ միմյանց հետ սիրով ճշմարտությունն եք խոսում:

*Աստվա՛ծ, ես գիտեմ, Քո կամքն է, որ լինեմ հասարակության մեջ և աճեմ ընկերության մեջ և միջոցով: Օգնի՛ր ինձ, որ խոհեմությամբ ընտրեմ նրանց, ում հետ պետք է անցկացնեմ իմ ժամանակը:*

*Ես ուխտում եմ.*

ԵՐԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԱՆՈՒՄ ՆՐԱՆՑ ՀԵՏ, ՈՎՔԵՐ ԱՃՈՒՄ ԵՆ ԻՆՁ ՀԵՏ:

6

# ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾ

*«Արդար է երևում դատին առաջ սկսողը, բայց ոսոխը գալիս է և քննում նրան»:*

ԱՌԱԿԱՑ 18.17

Ամեն անգամ, երբ սենյակում, խոսակցության մեջ կամ սոցցանցերում մեկից ավելի մարդ է լինում, կոնֆլիկտ առաջանալու մեծ հավանականություն կա: Շատ հաճախ վիճաբանության մեջ յուրաքանչյուր կողմը պնդում է իրենը և հրաժարվում լսելուց, որովհետև հավատում է, որ հենց ինքն է ճիշտ:

Եգիպտոսում գերության մեջ Իսրայելի զավակները տեսել էին, որ կոնֆլիկտները լուծվում էին բռնությամբ և ահաբեկչությամբ: Ազատության նոր ժամանակահատվածում նրանք կոնֆլիկտի լուծման ողջամիտ օրինակի կարիք ունեին:

Իսրայելցիները Եգիպտոսի ստրկության կյանքը փոխանակել էին այն կյանքով, որը ծածկված էր Աստծո ներկայության ամպով և պաշտպանությամբ: Սա նշանակում էր քարե կուռքերից և կույր պատկերներից տեղափոխություն դեպի կենդանի Աստված, ով սուրբ է, արդար, սիրառատ և ահարկու: Սիրո այս Աստվածը, որ փչացնող կրակ է, ամենևին նման չէր եգիպտական աստվածներին, որոնց հանգստացնում էին զոհաբերություններով: Իսրայելի Սուրբին պետք է ծառայեին հոգով և ճշմարտությամբ: Եվ Նրա կառավարման հիմքում արդարությունն էր: «Բայց Տերը նստած է գահին

հավիտյան. Նա իր գահը հաստատեց արդարության համար» (Սաղմոս 9.7, ESV):

Եթե մեզ հետ անարդար են վարվել, կարող ենք վստահ լինել, որ ի վերջո արդարությունը կհաղթի: Յուրաքանչյուրիս հոգու խորքում կա արդարության հուսահատ ձգտում, բայց եթե ազնիվ լինենք, ինքներս էլ սխալ ենք դատել: Շատ հաճախ վստահ եմ եղել, որ ճիշտ եմ գնահատել մարդկանց կամ հանգամանքները, մինչև որ չեմ լսել պատմության մյուս կողմը: Հենց սա է պատճառը, որ Պողոսը Ա Կորնթացիների 4.5-ում հորդորում է. «Ուրեմն ժամանակից առաջ մի՛ դատեք, մինչև Տերը գա, որ խավարի ծածուկ բաները կբերի էլ լույսի մեջ և սրտերի խորհուրդները կհայտնի, և այն ժամանակ ամեն մեկին գովասանք կլինի Աստծուց»:

Մենք կարող ենք փնտրել Նրա իմաստությունը մեր կոնֆլիկտների մեջ և հանգիստ լինել, որ վերջին հաշվով դատողը և փրկողը Նա է: Հետևելով Նրա առաջնորդությանը՝ մենք կարող ենք արձագանքել արդարությամբ և ողորմությամբ՝ չստանձնելով պատիժ սահմանելու, վրեժ լուծելու կամ պարտադրելու պատասխանատվություն: Մենք կարող ենք աղոթել Նրան և տեսնել, թե ինչպես է Նա գործում և խորհուրդներ տալիս: Ի վերջո Նա Խորհրդատու է, որ մշտապես մեզ հետ է:

*Տե՛ր, շնորհակալությո՛ւն, որ ազատված եմ ճնշումից և կարող եմ վստահել Քեզ ու ապավինել Քո առաջնորդությանը կոնֆլիկտների ժամանակ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԺԱՄԱՆԱԿ ՎՍՏԱՀՈՒՄ ԵՄ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԾՈՒՆ:

7

# ՉԵՆԹԱՐԿՎԵԼ ԲԱՄԲԱՍԱՆՔԻՆ

*«Իր հարևանին արհամարհողը պակասամիտ է, բայց խոհեմ մարդը կլռի: Բանսարկություն ման եկողը գաղտնիքը կհայտնի, բայց հավատարիմ հոգի ունեցողը կծածկի բանը»:*

ԱՌԱԿԱՑ 11.12, 13

Բոլորիս հետ պատահել է. դուք զրուցում եք, երբ հանկարծ մեկը սկսում է բամբասել: Հույս ունեք, որ ինչ-որ մեկը վերջ կտա դրան: Որքան երկար եք լսում, այնքան անհարմար է դառնում հակառակվելը: Դուք համոզում եք ձեզ, որ կարող եք վերահսկել այն, ինչ լսում եք. ի վերջո դուք հասուն եք և իմաստուն… կարող եք մնալ անաչառ: Սակայն ավելի ուշ հասկանում եք, որ ձեր տեսողությունը մթագնել է: Հաջորդ անգամ, երբ տեսնեք այն մարդուն, որին քննարկում էիք, վատ վիճակում կհայտնվեք: Կամ երբ լսեք նրա անունը, ճնշում կզգաք՝ դատելու նրան. ոչ թե պարզապես նրա արարքները, այլ նրա շարժառիթները: Դժվար է խուսափել բամբասանքից, բայց նույնիսկ դա լսելը ապականում է մեզ (Առակաց 17.4): Սա ամենօրյա իրավիճակ է, որը պետք է վերացնենք սոցցանցերից:

Նախ պետք է հասկանանք, թե ինչ է անում բամբասանքը, եթե ուզում ենք խուսափել դրանից: Ըստ *Մերիամ-Վեբսթերի բառարանի*՝ բամբասկոտը հայտնում է անձնական կամ ցնցող փաստեր ուրիշների մասին: Նա այդ տեղեկությունները հաղորդում է այն մարդկանց, որոնք ներգրավված չեն տվյալ իրավիճակում: Յուրաքանչյուրն ինչ-որ չափով բամբասել է: Բայց բամբասկոտը դա անում է առանց մտածելու: Նրա

շարժառիթը կարող է լինել այնքան անմեղ, որքան ծանրակշիռ և կարևոր զգալու ցանկությունն է, կամ այնքան ստոր, որքան ինչ-որ մեկի հեղինակությունը կործանելու ցանկությունը:

Բամբասանքը թունավորում է հարաբերությունները և խեղաթյուրում ճշմարտությունը: Դա վստահության դավաճանություն է: Գաղտնիքը, միջադեպը, որոնք կարելի էր ծածկել, զրույցի թեմա են դառնում ինչ-որ մեկի շահի համար: Մեկին դավաճանում են, որպեսզի մյուսը ձեռք բերի ապահովություն, դիրք կամ ազդեցություն: Ոմանք բամբասում են կարգավիճակ ձեռք բերելու, ուշադրություն գրավելու, զվարճանալու համար: Մյուսները բամբասում են, որպեսզի պատժեն ինչ-որ մեկին:

Սա մեր գործը չէ: Սուրբ Հոգին փափկացնում է մեր սիրտը, որպեսզի երբ խոսենք ինչ-որ մեկի մասին, զգանք, որ ստուգվում ենք: Եթե թշնամին իմանա, որ դուք հսկում եք ձեր խոսքերը, նա կփորձի տապալել ձեզ այն ամենով, ինչ դիտում, կարդում կամ լսում եք: Թույլ մի՛ տվեք նրան: Բամբասանքից զգուշանալը սիրտը հսկելու կարևոր մաս է: Երբ որոշեք հեռու մնալ նման խոսակցություններից, ապավինե՛ք Հոգուն իմաստության համար, որպեսզի իմանաք, թե ինչպես կողմնորոշվեք: Երբեմն լավագույն տարբերակը պարզապես հեռանալն է: Դուք չեք ցանկանում, որ ձեր շուրթերը տանեն ձեզ մութ ճանապարհով: Թույլ մի՛ տվեք, որ ինչ-որ մեկը վատ խոսի ձեր մտերիմ մարդկանց մասին: Փոխարենը աղոթե՛ք, սիրե՛ք և, եթե անհրաժեշտ է, հակառակվե՛ք նրանց:

*Տե՛ր, պահպանի՛ր իմ շուրթերը և ականջները, որ չապականեմ իմ սիրտը: Սովորեցրո՛ւ, թե ինչպես զգուշորեն, բայց ամուր կանգնեմ իմ դիրքում, չփչեմ իմ կյանքը և արձագանքեմ հոգու արգելքներին:*

*Ես ուխտում եմ,*

ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՄ ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔԵՐ ԲԱՄԲԱՍԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ:

8

# ԱՊՐԵԼ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*«Ապրե՛ք միմյանց հետ ներդաշնակության մեջ: Մի՛ հպարտացեք, այլ պատրաստակա՛մ եղեք հաղորդակցվելու ցածր դիրք ունեցողների հետ: Մի՛ մեծամտացեք: Մեկին չարի փեղ չար մի՛ հատուցեք: Զգո՛ւյշ եղեք, որ ճիշտ վարվեք բոլորի առջև»:*

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.16, 17 (NIV)

Ապրել միմյանց հետ ներդաշնակության կամ խաղաղության մեջ նշանակում է համատեղելի, համահունչ և բարեկամաբար ապրել Քրիստոսի մարմնի մյուս անդամների հետ: Ներդաշնակ ապրելու այս կոչը գործում է ինչպես եկեղեցու ներսում, այնպես էլ դրանից դուրս: Հեշտ է մի կողմ դնել ցանկացած տարբերություն, որ կարծում ենք, թե ունենք, որովհետև Քրիստոսում բոլորս մեկ ենք: Երբ հասկանանք սա, Աստծո ծառայության մեջ անսպասելիորեն կընկերանանք մարդկանց հետ՝ անկախ նրանից, թե կյանքի ինչ փուլում են նրանք: Այսօրվա խոսքը զգուշացնում է, որ հպարտությունը և մեծամտությունը կստիպեն մեզ աններդաշնակ ապրել մյուսների հետ: Մեծամտությունը կստիպի մեզ մտածել, որ իրավունք ունենք չարին չարով հատուցելու, ինչը հակառակն է նրա, ինչ Սուրբ գիրքը քաջալերում է մեզ անել: Հիշե՛ք, Քրիստոսի մեջ մենք պետք է ընդունենք ծառայի էությունը: Սա նշանակում է, որ մեր ապրելակերպով ճիշտ վարքագծի օրինակ պետք է լինենք:

Երբ ամբարտավանությունը և հպարտությունը մի կողմ

դնենք, կդարձնենք մեր մյուս այտը, երբ մեզ ապտակեն, կտանք մեր վերարկուն, երբ շապիկ ուզեն, և մեկ մղոն ավելի կգնանք: Մեզ հորդորվում է ամեն ջանք գործադրել, որպեսզի ճիշտ վարվենք հանուն ուրիշների և, որքան կախված է մեզնից, ապրենք խաղաղության մեջ բոլորի հետ: Սա նշանակում է զարգացնել մանկական վստահություն մեր Հոր հանդեպ: Միայն Նա գիտի ամեն մանրուք՝ պատմության յուրաքանչյուր էջի յուրաքանչյուր տող: Նա է հավատարիմ և ճշմարիտ հեղինակը:

Մենք ապրում ենք շատ լարված ժամանակներում, այդուհանդերձ, մարդիկ շարունակում են արձագանքել բարությանը: Օրվա ընթացքում ես փորձում եմ ուշադրություն դարձնել մարդկանց: Ես սիրալիր խոսքեր եմ ասում, օգնում եմ կամ պարզապես բարևում եմ նրանց: Շատ-շատերն արագ անցնում են իրենց ճանապարհը՝ ականջակալներն ականջներին և կտրված շրջապատող իրականությունից: Ես մարտահրավեր եմ նետում՝ լինելու ուժեղ և օգտվելու բարություն ցուցաբերելու հնարավորությունից: Ռասայական լարվածության կամ ֆինանսական գերակայության գոյությունը հերքելը չի բերում բժշկություն: Եկե՛ք լինենք նախաձեռնող: Աղոթե՛ք, որ բացահայտվի ցանկացած նախապաշարմունք, որ կարող է թաքնված լինել ձեր սրտում: Եթե գտնեք, անդրադարձե՛ք դրան և ապաշխարե՛ք: Հանե՛ք հպարտության ամեն աչքակալ, որ կխրախուսի արդարացնել այն կամ գտնել պատճառաբանություններ, և հագե՛ք խոնարհության թիկնոցը:

*Հա՛յր, բացահայտի՛ր իմ կյանքում հպարտության և նախապաշարմունքի ցանկացած բնագավառ, որպեսզի կարողանամ խաղաղ և ներդաշնակ ապրել մյուսների հետ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՄ ԱՊՐՈՒՄ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՀԵՏ:

9

# ԱՃԵԼ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

*«Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք, ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ»:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.14

Քրիստոսի ընկերները կամ բարեկամները կլինեն իսկական ընկերներ ձեզ համար: Նրանք ճիշտ կխոսեն, որովհետև ճիշտ են ապրում: «Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք, ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհաննես 15.14): Հիսուսը հստակ է խոսում այստեղ: Ընկերները պահում են Նրա պատվիրանները և խրախուսում են, որ նույնն անեն մյուսները: Նրանք պահում են պատվիրանները ոչ թե Նրա հանդեպ իրենց սերն ապացուցելու համար, այլ որովհետև սիրում են Նրան:

Իսկական ընկերները մշտապես կբարձրացնեն ձեզ և կոչ կանեն վարվելու այնպես, որ հաճեցնեք Տիրոջը: Նրանք կցանկանան ժամանակ անցկացնել ձեզ հետ և հոգ կտանեն ձեր աճի համար: Նրանք կծիծաղեն և կլացեն ձեզ հետ: Կյանքի փուլերը կարող են բաժանել ձեզ, բայց քանի որ դուք սրտի ընկերներ եք, երբ կրկին հանդիպեք, կթվա, թե ժամանակ չի էլ անցել: Իսկական ընկերները չեն վախենա ձեր աճից, առավելություններից կամ ձեռքբերումներից, այլ կուրախանան ձեզ հետ, ասես այդ ամենն իրենցն է: Մեզ անհրաժեշտ է կանանց ընկերախումբ: Այս սկզբունքները ճշմարիտ են ինչպես երիտասարդ, այնպես էլ տարեց հասակում:

«Եվ եթե մեկը նրան բռնություն անի, երկուսը նրա դեմ կկանգնեն, և երեքպատիկ թելը շուտով չի կտրվի» (Ժողովող 4.12):

Ընկերները պայքարում են ձեզ հետ և ձեզ համար աղոթքում՝ բարեխոսելով և հաղորդելով ուժ, որը գուցե պակասում է ձեզ: Ինչ-որ զորավոր բան է կատարվում, երբ ընկերները հավաքվում են Նրա անունով: Հիսուսն ասաց. «Որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի Իմ անունով ժողովված լինեն, ես այնտեղ՝ նրանց մեջ եմ» (Մատթեոս 18.20): Սա անհավանական օրհնություն է այսպիսի անփոխարինելի ընկերության համար:

Ընկերները միասին քննում են Աստվածաշունչը և զարմանում՝ տեսնելով Սուրբ Հոգու զորությունը միմյանց մեջ: Քաջալերվե՛ք: Աստված հիասքանչ, խոր աշխատանք է կատարում Իր դուստրերի մեջ այստեղ՝ երկրի վրա:

Ընկերների միջև անհամաձայնություն կարող է լինել, բայց դա չի նշանակում, որ մենք պետք է բաժանվենք: Պաշտպանե՛ք մեկդ մյուսին, մենք ստեղծվել ենք համայնքում աճելու համար: Այդ ընթացքում կլինեն ձախողումներ, բայց երբ նվիրվենք միմյանց, կակնկալենք լավագույնը՝ վատը փնտրելու փոխարեն:

Եթե ձեր կյանքում չունեք այսպիսի փոխհարաբերություններ, մտադրվե՛ք կառուցելու դրանք: Խնդրե՛ք Աստծո առաջնորդությունը և նոր ուղիներ բարեպաշտ հարաբերություններ ձևավորելու համար: Սկզբում դա կարող է վախեցնող թվալ, քանի որ ոմանք չեն ցանկանում այդ աստիճանի պարտավորություն ստանձնել: Խիզախե՛ք և մեկնե՛ք ձեր ձեռքը: Դուք կարող եք միասին աղոթել, ուսումնասիրել Խոսքը կամ վայելել միմյանց ընկերակցությունը: Ոչինչ չի փոխարինի այն ժամանակին, որ անցկացնում եք այս կանանց հետ:

*Հիսո՛ւս, ուզում եմ լինել իսկական ընկեր և կառուցել իսկական ընկերություն: Ցո՛ւյց տուր, թե որտեղ և ինչպես կառուցեմ այն:*

*Ես ուխտում եմ,*

ԵՐԲ ԿԱՆԳՆՈՒՄ ԵՄ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ
ԻՄ ՔՈՒՅՐԵՐԻ ԿՈՂՔԻՆ:

# MessengerX

*Ձեր հավելվածը ամենօրյա աշակերտության համար*

## Լիովին անվճար

Պարզապես ներբեռնե՛ք ձեր շարժական սարքի վրա և օգտագործե՛ք:
Կամ օգտագործե՛ք վեբ-տարբերակը՝ հետևյալ հասցեով.

**MessengerX.com**




## 125 + լեզուներ, որոնց թիվն ավելանում է

- Դիտեք և ներբեռնեք նյութեր ավելի քան 125 լեզուներով:
- Կիսվեք նյութերով ձեր ընկերների հետ կամ ուսումնական խումբ սկսեք:
- Մենք մշտապես ավելացնում ենք նոր նյութեր:

## Դիտեք: Կարդացեք: Լսեք:

Հետազոտեք նյութերի ընդարձակ դարան, որն ընդգրկում է դասընթացներ, էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր և ավելին, որոնք կարող եք դիտել, կարդալ և լսել:









## Աճ ամենակարևոր բնագավառներում

Հետազոտեք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ընտանիքը, առողջ փոխհարաբերությունները, ձեր կյանքի նպատակը, ազատագրում պոռնոգրաֆիայից, ձեր հավատքը կառուցելը, Աստծո ձայնը լսելը, ձեր գործը ղեկավարելը և ավելին:

## Ձեր աճի ուղին

**MessengerX**-ի նպատակն է օգնել ձեզ, որ անեք հաջորդ քայլը ձեր կյանքում: Մենք ստեղծել ենք աշակերտական ուղի՝ ազդեցիկ գործիքներով, որոնք կօգնեն ձեզ մնալ այդ ուղու վրա:



## Ավելի շատ հնարավորություններ, որոնք ձեզ դուր կգան

- Պարզ և հեշտ գործիքներ, որոնք կօգնեն ձեզ կիսվել այս նյութերով և նույնիսկ ուսումնական խմբեր սկսել:
- «Chromecast» և «AirPlay»՝ ձեր սիրելի սմարթ հեռուստացույցերով դիտելու համար:
- Պահպանե՛ք ձեր առաջադիմությունը ձեր բոլոր սարքերի վրա: Պահպանե՛ք ձեր նախընտրելի նյութերը ձեր գրադարանում՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնե՛ք նյութերը ձեր սարքի վրա՝ անցանց դիտման համար:
- Խելացի որոնում և զտում՝ գտնելու համար հենց այն, ինչ փնտրում եք:
- Ինքնաշխատ կերպով նվագարկե՛ք աուդիո գրքերի, աուդիո Աստվածաշնչերի և նույնիսկ երկրպագության երգերի հաջորդական գլուխներ՝ ձեր լեզվով:

# **MessengerX** - Այնքան հեշտ, որքան 1-2-3-ը




**1** Ներբեռնեք **MessengerX** հավելվածը «App Store»-ից և «Google Play»-ից

**2** Ստեղծեք հաշիվ և օգտվեք հավելվածից ձեր լեզվով

**3** Որոնեք, կարդացեք, դիտեք, լսեք և ներբեռնեք ձեր նախընտրելի նյութերը և կիսվեք դրանցով

## Աշակերտ դարձեք և աշակերտեք

Լինելով **MessengerX**-ի մաս, դուք կօգնեք մեզ տրամադրել այս թարգմանված նյութերն աշխարհով մեկ գտնվող մարդկանց:

***Որովհետև յուրաքանչյուրն արժանի է իմանալու:***

**MessengerX.com**

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

</> Հասանելի է բոլոր բրաուզերներով

# Ուժեղ՝ պայքարի մեջ

I

# ՈՒՇԱԴԻՐ ԵՎ ԱՐԹՈՒՆ

*«Արթո՛ւն եղեք, հսկո՛ւմ արեք, որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա»:*

Ա ՊԵՏՐՈՍ 5.8

Մեր թշնամին գաղտագողի մոտենում է՝ հույս ունենալով բռնել մեզ թմրած և անտեղյակ վիճակում: Մեկ այլ թարգմանության մեջ գործածվում են *սթափ* և *զգոն* բառերը (KJV): «Սթափ» բառի հականիշը «հարբածն» է: Հարբած մարդիկ անտեղյակ են, թե ինչ է կատարվում իրենց շուրջը: Նրանց ընկալումները և հեռանկարները մշուշոտ են, ինչի հետևանքով նրանք դանդաղ են արձագանքում, և խեղաթյուրվում է նրանց դատողությունը: Լինել զգոն և արթուն նշանակում է լինել զգույշ և աչալուրջ, սթափ և ուշադիր:

Ա Պետրոսի թղթում ասված խոսքը սատանային համեմատում է մռնչացող առյուծի հետ, որը հեշտ զոհի է փնտրում՝ խժռելու համար: Նա բառացիորեն չի խժռում մեզ. նա մեզ կուլ է տալիս աննկատ ձևերով: Թեև դրանք պակաս ակնհայտ են, սակայն պակաս վտանգավոր չեն: Նա կուլ է տալիս մեր ուրախությունը, խաղաղությունը, հանգստությունը, ուժը, ինչպես նաև հարձակվում է մեր առողջության, փոխհարաբերությունների և մտքերի վրա: Նա մեղադրանքներ է հնչեցնում՝ շփոթություն ստեղծելու համար: Կարծում եմ, որ Աստված օգտագործել է քաղցած առյուծի սարսափեցնող պատկերը, որպեսզի ցույց տա, թե որքան վճռական և հետևողական է սատանան իր հետապնդման մեջ: Նա հեշտությամբ զգում է

վիրավորանքի և դառնության հոտը, ինչպես առյուծն է նշմարում իր որսին:

Առյուծին գրավում է արյունը, իսկ այն հոսում է մեր վերքերից: Մենք չպետք է թույլ տանք, որ մեր վերքերը շարունակեն արյունահոսել՝ անտեսելով ցավը և մակերեսորեն ծածկելով դրանք: Արթուն և զգոն լինել մասամբ նշանակում է մեր վերքերը բերել մեր Հոր առջև՝ բժշկության համար: Նա կկապի և կբժշկի դրանք Իր Սուրբ Հոգու զորությամբ: Լինենք զգոն նույնիսկ այն վերքերով, որոնք փոքր և անվտանգ են թվում: Երբ վաղ ենք լուծում դրանց հարցերը, կարողանում ենք պահպանել մեր հեռանկարը և ողջամտությունը գիշերային հսկողության համար:

*Հա՛յր, օգնի՛ր, որ փեղյակ լինեմ թշնամու գաղփագողի գործողություններին: Օգնի՛ր, որ իմ վերքերը ջանասիրաբար բերեմ Քեզ մոտ, որպեսզի Դու բժշկես դրանք: Պաշտպանի՛ր ինձ, բժշկի՛ր ինձ և սովորեցրո՛ւ, որ պատերազմելիս լինեմ և՛ զուսպ, և՛ արթուն:*

*Ես ուխտում եմ,*

ԵՐԲ ԶԳՈՆ ԵՄ ԵՎ ՆԿԱՏՈՒՄ ԵՄ
ՑԱՆԿԱՑԱԾ ԱՆՊԱՏՇԱՃ ԲԱՆ:

2

# ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՍԵՌԵՐԻ ՄԻՋԵՎ

*«Եվ ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը և քո սերնդի և նրա սերնդի մեջտեղը. նա քո գլուխը ջախջախի, և դու նրա գարշապարը խայթես»:*

ԾՆՆԴՈՑ 3.15

Ամենուրեք կարծես պայքար է ընթանում տղամարդկանց և կանանց միջև: Թույլ, բարկացած տղամարդիկ և վիրավոր, բարկացած կանայք միմյանց են մեղադրում իրենց ցավի համար, և յուրաքանչյուրը ցանկանում է, որ մյուսը ճիշտ վարվի: Բայց ո՛չ տղամարդիկ, ո՛չ կանայք չեն կարող բժշկել այս ցավերը… Միայն Աստված կարող է վերադարձնել մեզ մեր երազանքների պարտեզ:

Այն ժամանակից, երբ օձը պարտեզում թիրախավորեց Եվային, կնոջ և տղամարդու միջև կանխորոշված պայքարը դեռ մոլեգնում է (Ծննդոց 3.15): Աստծո՛ դուստրեր, Ադամի երկրային որդիները չեն կարող փրկել ձեզ այս օձից… Դուք երկնային Իշխանի կարիքն ունեք: Օձի նպատակը մշտապես նույնն է եղել՝ զրկել Եվայի դուստրերին արժանապատվությունից, ուժից և պատվից և, դա անելով, դարձնել նրանց անզոր: Իսկ երբ կանայք զրկվում են իրենց արժանապատվությունից և նվաստացվում, տղամարդիկ ամաչում են, որովհետև կինը տղամարդու փառքն է (Ա Կորնթացիների 11.7):

Ուզում եմ, որ ունենաք քաջություն՝ տեսնելու այս պայքարը. օձը զրկում է ձեզ զորությունից, արժանապատվությունից և հագուստից: Դուք պետք է տեսնեք սա և զայրանաք: Որովհետև

միայն այդ ժամանակ կլինեք բավականաչափ խիզախ՝ կռվելու ձեր իսկական թշնամու դեմ և լիովին նվիրվելու հավատարիմ ու ճշմարիտ Թագավորին: Այդ ժամանակ կգտնեք շքեղ հանդերձներ ձեր մերկությունը ծածկելու համար: Դուք կգիտակցեք, որ մենք պատերազմում ենք ոչ թե տղամարդկանց կամ մեր ամուսինների, այլ մեր հոգու թշնամու դեմ: Մենք պետք է արթնանանք մղձավանջից և աղաղակենք երազանքի վերականգնման համար:

Ես խոսում եմ Հոգու խորքից դուրս եկող այս աղաղակի մասին: Դուք փափագում եք ավելի խոր սեր, մտերմություն և հաղորդակցություն, քան տղամարդը կարող է տալ ձեզ: Դուք փափագում եք ավելի ապահով ապաստան, քան այն, որ երկրի վրա է: Դուք աղաղակում եք երկնային Իշխանի սիրո համար: Եվ ես ուզում եմ մի գաղտնիք ասել... Նա նույնպես հուսահատորեն ձեզ է փափագում: Հենց Նա է տնկել այս ցանկության սերմը ձեր սրտում, և միայն Նա կարող է իրագործել ձեր բաղձանքները:

Մենք մշտապես կհիասթափվենք բավարարված լինելու մեր որոնումներում, եթե շարունակենք փնտրել այն սխալ տեղերում: Տղամարդիկ ձեր խնդիրը չեն, ոչ էլ ձեր պատասխանն են: Մենք պետք է ուղղենք մեր աչքերը դեպի երկինք, որովհետև մեր օգնությունն Աստծուց է՝ երկինքն ու երկիրը Ստեղծողից (Սաղմոս 121.1, 2): Միայն այնտեղ և միայն այդ ժամանակ կգտնենք մեր ուրախության աղբյուրը և կվերականգնենք մեր ուժն ու պատիվը:

*Հա՛յր, երբ գայթակղվում եմ կռվելու սխալ թշնամիների դեմ կամ բավարարվածություն եմ փնտրում սխալ փեղերում, հիշեցրո՛ւ, որ Քեզ նայեմ: Դու ես Իմ Փրկիչը, իմ ուրախության աղբյուրը:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆԸ ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆԵՐԻ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐԻ ՄԻՋԵՎ:

3

# ՊԱՅՔԱՐ ՉՆԵՐՄԱՆ ԴԵՄ

*«…մի թագավոր մարդու, որ ուզեց իր ծառաների հետ հաշիվ տեսնել: Եվ երբ սկսեց հաշիվը տեսնել, նրա մոտ մեկը բերվեց՝ տասը հազար քանքար պարտական: Բայց որովհետև չուներ վճարելու, նրա տերը հրամայեց, որ նա և նրա կինն ու նրա որդիները և ամեն ինչ, որ ուներ, ծախվեն, և պարտքը վճարվի: Եվ ծառան էլ երեսի վրա ընկնելով երկրպագում էր նրան և ասում. «Տե՛ր, համբերի՛ր ինձ համար, և բոլորը կհատուցեմ քեզ»: Տերն էլ գթաց այն ծառայի վրա. նրան արձակեց և պարտքն էլ շնորհեց նրան»:*

ՄԱՏԹԵՈՍ 18.23-27

Ներումը բժշկող գործողություն է: Այն ազատում է մեզ դառնությունից և մեղքի զգացումից: Բայց ներումը նաև բանալի տարր է հոգևոր պատերազմում: Ձեր իրական պայքարը ոչ թե ձեզ վիրավորողի, այլ ձեր հոգու հավիտենական թշնամու դեմ է: Երբ ներում ենք, զրկում ենք նրան իր զենքերից, որովհետև նրանք, ովքեր ապրում են չներման մեջ, ենթակա են հարձակման:

Այսօրվա սուրբգրային հատվածը մեզ լրացուցիչ պատկերացում է տալիս չներելու մութ կողմերի մասին: Զգացե՛ք ձեզ ծառայի փոխարեն Պատկերացրե՛ք այն սարսափը, երբ ձեզ տանում են Թագավորի մոտ, որպեսզի հաշիվ տաք այն պարտքի համար, որ չեք կարող վճարել: Բոլորովին անօգնական և անհույս՝ երեսնիվայր ընկնում եք և աղաչում նրան համբերել՝ խոստանալով, որ ինչ-որ կերպ և ինչ-որ ժամանակ ամբողջը կհատուցեք: Բայց ձեր պայմաններին համաձայնելու

փոխարեն Թագավորը ողորմություն է ցուցաբերում: Իմանալով, որ երբեք չեք կարող հատուցել իրեն՝ նա ջնջում է ամբողջ պարտքը: Դու ազատվում եք Ձեր անտանելի բեռից: Դուք հիացած եք Թագավորի բարությամբ:

Թագավորի ցուցաբերած ողորմության օրինակին հետևելու փոխարեն դուք հիշում եք մարդկանց, որոնք պարտական են ձեզ: Գտնում եք նրանց և պահանջում, որ վճարեն պարտքը, թեև նրանք նույնքան անհուսալի վիճակում են, որքան դուք էիք մի ժամանակ (Մատթեոս 18.28-31): Մատթեոսի առակում ներված ծառան հենց այսպես է վարվում, և երբ Թագավորն իմանում է, հայտարարում է. «...Չա՛ր ծառա, ես այն բոլոր պարտքը շնորհեցի քեզ, որովհետև դու աղաչեցիր ինձ: Պետք չէ՞ր, որ դու էլ քո ծառայակցին ողորմեիր, ինչպես որ ես էլ քեզ ողորմեցի» (Մատթեոս 18.32, 33):

Առակում Թագավորը մեր երկնային Հայրն է, մենք ծառան ենք, մեր քրիստոնեական եղբայրներն ու քույրերը մեր ծառայակիցներն են, և մեր հոգու թշնամին ուրախությամբ կատարում է դահճի դերը: Երբ չենք ներում, ուրիշներին բանտարկում ենք մեղքի և դատապարտության շղթաներով, ինքներս էլ հանձնվում դահիճներին, որպեսզի վճարենք այն, ինչ գիտենք, որ երբեք չենք կարող վճարել: Կարծում եմ, սա նկարագրում է դժոխքը երկրի վրա: Բոլորս հանդիպել ենք մարդկանց, որոնց տանջել է հենց այն, ինչը չեն ներել ուրիշների մեջ: Երբ այսպես ենք վարվում, վերջին հաշվով թշնամու գործն ենք անում: Ժամանակն է միմյանց շղթաներն արձակելու:

*Տե՛ր, ցո՛ւյց փուր յուրաքանչյուրին, ում բանտարկել եմ իմ չներմամբ: Ես ընտրում եմ արձակել նրան ճիշտ այնպես, ինչպես Դու արձակեցիր ինձ:*

*Ես ուխտում եմ,*

ԵՐԲ ՆԵՐՈՒՄ ԵՄ, ԻՆՉՊԵՍ ԻՆՁ ՆԵՐԵԼ Է ԹԱԳԱՎՈՐԸ:

4

# ՁԵՐ ԱՊԱՍՏԱՆԸ

*«Որովհետև գրված է, թե Իր հրեշտակներին կիրամայի քեզ համար, որ քեզ պահեն»:*

ՂՈՒԿԱՍ 4.10

Հաճախ ես մոռանում եմ, որ ունեմ հրեշտակային պաշտպանություն, բայց չպետք է մոռանամ: Ինձ դուր է գալիս այն նկարագրությունը, որ Դավիթը տալիս է սաղմոսներում. «Ողորմի՛ր ինձ, ո՛վ Աստված, ողորմի՛ր ինձ, որովհետև Քեզ է հուսացած իմ անձը, և ես Քո թևերի շուքին կհուսամ, մինչև որ չարիքն անցնի» (Սաղմոս 57.1):

Աստված մեր պաշտպանությունն է: Ես վաղուց հասկացել եմ, որ ինձ պաշտպանելու իմ կարողությունը շատ սահմանափակ է: Մենք պետք է վազենք Աստծո մոտ: Ցա՛ծ դրեք ձեր հեռախոսը, երբ ձեզ նենգաբար մեղադրել են, զրպարտել կամ պարզապես ստեր են ասել ձեր մասին. անջատե՛ք ձեր համակարգիչը և վազե՛ք ու մտե՛ք Նրա թևերի շուքի տակ: Ես փակվում եմ սենյակում, միացնում եմ երաժշտությունը և երկրպագում Աստծուն: Երկրպագությունը մշտապես հրաշալի արձագանք է, երբ չգիտեք ինչ անել: Երբ ջախջախված եք զգում, անկախ հանգամանքներից, կարող եք գտնել ապաստան Նրա ներկայության մեջ:

Թույլ մի՛ տվեք, որ թշնամին ձեզ ծուղակը գցի՝ ստիպելով պաշտպանվել կամ պաշտպանվելու փորձ անել. դուք կձախողվեք: Աստված հրավիրում է, որ թաքնվենք Իր մեջ, մինչև որ փոթորիկն անցնի, և կարողանանք հստակ տեսնել:

Մյուս բոլոր ապաստանները Նրա հովանուց դուրս են: Վրեժխնդրությունը և զայրույթը երբեք ապաստան չեն, թեև

կստեն և կասեն, թե այդպիսին են: Այս կեղծ ապաստանները պետք է մի կողմ դնել, որպեսզի մտնեք Աստծո ներկայության մեջ:

Պաշտպանողական կեցվածքը և ինքնապավինումը իսկապես թույլ ապաստան են Նրա համեմատ: Փախուստը, ինքնաբուժությունը կամ խուսափելը միայն ժամանակավոր թեթևացում են, և բոլոր խորհուրդները, ինքդ քեզ օգնելը կամ «ապացուցված լուծումները» աշխարհում չեն կարող համեմատվել Նրա հետ:

Ուստի, երբ զգում եք, որ չարիքը մոտենում է ձեզ, և ծուղակն եք ընկած, լցվե՛ք խանդավառությամբ: Աստված պատրաստվում է հայտնվելու և անելու այն, ինչ դուք չեք կարող: Աստված ոչ միայն հրահանգներ է տալիս Իր հրեշտակներին ձեր վերաբերյալ, այլև Իրեն է հասանելի դարձնում: Երբ թշնամին մոլեգնում է, մենք ունենք այս երաշխիքը Երկրորդ օրինաց 3.22-ում. «Նրանցից չվախենաք, որովհետև ձեր Եհովա Աստված Ինքը կպատերազմի ձեզ համար»:

Երբ պայքարը չափազանց ծանր է ձեզ համար, մոտեցե՛ք Նրան:

*Տե՛ր, Դու ես իմ պաշտպանությունը: Ես կմոտենամ Քեզ և կերկրպագեմ՝ վստահելով, որ Դու կկռվես իմ անունից, երբ ես ճնշված եմ:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՊԱՀՈՎ ԵՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՍՏԾՈ ԹԵՎԵՐԻ ՇՈՒՔԻ ՏԱԿ:

5

# ՄԵՆՔ ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋ ԵՆՔ

*«Որովհետև մեր պատերազմը արյան և մարմնի դեմ չէ, այլ իշխանությունների և պետությունների դեմ, այս աշխարհի խավարի աշխարհակալների դեմ, այն չար հոգիների դեմ, որ երկնավորների մեջ են»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.12

Դշնամին փորձում է խորամանկությամբ ստիպել մեզ մտածել, որ մենք մարտնչում ենք ոչ թե խավարի անտեսանելի ուժերի, այլ մարդկանց դեմ, որոնց տեսնում ենք: Պողոսի նպատակը մեզ վախեցնելը չէ, այլ տեղյակ պահելը, թե ինչ է իրականում կատարվում: Գոյություն ունի խավարի մի ամբողջ տիրույթ, որի դեմ երբեք չէինք կարող պայքարել մեր ուժերով: Պողոսը շարունակում է. «Սրա համար Աստծո սպառազինությո՛ւնն առեք, որ կարող լինեք հակառակ կենալ չարության օրում և, ամենը կատարելով, հաստատ կանգնել» (Եփեսացիների 6.13):

Աստված արդեն ապահովել է այն ամենով, ինչ անհրաժեշտ է հաստատ կանգնելու համար: Այն փաստը, որ Պողոսը կրկնում է սպառազինությունը հագնելու կոչը, ստիպում է ինձ մտածել, որ նա չի ցանկանում՝ մենք անփույթ վարվենք մեր զենքերի հետ: Նա չի ցանկանում, որ մենք պատկերացնենք, թե կարող ենք դուրս գալ կիսահագնված և անզեն և ունենալ ուժ՝ դիմադրելու համար: Ի՞նչ է նշանակում հաստատ կանգնել: Ընդունել վճռական կեցվածք, որը հրաժարվում է նահանջելուց: Պողոսը

շարունակում է. «Արդ հաստա՛տ կանգնեք՝ ձեր մեջքերը ճշմարտությամբ գոտևորված և արդարության զրահը հագած և ձեր ոտները կոշիկ հագած խաղաղության ավետարանի պատրաստությունով» (Եփեսացիների 6.14, 15):

Մենք կանգնում ենք՝ ամբողջությամբ գոտևորված ճշմարտությամբ, մեր սիրտը և կենսական կարևոր օրգանները ծածկված են Քրիստոսի արդարությամբ, և մեր ոտքերը պատրաստ են տանելու խաղաղության ավետարանը: Մենք ապրում ենք մի աշխարհում, որը խաղաղության կարիք ունի: Ճշմարտությունը և արդարությունը խաղաղության նախակարապետներն են: Ճշմարտությունը զիջելը հանգեցնում է մեր դիրքերը կորցնելուն և թուլանալուն: Մենք ուժեղ ենք, երբ մարտնչում ենք խաղաղության դիրքից: Քրիստոսի մեջ խաղաղությունը դառնում է միջոց՝ փոթորիկները հանդարտեցնելու, սիրտը բժշկելու և հոգին հանգստացնելու համար:

*Երկնայի՛ն Հայր, սովորեցրո՛ւ, թե ինչպես պայքարեմ Քո մեջ ունեցած խաղաղության դիրքից: Երբ կարդում եմ Քո Խոսքը, հոգիս ամրացրո՛ւ ճշմարտությամբ, որպեսզի փոխզիջման չգնամ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԿԱՆԳՆՈՒՄ ԵՄ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

6

# ՎԱՀԱՆՆԵՐ ԵՎ ՆԵՏԵՐ

*«Եվ ամենի վրա հավատքի վահա՛նն առեք, որով կարող լինեք չարի ամեն կրակոտ նետերը հանգցնել»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.16

Մեզ տրվել է վահան, որը պաշտպանում է բոլոր կրակոտ նետերից, որ թշնամին արձակում է մեր ուղղությամբ: Պողոսն անվանում է դա հավատքի վահան: Եբրայեցիների 11.1-ն ասում է. «Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է»: Անշուշտ, մենք չենք տեսնում, թե ինչպես է այս հավատքը պաշտպանում մեզ, բայց կարող ենք զարգացնել այն: Հավատքը Աստծո Խոսքը լսելուց է և այն ուսումնասիրելուց: Ես հավատքը պատկերացնում եմ որպես պաշտպանական դաշտ: Որքան աճում է մեր հավատքը, այնքան մենք պաշտպանված ենք: Սկզբում հավատքը կարող է լինել միջոց, որով միայն ստանում ենք, բայց այն մշտապես պետք է աճի և դառնա միջոց, որով նաև տալիս ենք:

«Եվ փրկության սաղավա՛րտն առեք և Հոգու սուրը, որ Աստծո խոսքն է» (Եփեսացիների 6.17): Փրկությունը սաղավարտն է, որ ծածկում է մեր միտքը: Երբ նոր էի փրկվել, գլխումս սարսափելի մտքեր էին ծագում: Ես հետ էի թռչում սարսափից՝ մտածելով, թե որտեղից են դրանք: Փրկվելուց հետո սկսեցի զանազանել այն մտքերը, որոնք իմը չէին: Փրկությունը խաղաղություն է բերում մեր մտքին, և երբ ենթարկվում ենք անհանգստացնող

կամ տանջող մտքերի հարձակմանը, վերցնում ենք մեր սուրը: Աստծո Խոսքը Հոգու սուրն է: Ինչպես Հիսուսը վարվեց սատանայից փորձվելիս, այնպես էլ մենք խոսում ենք մեր հոգու թշնամուն այն, ինչ գրված է: Երբ նա հարձակվում է մեր խաղաղության վրա, մենք պատասխանում ենք Եսայի 26.3-ում գրված Աստծո խոստումով. «Հաստատ միտքը պահում ես խաղաղ խաղաղությունով, որովհետև Քեզ է հուսացած»:

*Երկնայի՛ն Հայր, շնորհակալությո՛ւն հավատքի պարգևի համար, որ պաշտպանում է ինձ թշնամու հարձակումից, իմ մտքի խաղաղության և Քո Հոգու սուրի համար, որ իմ ձեռքում է:*

*Խոստովանում եմ,*

ՔԱՆԻ ՈՐ ԱՃՈՒՄ ԵՄ ՀԱՎԱՏՔԻ ՄԵՋ՝ ԿԱՐԴԱԼՈՎ ԵՎ ԽՈՍԵԼՈՎ ԽՈՍՔԸ ԵՎ ԱՊՐԵԼՈՎ ՆՐԱՆՈՎ:

7

# ԻՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

*«Որովհետև թեև մարմնով ենք վարվում, բայց մարմնավորապես չենք զինվորություն անում»:*

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 10.3

Մենք ապրում ենք երկրի վրա, բայց չենք կարող պատերազմել երկրային միջոցներով: Հարցն այն չէ, թե արդյոք մենք կպայքարենք, այլ այն, թե ինչպես կպատերազմենք: Այս տարբերությունն ամենից լավ արտացոլվում է պայքարի մեր շարժառիթի կամ «ինչո՞ւ» հարցի մեջ: Մենք մշտապես պետք է պայքարենք *հանուն* ինչ-որ բանի, այլ ոչ թե պարզապես ընդդեմ ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի: Մենք նաև գիտենք մի վաղեմի ճշմարտություն, որը հասու չէ նրանց, ովքեր պատերազմում են այս աշխարհի կանոններով. մարդիկ երբեք մեր իսկական թշնամին չեն: Գիտեմ, որ կան ժամանակներ, երբ այս ճշմարտությունը սուտ է թվում: Յուրաքանչյուրս կարող ենք տալ մարդկանց անուններ, որոնք ցավ են պատճառել մեզ: Բայց Աստված սիրում է մարդկանց: Հիսուսը եկավ, որ փրկի նրանց, հետևաբար մենք երբեք չպետք է մարտնչենք նրանց դեմ: Մենք պատերազմում ենք գերիներին ազատելու համար, ոչ թե կռվում ենք նրանց դեմ: Մենք հարձակվում ենք ոչ թե մարդու, այլ նրան գերի պահող բերդերի վրա: Ահա պատճառը. «Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու…» (Բ Կորնթացիների 10.4):

Մեզ վստահվել են աստվածային զորության զենքեր, որոնք

այս աշխարհի զենքերի ճիշտ հակառակն են: Քանի որ դրանք ավելի հզոր են, մենք պետք է ավելի զգույշ լինենք: Երբեք մի՛ մոռացեք, որ մեր խոսքերը կարող են օրհնել կամ անիծել, հետևաբար որքան ավելի մեր գործողությունները կարող են օրհնել կամ անիծել: Այս աշխարհի զենքերը կարող են սպանել, մինչդեռ մեր զենքերը կյանք են տալիս: Աշխարհիկ զենքերը բաժանում են մարդկանց, ազգերին և մշակույթները, մինչդեռ մեր աղոթքի զենքերը միացնում են մեզ Նրա թագավորության ներքո: Երկրային զենքերը նախատեսված են վիրավորելու և խեղելու նրանց, ում տեսնում ենք որպես հակառակորդների, մինչդեռ մեր երկնային սրերը բաժանում են ճշմարտությունը ստից, որպեսզի ճանապարհ բացեն բժշկության և վերականգնման համար: Այս աշխարհի զենքերը ստեղծել են մարդիկ՝ ուրիշներին վախեցնելու և սարսափահար անելու համար, մինչդեռ մեր զենքերն արարվել են երկնքում, որպեսզի ազատ արձակեն և զորացնեն վախեցած գերիներին՝ տալով նրանց հնարավորություն քայլելու իրենց աստվածային կոչման մեջ: Մենք հարձակվում ենք բերդի վրա՝ գերիներին ազատելու համար:

*Երկնայի՛ն Հայր, ամեն անգամ, երբ հայտնվեմ պատերազմի մեջ, ցո՛ւյց տուր, թե իրականում ինչի համար եմ պայքարում: Սո՛ւրբ Հոգի, մշտապես հիշեցրո՛ւ, որ ես պետք է հարվածեմ բերդին, ոչ թե վիրավորեմ գերիներին:*

*Ես ուխտում եմ,*

ԵՐԲ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՄ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

8

# ՊԱՅՔԱՐԵԼ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ

*«… Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում»:*

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 1.5

Հեսուի գրքում կարդում ենք Աստծո ժողովրդի և նրա թշնամիների միջև կատաղի ճակատամարտի պատմությունը: Տերը կռվում էր իսրայելցիների հետ: Հեսուն՝ նրանց առաջնորդը, հավանաբար որոշելով, որ պայքարը շարունակելու համար իրենց լույս է անհրաժեշտ, ասում է. «…Արեգա՛կ, Գաբավոնում կանգնի՛ր, և, Լուսի՛ն, Այեղոնի ձորում կանգնի՛ր»: Աստվածաշունչն ասում է. «Եվ արեգակը կանգնեց, և լուսինն իր տեղը մնաց, մինչև որ ժողովուրդը իր թշնամիներից վրեժ առավ: …արեգակը երկնքի մեջտեղում կանգնեց և չշտապեց մտնելու մեկ կատարյալ օրի չափ: …Տերը պատերազմեց Իսրայելի համար» (Հեսու 10.12-14):

Ակնհայտորեն այս մարտում բացակայող տարրը լույսն էր, և Աստված ապահովեց այն հրաշքով: Արեգակի լույսի ներքո նրանք կարողացան հստակ տեսնել իրենց դաշնակիցներին և թշնամիներին: Բայց մթության մեջ հեշտ է թշնամուն շփոթել բարեկամի հետ և խախտել շարքերը: Նույն կերպ մեր հոգևոր պատերազմում մեզ անհրաժեշտ է լույս՝ պայքարելու համար: Աստված առատությամբ առաջարկում է այդ լույսը: Նա է մեր արեգակը երկնքում, որ ցրում է այն խավարը, որը շփոթեցնում, խճճում է մեզ և խլում մեր ուժերը: Մինչ մեր թշնամին ծաղկում է

խավարի մեջ, մենք ծաղկում ենք և ունենք հաղթանակ Աստծո սիրո և ճշմարտության լույսի մեջ: «Որովհետև ահա խավարը ծածկել է երկիրը, և մառախուղը՝ ազգերը. բայց քեզ վրա ծագում է Տերը, և Նրա փառքը երևում է քեզ վրա» (Եսայի 60.2): Ինչպես Իսրայելի զավակներին չծածկեց խավարը, այնպես էլ մեզ չի վերահսկում մեզ շրջապատող խավարը, որովհետև մեզ վրա ծագում է Տերը՝ Աստծո Որդին: Իսրայելի բանակը հավանաբար կարծում էր, որ անհնար է կանգնեցնել մայրամուտը, բայց այն, ինչ անհնար է մարդկանց համար, հնարավոր է Աստծո համար: Մեր Աստված անում է անհնարինը: Նա պատասխանում է. «Ես գիտեմ, որ դու տեսնում ես, թե ինչպես է խավարը ծածկում երկիրը և մարդկանց, բայց մի՛ վախեցիր, որովհետև Ես եմ քո լույսի ծածկոցը»:

Երբ պատերազմում եք, մի՛ նայեք ձեզ շրջապատող խավարին: Հիշե՛ք այն լույսը, որ ձեր մեջ է: Աստված շարունակում է լուսավորել ձեզ և ցրել ստվերները, նույնիսկ եթե դրա համար պահանջվեն մի ամբողջ օր և մի ամբողջ գիշեր:

*Տե՛ր Աստված, ես զորանում եմ Քո լույսով, որ իմ ներսում է: Լուսավորի՛ր ինձ, մինչև մարտն ավարտվի:*

*Ես ուժեղ եմ.*

ԵՐԲ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՄ, ՈՐՈՎՀԵՏԵՎ
ԱՍՏՎԱԾ ԻՄ ԼՈՒՅՍՆ Է:

9

# ԼԻՆԵԼ ՎՃՌԱԿԱՆ

*«...Դուք կացե՛ք, կանգնե՛ք և կտեսնեք Տիրոջ փրկությունը ձեզ հետ»:*

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20.17

Կյանքի ճանապարհորդության մեջ դուք կցանկանաք հանձնվել: Յուրաքանչյուրիս կյանքում լինում է ժամանակ, երբ ուզում ենք պարզապես պառկել և ոչինչ չանել: Բոլորս էլ սայթաքում ենք և ձախողվում, բայց հաղթանակ են տանում նրանք, ովքեր ունակ են կրկին ոտքի կանգնելու: Շատ մարտերում հաղթում ենք՝ պարզապես հակառակորդից ավելի երկար դիմանալով: Բոլորս էլ կտապալվենք: Դուք չեք կարող խուսափել դրանից, բայց ձեզնից է կախված՝ կկանգնեք կրկին ոտքի, թե ոչ: Վճռե՛ք հաստատակամ լինել հավատքում, նույնիսկ երբ ուժեղ չեք զգում: Ձեր զգացմունքները կսահմանափակեն ձեզ, որովհետև իրականում դուք չգիտեք, թե ինչի եք ընդունակ, մինչև չդրսևորեք ձեզ: Երբ հաստատ կանգնում ենք, մեր Տերը պատերազմում է մեզ համար: Դժվար կլինի: Ե՞րբ սկսեցինք պատկերացնել, թե առանց պայքարի կարող է հաղթանակ լինել: Կա՞ պայքար, որից շարունակ հետ եք քաշվում: Կա՞ հոգևոր տարածք, որից հետ եք կանգնել: Աստված կանչում է, որ վերադառնաք ձեր դիրքեր: Նա, ով խոստացել է, հավատարիմ է: Աստված ուժեղ է և ուզում է, որ դուք էլ ուժեղ լինեք: Նա կհայտնի Իր ուժը ձեզ, որպեսզի կարողանա հայտնել այն ձեր միջոցով: Երբ հոգնած եք, երբ ուզում եք կանգ առնել, հիշե՛ք, թե ինչ է Նա ասում Բ Մնացորդաց 20.17-ում.

«Դուք չեք պատերազմելու այս անգամ. դուք կացե՛ք, կանգնե՛ք և կտեսնեք Տիրոջ փրկությունը ձեզ հետ, ո՛վ Հուդա և Երուսաղեմ. մի՛ վախեցեք և մի՛ զարհուրեք, էգուց նրանց դիմաց դո՛ւրս եկեք, և Տերը ձեզ հետ է լինելու»:

Տերը պատերազմում է մեր փոխարեն: Երբեմն հաղթանակը գալիս է, երբ պարզապես շարունակում ենք մնալ մեր դիրքում: Մենք հաղթում ենք, երբ շարունակում ենք սիրել, տալ, ծառայել և սովորել: Մեկ այլ մարտում հաղթում ենք երգով: Երբ երգում ենք Աստծո Խոսքը, երգում ենք Հոգու սրով: Երբ աղոթում ենք Նրա խոստումներով, երգում ենք աղոթքով: Որոշ մարտերում հաղթում ենք լռությամբ և Նրան անձնատուր լինելով: Մենք այնքան վստահ ենք, որ Աստված բարի է և բարիք է գործում, որ պարզապես վստահաբար ժպտում ենք՝ գիտենալով, որ հաղթանակը Նրանն է: Երբ դուրս ենք գալիս Նրա զորությամբ, կարող ենք դիմակայել կյանքի հարվածներին՝ հիասթափությանը, հյուծվածությանը կամ բացահայտ հակառակությանը: Մեզ ասվում է. «Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ հետ եմ, մի՛ վեհերիր, որովհետև ես քո Աստվածն եմ. Ես զորացրել եմ քեզ, նաև օգնել եմ քեզ, նաև քեզ հաստատել եմ Իմ արդարության աջով» (Եսայի 41.10):

*Ամենակարո՛ղ Աստված, ես կմնամ Քեզ հավատարիմ, մինչ Դու կպատերազմես իմ փոխարեն: Ես ընտրում եմ վճռականությունը և հաստատակամությունը ամեն օր, մինչև մարտը պսակվի հաղթանակով:*

*Ես ասում եմ,*

ԵՐԲ ԿԱՆԳՆՈՒՄ ԵՄ ԱՅՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՄԲ, ՈՐ ԻՄ ՏԵՐ ԱՍՏՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ Է ԻՄ ՓՈԽԱՐԵՆ:

# Ուժեղ՝ չարիքի մեջ

ı

# ՁԵՐ ԱՆՑՅԱԼԸ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ ՉԷ

*«Հիսուսն էլ վեր նայեց… և ասաց նրան. «Ո՛վ կին, ո՞ւր են [քեզ ամբաստանողները]. ոչ ոք քեզ չդատապարտե՞ց»: Նա էլ ասաց. «Ո՛չ, ո՛վ Տեր»: Եվ Հիսուսն էլ ասաց նրան. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»»:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ 8.10, 11

Չկա մեկը առանց մեղքի, և շատ հաճախ մարդիկ ինքնահաստատվելու համար մտերմանում են տղամարդկանց, կրոնի կամ աշխարհի հետ: Բայց դրանք մշտապես կհիասթափեցնեն մեզ: Ի վերջո մեղքը և կրոնը կդավաճանեն մեզ: Հովհաննեսի 8-րդ գլխում Հիսուսը արժանապատվություն, զորություն և պատիվ շնորհեց մի անանուն կնոջ, որը հայտնվել էր հանրության ուշադրության կենտրոնում: Հիսուսը նայեց երևացողից այն կողմ և հրաժարվեց նրա ներկա վիճակը որպես մշտական վիճակ ընդունելուց: Ըստ էության՝ Նա կնոջն ասաց. «Քո անցյալը քո ապագան չէ: Գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր: Մեղքը քո անցյալն էր, բայց բարեպաշտությունը քո ապագան է: Գերությունը քո անցյալն էր, բայց ազատությունը քո ապագան է: Ամոթը քո անցյալն էր, բայց արժանապատվությունը քո ապագան է: Մերկությունը քո անցյալն էր, բայց շքեղության հանդերձը քո ապագան է»:

Հիսուսը շատ ավելին է անում, քան պարզապես այս կնոջը ներելը… Նա նրան ազատ է արձակում: Ազատությունը

սկսվում է ներումից: Երբ ազատվում ենք մեղքի կապանքներից, շնորհքը մեզ առաջ է տանում, որպեսզի մեղքն այլևս ծուղակը չգցի մեզ: Սկզբում Հիսուսը մեզ ողորմություն է ցուցաբերում, այնուհետև զորացնում է շնորհքով: «Որովհետև մեղքը չի տիրի ձեզ վրա. որովհետև օրենքի տակ չեք, այլ շնորհքի տակ» (Հռոմեացիների 6.14):

Ողորմությունը լուծում է այն ամենի հարցերը, ինչ մենք արել ենք, իսկ շնորհքը լիազորում է մեզ՝ վարվելու այնպես, որ պատվենք այն, ինչ Հիսուսն արեց մեզ համար: Աստծո ողորմությունը և շնորհքը տալիս են մեզ զորություն՝ հետևում թողնելու մեղավոր կյանքը և ոտք դնելու Նրա ապագայի և հույսի մեջ:

Մեզ տրվել է շնորհք: Մեր նախկին գերության զորությունը քանդվել է: Ժամանակն է հավատալու Քրիստոսի՝ մեզ ազատողի խոսքերին ավելի, քան շղթաների զորությանը: Դրանց իշխանությունը ձեր կյանքում այնքան մեծ չէ, որքան Նրա իրավունքները ձեր նկատմամբ: Համարձակվե՛ք հավատալ և հետևո՛ւմ թողեք ձեր անցյալի ստվերները:

*Երկնայի՛ն Հայր, շնորհակալությո՛ւն, որ ներում ես ինձ և շնորհում ես ապագա: Ես հավատում եմ Քո՛ լույսի խոսքերին ավելի, քան խավարի ստերին:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՄ ԱՆՑՅԱԼԸ ԻՄ ԱՊԱԳԱՆ ՉԷ:

2

# ՆԵՐՎԵԼ

*«Եվ իրար հետ քա՛ղցր եղեք, գթած՝ իրար ներելով, ինչպես Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.32

Ես զգալի թվով հանցանքներ ու զանցանքներ էի կուտակել, երբ վերջապես դարձա քրիստոնյա: Երբ ամուսինս՝ Ջոնը, առաջնորդեց ինձ փրկության աղոթքի մեջ, ասաց, որ կրկնեմ իր խոսքերը. «Տե՛ր, ես խոստովանում եմ իմ մեղքերը»:

Ես խուճապի մատնվեցի. «Ես չգիտեմ՝ արդյոք կարո՞ղ եմ բոլորը հիշել»: Վախեցա, որ իմ փրկությունը կկորցնեմ իմ վատ հիշողության պատճառով:

«Հարկ չկա, որ անվանես յուրաքանչյուր մեղքը. պարզապես խոստովանի՛ր, որ մեղանչել ես»,- վստահեցրեց Ջոնը: Ես մխիթարվեցի, որովհետև վստահ էի, որ Աստված շատ ավելի լավ էր արձանագրել դրանք, քան ես: Ես գիտեի, որ մեղավոր եմ, և գիտեի, որ ողորմության կարիք ունեմ: Ես ներման կարիք ունեի և ստացա այն Աստծո շնորհքով:

Բայց շուտով իմ քրիստոնեական ընթացքի մեջ հայտնաբերեցի, որ ինքս չեմ ներում այլ քրիստոնյաների կամ, ավելի ճիշտ, իմ ծառայակիցներին: Զգում էի, որ նրանք ներողություն պետք է խնդրեին ինձնից: Ես թույլ էի տալիս, որ այդ մտքերը տանջեին ինձ: Այս ընթացքում հոգևոր պատերազմների մեջ էի: Ասես թիրախ էի. իրականում այդպես էր: Թեև ես քրիստոնյա էի, ընկել էի սատանայի գաղտնի խորհուրդների ծուղակը: Ես շատ ժամանակ էի անցկացնում աղոթքում՝ կապելով և արձակելով, բայց ապարդյուն: Ես կապված էի իմ իսկ պատրաստած

պարաններով: Երբ վերջապես տեսա ճշմարտությունը, հասկացա, որ կարևոր չէր, թե ինչ էին արել ինձ հետ: Կարևոր չէր, որ ես ճիշտ էի, իսկ նրանք՝ սխալ: Կարևորը հնազանդությունն էր Տիրոջ պատվիրանին՝ ներել այնպես, ինչպես ինձ էր ներվել:

Ես ցնցված էի, թե որքան էի մոլորված: Ես մտածում էի, թե այնքա՜ն ճիշտ էի, երբ իրականում այնքա՜ն սխալ էի: Այս գիտակցմամբ հեշտությամբ ներեցի և աղաղակեցի Տիրոջը, որ նորից լվա ինձ Իր ողորմության գետում, և, անշուշտ, Նա արեց դա: Թո՛ւյլ տվեք ասել, ես կապված էի և ազատ արձակվեցի, և ազատ լինելն ավելի լավ է: Որքան էլ դժվար լինի ընդունել, որ սխալ եք, արժե դա անել, որովհետև ազատ լինելն ավելի լավ է:

*Երկնայի՛ն Հայր, բացահայտի՛ր իմ կյանքում եղած ամեն մոլորություն և չներում:*

*Ես ուխտում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆԵՐՈՒՄ ԵՄ ԻՆՔՍ
ԻՆՁ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ:

3

# ԼԻՆԵԼ ԳԹԱՌԱՏ

*«Մարդու իմաստությունը նրան երկայնամիտ կանի, և նրա փառքը հանցանք ներելն է»:*

ԱՌԱԿԱՑ 19.11

Առակաց գրքի հեղինակն ասում է, որ մեր «փառքն» է հանցանք կամ վիրավորանք ներելը: Քրիստոնյայի պատիվը, փառքը, գերազանցությունը և յուրահատկությունը հանցանք ներելն է: Սա Քրիստոսի նման վարվելու մի օրինակ է:

Հնարավոր է ներել վիրավորանքը, անարդարությունը և սպառնալիքը միայն այն դեպքում, եթե առաջին հերթին հանձնվենք մեր Հորը՝ արդար Դատավորին: Հաճախ, երբ մեր երեխաներն ունենում են տարաձայնություններ, փորձում են արթնացնել մեր արդարության զգացումը: «Նա բավականաչափ չի մաքրում» կամ «Նա չափից երկար է համակարգչի առջև նստել»: Նրանք ուզում են, որ իրենց լսեն, և հույս ունեն, որ կհասնեն իրենց ուզածին և կտեսնեն, թե ինչպես է արդարությունը հաղթում: Ջոնը և ես միջամտում ենք և հնարավորինս ծառայում որպես դատավորներ, բայց հաճախ նրանք կարծում են, որ մեր որոշումներն արդար չեն: Սա կարող է հանգեցնել նրան, որ նրանք սկսեն հարցին լուծում տալ իրենց ձևով: Ես չեմ խոսում կոնֆլիկտների լուծման մասին. մենք քաջալերում ենք դա: Բայց սա հատուցում է: «Ինչո՞ւ ես հարվածել եղբորդ»: «Որովհետև նա...»: Դուք արդեն լսել եք ցանկը: Երբ ասում ենք, որ հարվածելու փոխարեն խնդիրը մեզ հայտնեն, հաճախ լսում ենք՝ «Բայց նախորդ անգամ դուք ոչինչ չարեցիք», ինչը նշանակում է՝ «Ինձ դուր չեկավ, թե ինչպես դուք

լուծեցիք հարցը, հետևաբար այս անգամ ռիսկի չեմ դիմի, ինքս կլուծեմ այն»:

Ջոնը և ես առաջինն ենք խոստովանում, որ, որպես ծնողներ, մենք սխալվում ենք, բայց բարի լուրն այն է, որ Աստված չի սխալվում: Նա արդար և կատարյալ Դատավոր է: Նրա որոշումները գուցե այնպիսին չեն կամ այն ժամանակի համար չեն, որ մենք կառաջարկեինք, բայց Նրա ճանապարհները կատարյալ են, իսկ մերը՝ թերի: Երբ ներում ենք հանցանքը, նմանվում ենք վստահող երեխաների, որոնք ասում են. «Հա՛յր, ես գիտեմ, որ կարող եմ վստահել Քեզ: Սա չափազանց դժվար և ցավոտ է ինձ համար: Ես հրաժարվում եմ հակահարված տալուց, փոխարենը դնում եմ այն Քո ոտքերի մոտ և ներում»: Սա թագավորական վարմունք է: Այսպես ենք ընդօրինակում Աստծո Որդուն մեր երկրային կյանքում: Հիսուսն Իր աշակերտներին ասաց. «Եվ եթե օրը յոթ անգամ (քո եղբայրը) քո դեմ մեղանչի և յոթ անգամ քեզ մոտ դառնա և ասի՝ ապաշխարում եմ, ների՛ր նրան» (Ղուկաս 17.4):

Կլինեն վիրավորանքներ, որոնք հարկ կլինի անտեսել: Անտեսել նշանակում է վերևից նայել ինչ-որ բանի. դա նշանակում է իրավիճակը տեսնել ավելի բարձր դիրքից, քան այն մակարդակն է, որում կատարվել է հանցանքը: Դա նշանակում է շնորհք և գթասրտություն ցուցաբերել, երբ կգերադասեիք դատել:

*Տե՛ր, դարձրո՛ւ ինձ գթառատ ուրիշների նկատմամբ՝ հանցանքներից կառչելու փոխարեն: Թո՛ղ արտացոլեմ Քո շնորհքն ու ողորմությունը այն ամենում, ինչ անում եմ:*

*Ես ուխտում եմ,*

ԵՐԲ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՆՈՒՅՆՔԱՆ ԳԹԱՌԱՏ ԵՄ, ՈՐՔԱՆ ԳԹԱՌԱՏ ԵՂԵԼ Է ԱՍՏՎԱԾ ԻՄ ՀԱՆԴԵՊ:

4

# ԱՃ, ՈՉ ԹԵ ՄԵՂՔԻ ԶԳԱՑՈՒՄ

*«Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար…»:*

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.1

Ինչո՞ւ ենք այսքան խիստ մեր հանդեպ: Մեր կարծիքով ինչի՞ դա կհանգեցնի: Ես սովորություն ունեի գիշերը պառկելու և մտքում թվարկելու օրվա բոլոր ձախողումներս: Ինքս ինձ դատապարտում էի՝ ամոթից տանջվելով ամեն սխալի համար և փորձելով քավել իմ զանցանքները: Դուք կարող եք ավարտել օրը՝ հիասթափված և բարկացած ձեզ վրա, և պատկերացնել, որ ձեզ պատժելով ինչ-որ կերպ կփոխվեք և նույնը չեք մնա: Բայց սա ճիշտ չէ: Այս վարվելակերպն ավելի շուտ կործանարար, քան կառուցողական է:

Վատ չէ գիտակցել, որ սխալներ եք արել, կամ ցանկանալ, որ այլ կերպ վարվեիք: Առողջարար է թույլ տալ Սուրբ Հոգուն հիշեցնել ձեր սխալ խոսքերն ու արարքները: Բայց այս խորհրդածությունը ոչ թե մեղքի զգացում ունենալու, այլ աճի համար է: Ամեն գիշեր ես ինձ կշտամբում էի օրվա ձախողումներիս համար, մինչև որ զգում էի, որ խեղդվում եմ դրանց ծանրությունից: Միայն այդ ժամանակ ինքս ինձ թույլ էի տալիս աղոթել և ներում խնդրել: Բայց մեղքի զգացումն այնպիսի բերդ էր կառուցել իմ մեջ, որ դժվար էր հավատալ, որ հաջորդ առավոտ ողորմությունը բավական կլիներ այն ծածկելու համար:

Օրինակ, երբ հիասթափվում էի նրանից, թե ինչպես էի օրվա ընթացքում վարվել երեխաներիս հետ, բարձրացնում էի այդ խնդիրը՝ ինքս ինձ հարցեր տալով, օրինակ. «Ինչո՞ւ ես այդքան անհամբեր»:

Ավելի համբերատար լինելու ուղիներ փնտրելու փոխարեն ինձ պիտակավորում էի որպես «ձախողակի», ինչը միայն դրդում էր նոր ձախողումների:

Ինքդ քո հանդեպ ատելությունն ու զայրույթը առաջացնում են մեղավորության կործանարար կարծրատիպ:

Հիսուսը հասկանում էր, որ մեղքի ծանրությունը չափազանց մեծ էր մեզ համար, ուստի Նա կրեց այն մեր փոխարեն: Մեր սխալները պետք է բերենք Նրա Խոսքի լույսի մեջ: Այնտեղ մենք գտնում ենք խորհուրդ և հասկացողություն՝ մեղադրանքի և մեղքի զգացումի փոխարեն: Այն, ինչ հայտնում է լույսը, նույնպես բժշկելու զորություն ունի: Մեղքը խավար է, ողորմությունը՝ լույս: Մեր սխալները մտքում կրկնելու փոխարեն եկե՛ք մտքում կրկնենք պատասխանները, որոնք կշտկեն դրանք:

*Սիրելի՛ երկնային Հայր, ների՛ր, որ կշտամբում և մեղադրում եմ ինքս ինձ: Թո՛ղ Քո Խոսքի լույսը ճշմարտությամբ թափանցի իմ սիրտը: Օգնի՛ր ինձ, որ շրջվեմ ինքնադատապարտությունից և ընդունեմ Քո ողորմությունը:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԸՆՏՐՈՒՄ ԵՄ ԱՃԸ՝
ՄԵՂՔԻ ԶԳԱՑՈՒՄԻ ՓՈԽԱՐԵՆ:

5

# ՍՐՏԻ ԱՅԳԻՆ

*«Զգո՛ւյշ կացեք, որ մեկը հետ մնացող չլինի Աստծո շնորհքից. որ մի դառն արմատ վեր չբուսնի և նեղություն տա, և նրանով շատերը պղծվեն»:*

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.15

Որբ փոքր էի, ինձ հաճախ հանձնարարում էին մոլախոտեր հանել: Միշտ շտապում էի ավարտել աշխատանքը, որպեսզի կարողանայի խաղալ: Իմ անփութության պատճառով հաճախ կտրում էի մոլախոտի վերևի մասը՝ այն արմատախիլ անելու փոխարեն: Ես պետք է փորեի հողը՝ մոլախոտը արմատից պոկելու համար, բայց չէի ուզում այդքան ժամանակ վատնել: Մտածում էի, որ առանց ցողունի և տերևների բույսը կչորանար, և մայրս չէր իմանա, թե ինչ կա հողի տակ: Ես հող էի լցնում կոշտ կոճղերի վրա և հեռանում: Մի քանի շաբաթ անց նույն տեղում էլի մոլախոտ էր հայտնվում: Այն ավելի փոքր էր նրանից, որը ես պոկել էի, բայց ուներ զարմանալիորեն համառ արմատային համակարգ: Մայրս ինձ ցույց էր տալիս, որ պետք է փորեի հողը և բացեի բույսի արմատն այնքան, որ կարողանայի ամուր բռնել այն: Փաստորեն սկզբնապես հեշտ գործը վերածվում էր հոգնեցուցիչ պայքարի:

Որքա՜ն հաճախ ենք այսպես վարվում մեր սրտի այգու հետ: Սատանան ձգտում է ցանելու անհուսության, սխալ մտածելակերպի կամ բարկության սերմեր մեր մեջ, մինչև որ դառնության արմատը խեղդում է Աստծո Խոսքի կենարար սածիլները:

Մոլախոտերն ավելի արագ և հեշտ են աճում, քան սածիլները: Դրանք վայրի բույսեր են, որ ազատ տարածվում են՝

հարմարվելով ցանկացած տեսակի հողի: Սակայն մրգի կամ բանջարեղենի կենսատու սերմերը պետք է մշակվեն զգուշորեն՝ հաշվի առնելով, որ դրանք հեշտությամբ խեղդվում են մոլախոտերի մեջ կամ հողի անբարենպաստ պայմաններում:

Դառնության արմատները կծլարձակեն ամենաանպատեհ ժամանակներում, երբ ամենից դժվար կլինի լուծել դրանց հարցերը: Թեև դրանք կարող են անհարմարություն պատճառել, բայց չպետք է անտեսվեն, որովհետև կդառնան մահացու, եթե չհեռացվեն: Մի՛ խաբվեք՝ թույլ տալով, որ դրանք մնան, և երբեք մի՛ պոկեք երևացող մասը՝ կարծելով, թե կկասեցնեք արմատի աճը: Ո՛չ, դա միայն կծառայի նրա ամրանալուն: Շատ հաճախ մենք բավարարվում ենք այն պատրանքով, թե ամեն բան վերահսկողության տակ է, փոխանակ թույլ տալու, որ Սուրբ Հոգին խոր աշխատանք կատարի մեր ներսում:

Այնպես որ՝ եկե՛ք լինենք աչալուրջ այգեպաններ: Եթե դառնություն ենք նկատում մեր սրտում (այն փորձում է ի հայտ գալ բոլոր ժամանակներում), կարող ենք տանել այն Վարպետ Այգեպանի մոտ, որը կօգնի մեզ բացահայտելու արմատային համակարգը՝ այն ոչնչացնելու համար: Եթե Նրա Խոսքը մխրճվի մեր սրտի հողի մեջ, մենք հրաշալի բերք կունենանք:

*Հա՛յր, օգնի՛ր ինձ, որ ջանասեր լինեմ իմ հողը մշակելիս, երբեք չվախենամ դառնության այն արմատները բացահայտելուց, որոնք կարող են աճել իմ ներսում: Զգայո՛ւն դարձրու ամեն փոքրիկ ընձյուղի նկատմամբ և զորացրո՛ւ Քո ուժով՝ արմատախիլ անելու այն, ինչն իմ մեջ չպետք է լինի:*

*Ես ուզում եմ,*

ԵՐԲ ՀՈԳ ԵՄ ՏԱՆՈՒՄ ԻՄ ՍՐՏԻ
ՀԱՄԱՐ ԻՆՉՊԵՍ ԱՅԳՈՒ:

6

# ԴԱՏԱՍՏԱՆԻ ՏՈՒՓ

*«Մի՛ դատեք, որ չդատվեք: Որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք, և ինչ չափով որ չափում եք, նրանով կչափվի ձեզ»:*

ՄԱՏԹԵՈՍ 7.1, 2

Շատերիս է դուր գալիս, երբ իրերը կոկիկ տուփերում են: Մենք ավելի հանգիստ ենք, երբ գիտենք, թե ինչ է դրված ամեն բաժնում: Եթե չենք կարողանում ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին հարմարեցնել մեր տուփերում, հաճախ դատում ենք: Բայց սա իրականում ավելի շատ բան է ասում մեր մասին, քան այն անձնավորության, որին դատում ենք: Հիշում եմ, թե ինչպես էի մտատանջվում մի իրավիճակի համար, որում հայտնվել էի, երբ ընդամենը մի քանի տարվա քրիստոնյա էի: Պարզապես չէի կարողանում տեղավորել այն կոկիկ տուփի մեջ:

Քրիստոնյա մի զույգ բացահայտորեն վկայում էր, թե ինչպես է Աստված միացրել իրենց ամուսնության կապով: Մենք նրանց հետ ժամանակ էինք անցկացրել և գիտեինք, որ երկուսն էլ սիրում էին Աստծուն և Նրա ժողովրդին: Հանկարծ տարածվեցին վատ ասեկոսեներ, և, աչք չթարթած, նրանք արդեն ամուսնալուծության տանջալի գործընթացի մեջ էին: Շնություն չէր եղել. ըստ երևույթին, նրանք անհամատեղելի էին: Սա իրականում շփոթեցրեց ինձ: Ես պայքարում էի իմ ամուսնության մեջ ծագած խնդիրների դեմ և վստահում էի Աստծուն, որ կլուծի դրանք, որովհետև համոզված էի, որ Նա էր միացրել Ջոնին և ինձ: Սակայն այս զույգը, որը նույնպես ասում էր, որ Աստված է իրենց միացրել, մտափոխվել էր:

Սա ցնցեց իմ վստահությունը, որ Աստված կարող էր ինչ-որ

բան անել իմ ամուսնության մեջ: Ես հարկադրված եղա գտնել ինչ-որ թերություն այս զույգի մեջ: Եթե կարողանայի որակազրկել նրանց, կկարողանայի «խցկել» տուփի մեջ:

Ներքին տագնապս հայտնեցի վստահելի խորհրդատուի՝ ակնկալելով երկար, լավ մտածված աստվածաշնչյան պատասխան: Բայց փոխարենը նա հոգոց հանեց և ասաց. «Դա բարդ իրավիճակ է: Ուրախ եմ, որ ես չպետք է դատեմ այն»:

Անմիջապես զգացի, որ իրավիճակի ծանրությունն ընկավ ուսերիցս: Նրա պարզ խոսքերն ազատեցին ինձ իմ բեռից: Նա ճիշտ էր: Ես թույլ էի տվել սատանային դրդել ինձ դատելու ուրիշներին, և դա կասկածի տակ էր դրել Աստծո հավատարմությունը: Ես չափում էի իմ ամուսնությունը նրանց ամուսնությամբ և սահմանափակում Աստծուն նրանով, ինչ կարծում էի, որ Նա չէր արել նրանց համար: Ես դատել էի վախից դրդված:

Հաճախ մենք դատում ենք վիրավորանքից կամ քննադատությունից պաշտպանվելու համար, իրականում յուրաքանչյուրս էլ մեղավոր ենք: Այսօրվա սուրբգրային հատվածին հաջորդող խոսքում ասվում է. «Եվ ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես և քո աչքի միջի գերանը չես նշմարում» (3-րդ խոսք):

Հիսուսը հիշեցնում է, որ պետք է հանենք դատաստանի գերանը, որպեսզի հստակ տեսնենք և իսկապես օգնենք ուրիշներին և ինքներս մեզ: Երբ ուրիշներին չենք կարողանում տեղավորել մեր տուփերում, քննե՛նք մեր սրտերը և շնորհակա՛լ լինենք, որ դատելը մեր գործը չէ:

*Հա՛յր, երբ դատում եմ ուրիշներին, հիշեցրո՛ւ, որ ինչ չափով դատում եմ նրանց, նույն չափով կդատեն ինձ: Օգնի՛ր, որ ողորմություն ցույց տամ, որովհետև ինքս ողորմության կարիք ունեմ:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՄ ԴԱՏԵԼՈՒՑ:

7

# ԽՈՍՏՈՎԱՆԵԼ ԵՎ ԲԱՑ ԹՈՂՆԵԼ

*«Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից»:*

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 1.9

Ա՜յնքա՜ն շատ ազատություն կա այս խոստման մեջ: Երբ խոստովանում ենք մեր մեղքերը, Նա ոչ միայն ներում է, այլև սրբում է մեզ մեր ընտրության հետևանքներից: Ինչո՞ւ ենք փորձում արդարանալով մեղքը գցել ուրիշի վրա: Ես հասկացել եմ, որ հենց ընդունում եք սխալը, այն բաց է թողնում ձեզ: Պատճառ չկա մեղավորներ փնտրելու, երբ Հիսուսը վերցրեց մեր մեղքը. մենք խոստովանում ենք և առաջ շարժվում:

Նախ խոսենք արածը խոստովանելու մասին: Երբ փոքր էի, Ֆլիփ Ուիլսոն անունով մի կատակերգու կար, որ մարմնավորում էր Ջերալդին անունով մի կերպարի, որը միշտ արդարանում էր. «Սատանան ստիպեց, որ այդպես վարվեմ»: Մենք կարող ենք պատճառաբանություններ հորինել, բայց ճշմարտությունն այն է, որ սատանան չի կարող ստիպել ինչ-որ մեկին անել այն, ինչ նա չի ցանկանում: Կա ևս մեկ միջոց, որով ակամա մեղքը գցում ենք ուրիշի վրա և արդարացումներ փնտրում: Դա այն է, երբ ասում ենք. «Չկարողացա ինձ զսպել» կամ «Չկարողացա ինձ վերահսկել»: Այդպես մենք հակադարձում ենք Աստծուն, որն ասում է, որ ամեն բան կարող ենք մեզ զորացնող Քրիստոսով, քանի որ ակնարկում ենք, որ մեղքն ազդեցություն ունի մեզ վրա, և մենք անկարող ենք տիրապետել դրան: Գուցե մեր շուրթերով

չասենք դա, բայց կասենք մեր ապրելակերպով: Ապաշխարությունն ասում է. «Ես արել եմ դա, ես ապաշխարում եմ դրա համար և դառնում եմ դեպի Քեզ, Տե՛ր, որպեսզի սրբես ինձ»:

Մեր սխալները խոստովանելուն հաջորդում է է՛լ ավելի դժվար քայլ՝ բաց թողնելը: Դուք պետք է բաց թողնեք ինքներդ ձեզ: Սա չափազանց կարևոր է, որովհետև բանալի գործոն է ձեր հուզական, ֆիզիկական և հոգևոր առողջության համար: Ոչ մի բարիք չեք ստանա՝ փորձելով պատժել ինքներդ ձեզ այն բանի համար, որն Աստված արդեն ներել է և մոռացել: Եթե Նա հեռացրել է ձեր անօրինությունն այնքան հեռու, որքան արևելքը հեռու է արևմուտքից (Սաղմոս 103.12), անիմաստ է այն հետ բերելը:

Աստծո բարությունը և քաղցրությունն են մեզ տանում ապաշխարության: Սա հակասում է այն ամենին, ինչ արմատացած է մեր գիտակցության մեջ: Մենք ուզում ենք հատուցել. այդ ժամանակ ազատ արձակված կզգանք մեր մեղքից: Ես մեծացել եմ՝ լսելով այս խոսքերը. «Ես կհավատամ, որ դու զղջում ես, երբ փոխվես»: Բայց Աստված ցույց է տալիս Իր ողորմությունը, երբ մենք արժանի չենք դրան, որպեսզի կարողանանք փոխվել: Ողորմությունն այն է, երբ չենք ստանում այն, ինչին արժանի ենք: Շատերիս համար դժվար է սա հասկանալ: Մեզ ավելի հարմար են կանոնները և «աչքի տեղ աչք և ատամի տեղ ատամ» սկզբունքը: Օրենքը, մեր թշնամին և մեզ մեղադրողը մեր մտքում միշտ դատաստան կխնդրեն, մինչդեռ Հոգին ողորմություն է շնորհում: Ընդունե՛ք այդ ողորմությունը: Ընդունե՛ք մեղքից դեպի ազատություն տանող Աստծո ճանապարհը:

*Տե՛ր, հայտնի՛ր ինձ բոլոր ուղիները, որոնցով հակառակվում եմ մեղքից ազատվելու Քո միջոցներին: Ցո՛ւյց տուր սխալներս, որոնք պետք է խոստովանեմ և բաց թողնեմ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ ԻՄ ՍԽԱԼՆԵՐԸ
ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԱՅՆ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ,
ՈՐԻՆ ԱՐԺԱՆԻ ՉԵՄ:

8

# ԶԻՆՎԵԼ՝ ԿՅԱՆՔԻ ԿՈՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*«Ամեն, ով որ իր եղբորն ատում է, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան հավիտենական կյանք չունի հաստատված իրենում»:*

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.15

Այս աշխարհում չափազանց շատ ատելություն կա: Ժամանակն է, որ առավել լրջորեն վերաբերվենք այս խոսքին: Ով իր եղբորն ատում է... մարդասպան է: Մարդասպանությունը մտնում է ատելության դռնով: Նախևառաջ այս խոսքը սկսվում է «ամեն, ով» բառերով, իսկ «ով»-ը ներառում է բոլորին: Չկա բացառման մասին դրույթ, որն ասում է. «Յուրաքանչյուրը, ով իսկապես վատ վերաբերմունքի է արժանացել եղբոր կամ եղբայրների կողմից, բացառություն է»: Երբ կարդում ենք՝ «ով, ցանկացած ոք կամ յուրաքանչյուրը», նշանակում է, որ սուրբգրային խոսքը վերաբերում է ամեն մեկիս: Մենք չունենք հրաժարման մասին դրույթ:

Ահա բարի լուրը: Սա մեզ համար զորանալու և շնորհքի մեջ աճելու հնարավորություն է: Երբ հնազանդվենք Նրա խոսքին, Նա կզինի մեզ՝ ապրելու ճշմարտությամբ: Այս խոսքն ասում է, որ ով ատում է իր եղբորը, մարդասպան է: Սրանից փախուստ չկա. դա հաստատ է: Ես չեմ ուզում մարդասպան անվանվել: Սակայն քրիստոնեական ընթացքիս մեջ եղել են ժամանակներ, երբ հայտնաբերել եմ, թե ինչպես է ատելությունը թաքնվել սրտիս մութ խորքում: Արդյո՞ք սա նշանակում է, որ ես հավիտյան դատապարտված եմ որպես օրինազանց կամ նույնիսկ

մարդասպան: Ո՛չ, եթե ապաշխարեմ և թույլ չտամ, որ խավարը անարգել մնա և շատանա:

Մենք վերապրել ենք Աստծո զորացնող շնորհքը և պատսպարող ողորմությունը: Չկա այնպիսի մեղք, որն այնքան սոսկալիկամ նողկալի լինի, որ Նա չների: Աստված ներում է մարդասպաններին, որոնք ապաշխարում են:

Մենք կյանքին նայում ենք թագավորության, ոչ թե երկրային դատական համակարգի տեսանկյունից: Մենք այլևս պարզապես այս երկրի քաղաքացիներ չենք, որովհետև Սուրբ գիրքն ասում է. «Ուրեմն այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեք, այլ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստծո ընտանիքներ» (Եփեսացիների 2.19):

Մենք կառավարվում ենք երկնքի բարձրագույն օրենքներով և պատասխանատու ենք դրանց, ոչ թե երկրի օրենքների և դատարանների առջև: Երկինքը չի կառավարվում քարի վրա փորագրված արտաքին կանոններով և կանոնակարգերով. այն կերպարանափոխում է մեզ մեր սրտերում գրված ծածկագրի միջոցով: Քարացած, անկենդան կանոնները մահացած, կարծրացած սրտերի համար են: Ազատության օրենքը մսեղեն սրտերի համար է: Ահա թե ինչու երկրային դատարանների համաձայն դուք ճանաչվում եք մարդասպան, երբ մարդ եք սպանում, բայց թագավորության մեջ պարզապես ատելն արդեն դարձնում է ձեզ մարդասպան: Ժամանակն է լուծելու մեր սրտում թաքնված ատելության հարցերը և հակառակվելու մարդասպանության ոգուն:

*Երկնայի՛ն Հայր, բացահայտի՛ր ատելության ցանկացած օջախ, որ կա իմ սրտում: Ես հրաժարվում եմ դրանից, ինչպես կհրաժարվեի մարդասպանության մեղքից: Ների՛ր ինձ, ինչպես ես էլ ներում եմ մյուսներին:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԱՊԱՎԻՆՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈ ԳԵՐԲՆԱԿԱՆ ԶՈՐՈՒԹՅԱՆԸ, ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՇՆՈՐՀՔԻՆ:

*9*

# ՈՉ ՄԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

*«...Հիսուսն էլ ասաց նրան. «Ես էլ չեմ դատապարտում քեզ. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»»:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ 8.11

Այս խոսքերը մեր Տերն ակնհայտորեն ասում է մեղավոր կանանց:

Ցավոք, սատանայի ամենադաժան հարձակումը կանանց վրա հաճախ կրոնի քողի տակ է արվում: Հովհաննեսի 8-րդ գլխում պարզորոշ տեսնում ենք կրոնի և օրենքի դաժանությունը և Աստծո ողորմության ու սիրո գեղեցկությունը: Եկե՛ք միասին պատկերացնենք այս տեսարանը և թերևս տեսնենք այն այլ լույսի ներքո:

Լուսադեմին մի մեծ բազմություն սպասում է, որ լսի Հիսուս անունով երիտասարդ վարդապետին: Նա այնքա՜ն տարբեր է: Երբ Նա խոսում է, լսում եք Հայր Աստծո խոսքերը:

Լուսաբացի շողերի հետ հայտնվում է Հիսուսն Իր աշակերտների հետ: Բազմության մեջ Նա նստում է, որ սովորեցնի: Մարդիկ ուշադիր լսում են, նրանց սիրտը կառչում է ամեն խոսքից: Բայց հեռվում անհանգստություն է նկատվում:

Հիսուսի և Նրա աշակերտների գլխավերևում մեկ այլ խումբ է հայտնվում: Նրանց զայրացած ձայներն ուղղված են ինչ-որ մեկին: Նրանք կրոնական առաջնորդներ են, որ քարշ են տալիս գզգզված մազերով մի կնոջ, որը հագուստի կտորով փորձում է ծածկել մերկությունը: Ակնհայտ է, որ նրան քարշ էին տալիս խայտառակության անկողնուց: Տղամարդը, սակայն, չի երևում:

Նրանք ասում են. «…Վարդապե՛տ, այս կինը բռնվել է հայտնապես շնանալիս: Եվ օրենքում Մովսեսը պատվիրեց, որ այսպիսիները քարկոծվեն. հիմա Դու ի՞նչ ես ասում» (Հովհաննես 8.4, 5):

Սկզբում Նա չի կամենում նայել նրան կամ պատասխանել նրանց: Փոխարենը կռանում և մատով գրում է հողին:

Այնուհետև Նա խոսում է միայն մեղադրողների հետ՝ կոչ անելով, որ առաջինը քարը նետի նա, ով անմեղ է: Նրանք մեկը մյուսի հետևից հեռանում են: Թեև Հիսուսն անմեղ է, հրաժարվում է կնոջ վրա քար նետելուց: Միայն Նա է արդար դատավոր, որը եկել է ոչ թե դատապարտելու, այլ փրկելու նրան:

Հիսուսը լռում է, մինչև որ բոլոր մեղադրողները հեռանում են:

Նա նայում է կնոջը և հարցնում. ««…Ո՛վ կին, ո՞ւր են [քեզ ամբաստանողները]. ոչ ոք քեզ չդատապարտե՞ց»: Նա էլ ասաց. «Ո՛չ, ո՛վ Տեր»: Եվ Հիսուսն էլ ասաց նրան. «Ես էլ չեմ դատապարտում քեզ. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»» (Հովհաննես 8.10, 11):

Կինը բարձրացնում է գլուխը և հանդիպում Հիսուսի հայացքին և աչքերում տեսնում ներում, սեր և նույնիսկ ցավ: Նա այլևս ոչ թե մահվան և խավարի, այլ կյանքի և լույսի դուստր է:

Երբ օձը քարշ է տալիս մեր ամոթը և մեղադրում մեզ, կարող ենք նայել Հիսուսի աչքերին և իմանալ, որ Նա չի մեղադրում մեզ: Նրա ողորմությունը պաշտպանում է մեզ, և Նրա Շնորհքն ասում է, որ կարող ենք «գնալ և այսուհետև մեղք չգործել»:

*Տե՛ր, շնորհակալություն մեզ պաշտպանելու համար, երբ ինքներս չենք կարող պաշտպանվել: Շնորհակալություն մեզ փրկելու, ոչ թե դատապարտելու համար:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԹՈՒՅԼ ԵՄ ՏԱԼԻՍ, ՈՐ ՓՐԿԻՉՆ
ԻՆՁ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԵՂԱԴՐՈՂԻ ԱՌՋԵՎ
ԵՎ ՀԵՏՈ ԱԶԱՏԻ ԻՄ ԱՄՈԹԻՑ:

# Ուժեղ՝ ինքնատիրապետման մեջ

I

# ԼՍԵԼ ՈՒՇԱԴԻՐ

*«Մի՛ շտապիր լեզվովդ, և սիրտդ շուտով բան չարտասանի Աստծո առաջ, որովհետև Աստված երկնքում է, և դու՝ երկրի վրա. սրա համար թո՛ղ խոսքերդ քիչ լինեն»:*

ԺՈՂՈՎՈՂ 5.2

Աստվածաշնչում շատ է խոսվում մեր խոսքերի զորության և մեր շուրթերը վերահսկելու մասին: Սակայն կարևոր է նաև ուշադրություն դարձնել լսելու զորությանը: Լսելը պահանջում է կարգապահություն, ժամանակ և համբերություն: Սա նշանակում է, որ մենք տալիս ենք հարցեր, որոնք կօգնեն հասկանալու մեզ ասված խոսքը, որպեսզի կարողանանք ավելի խորամուխ լինել նյութի մեջ: Շատ կարևոր է, որ մարդիկ զգան, որ իրենց լսում են:

Սա պահանջում է պայքարել այն ցանկության դեմ, որը ստիպում է մեզ ենթադրել, թե ինչ են մտածում այլ մարդիկ. նրանք պարզապես կարող են զարմացնել մեզ: Կարծում եմ՝ մեջբերումն այսպես է ասում. «Յուրաքանչյուր ոք, ում հանդիպում եք, ձեզ սովորեցնելու բան ունի»: Մենք աճում ենք, երբ մշտապես սովորում ենք: Մի՛ լսեք խոսելու համար. լսե՛ք, որ սովորեք: Հակառակվե՛ք ձեր պատասխանը ձևակերպելու մղմանը, քանի դեռ դիմացինը խոսում է (ինչպես զույգերն են վարվում վիճաբանելիս): Այնքա՜ն պատվաբեր է ինչ-որ մեկի սիրտն իսկապես լսելը: Մարդիկ զգում են, երբ դուք չեք լսում: Ես շատ եմ ճանապարհորդում, և Աստված տալիս է ինձ հնարավորություն թռիչքի ընթացքում փոխանցելու Իր սերը և լույսը. մարդկանց հետ զրույցը մշտապես սկսվում է լսելով: Մարդիկ կլսեն ձեզ,

եթե դուք լսեք իրենց: Լսե՛ք նրանց կարիքները, սիրտը, մտքերը: Այնուհետև խնդրե՛ք, որ Հոգին խոսի ձեր միջոցով:

Ուրիշներին լավ լսելը ինչ-որ բան կարող է արթնացնել ձեր մեջ: Եկե՛ք բաց չթողնենք այն, ինչ կարող ենք սովորել, որովհետև մենք չափազանց արագ ենք փոխանցում այն, ինչ արդեն գիտենք:

Առակաց գիրքը զգուշացնում է. «Շատախոսության մեջ հանցանք պակաս չի լինի, բայց իր շրթունքները զսպողը խելացի է: Ընտիր արծաթ է արդարի լեզուն. իսկ ամբարիշտների սիրտը չնչին բանի պես է» (10.19, 20): Ընտիր արծաթը մաքրվում է կրակով: Երբ թույլ ենք տալիս, որ Աստծո Խոսքի կրակը մաքրի մեր խոսակցությունը, հեռացվում են ամեն անմաքրություն և անխոհեմություն: Հակոբոսի գրքում մեզ խրախուսվում է ծանր լինել խոսելու մեջ: Շատ անգամներ ես փրկվել եմ՝ չշտապելով ասել այն, ինչ պատրաստվում էի ասելու: Որքան շատ եմ լսում, այնքան դանդաղում եմ խոսել:

Նույնիսկ Աստծո հետ զրույցում մեզ խրախուսվում է քչախոս լինել: Նա երկնքում է, իսկ մենք ընդամենը երկրային բնակիչներ ենք: Աստծո հանդեպ պատշաճ երկյուղի կամ հարգանքի անբաժանելի մասն է իմանալ երբ խոսել և երբ լսել: Մենք սովորում ենք լսելով, ոչ թե խոսելով: Սա նշանակում է, որ ձեր աղոթքի կյանքը պետք է ունենա լսելու ժամանակ: Աստծո հետ չկա անհարմար լռություն: Դադա՛ր տվեք: Լսե՛ք Աստծուն և այն մարդկանց, որոնց Նա դնում է ձեր ճանապարհին, և դուք ավելի կզորանաք:

*Տե՛ր, օգնի՛ր, որ լսեմ, թե ինչ են մարդիկ իրականում ասում, և արձագանքեմ այնպես, ինչպես Դու ես առաջնորդում: Վարժեցրո՛ւ իմ սիրտը՝ լսելու Քո ձայնը ամենը օր:*

*Ես սովորեցի,*

ԵՐԲ ԼԱՎ ԵՄ ԼՍՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ:

2

# ՎԵՐԱՀՍԿԵԼ ԱԽՈՐԺԱԿԸ

*«Ամեն բան օրինավոր է ինձ, բայց ամենն օգուտ չէ. ամեն բան օրինավոր է ինձ, բայց ես չպիտի մի բանի իշխանության փակ լինեմ»:*

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 6.12

Ես կխոստովանեմ. իմ մեջ հակում է առաջացել դառը շոկոլադի և սուրճի նկատմամբ: Հետաքրքիր է՝ արդյո՞ք պարբերաբար կցանկանայի լավորակ դառը շոկոլադ, եթե երբեք ճաշակած չլինեի այն: Իսկ ի՞նչ կասեք սուրճի մասին: Եթե իմ սուրճի գավաթի մեջ երբեք մեկ լիքը ճաշի գդալ Բրեյերի սուրճի պաղպաղակ խառնած չլինեի և վրան դարչին ցանած չլինեի՝ հուսահատորեն փորձելով արթուն մնալ մի առավոտ, կցանկանայի՞ մոկա լատե:

Իհարկե, ո՛չ: Եվ չէի իմանա, թե ինչ էի բաց թողնում: Իմ մեջ չէր առաջանա հակում այս համեղ բաների նկատմամբ: Քանի դեռ գիտեի սուրճը որպես թանձր, սև, դառը հեղուկ, ես արհամարհում էի այն: Քանի դեռ շոկոլադը միայն սպիտակ էր կամ կաթնային, ես խնդիր չունեի դրան դիմադրելու համար:

Իրականում չկա պայքար: Ես չեմ պայքարում շոկոլադի նկատմամբ ոչ մշտական ցանկության կամ համեմված սուրճի առավոտյան արարողության դեմ… ես բավականությո՛ւն եմ ստանում դրանցից: Դրանք իմ տերերը չեն, բայց հաճելի սովորության մի մասնիկ են ինձ համար: Ես կարող եմ չուտել դառը շոկոլադ մեկ շաբաթ կամ ավելի, և ոչ ոք չի տուժի դրանից: Ես նոթերս չեմ կիտի, բայց երբ ուտում եմ այն, իսկապես հաճույք եմ ստանում: Ինչ վերաբերում է սուրճին, ես այն խմում եմ, եթե ուզում եմ անմիջապես արթնանալ՝ դանդաղ ուշքի գալու փոխարեն:

Բայց ի՞նչ կլիներ, եթե թույլ տայի, որ դրանց պարգևած հաճույքը գերազանցեր առողջ սննդի նկատմամբ իմ ցանկությունը: Ի՞նչ կլիներ, եթե որոշեի, որ զգայական հաճույքը (որ առաջանում է դառը շոկոլադից) և արթուն վիճակը (որ առաջանում է սուրճից) ավելի կարևոր լինեին, քան իմ կյանքում որևէ այլ զգացողություն: Հավանաբար թարմ կանաչիներով աղցաններն այլևս գրավիչ չէին լինի, որովհետև չէին առաջացնի այն զգացողությունը, ինչ դառը շոկոլադն է առաջացնում: Միգուցե կերակուրի և խմիչքի իմ մյուս նախընտրությունները ձանձրալի և միօրինակ թվային:

Ի՞նչ կլիներ, եթե հեռանայի իրականությունից և երկու շաբաթ գոյատևեի բացառապես շոկոլադի և սուրճի հաշվին: Ես կլինեի երջանիկ, նիհար և արթուն... առնվազն որոշ ժամանակ: Այնուհետև ամեն բան դուրս կգար հավասարակշռությունից, և ես ստիպված կլինեի կրկին վերահսկել իմ հակումները:

Ասելիքս այն է, որ մենք ենք զարգացնում մեր հակումներն ու ցանկությունները: Ցանկացած հակում, լինի սննդի, սեռական հարաբերության, զվարճանքի կամ սոցցանցերի նկատմամբ, կարող է դառնալ այնպիսի կախվածություն, որ փոխարինի իրականությանը և հանի մեզ հավասարակշռությունից: Դա է պատճառը, որ պետք է լինենք ուժեղ և զուսպ, ոչ թե ենթարկվենք մեր հակումներին: Մենք ի զորու ենք ավելացնելու կամ նվազեցնելու դրանց ազդեցությունը՝ ըստ այն կարևորության, որ տալիս ենք դրանց:

*Երկնայի՛ն Հայր, ցո՛ւյց տուր, թե ինչպես գնահատեմ իմ հակումները, որպեսզի դրանք դուրս չգան հավասարակշռությունից: Տո՛ւր իմաստություն՝ իմանալու, թե որքանն է չափից շատը, որպեսզի գերի չդառնամ որևէ բանի:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԵՄ ԻՄ ՀԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ, ՈՉ ԹԵ ԹՈՒՅԼ ՏԱԼԻՍ, ՈՐ ԴՐԱՆՔ ՎԵՐԱՀՍԿԵՆ ԻՆՁ:

3

# ԲԱՐԿԱՆԱԼ ԿԱՐԵԼԻ Է

*«Բարկացե՛ք, սակայն մի՛ մեղանչեք...»:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.26, NASB

Եփեսացիների 4.26-ի առաջին մասում բավականին հստակ ասվում է. «Բարկացե՛ք...»: Ես կարող եմ շատ արագ բարկանալ: Աստված ասում է մեզ բարկանալ, որովհետև վրդովվելը բնական է: Բարկությունն այնքան ընդունելի մարդկային զգացմունք է, որքան ուրախությունը, տրտմությունը, հավատը և վախը: Նույնիսկ Աստված բարկանում է, ըստ էության՝ բավականին հաճախ: Հին կտակարանն արձանագրում է Իսրայելի և այլ ազգերի նկատմամբ Նրա բարկության հարյուրավոր դեպքեր:

Երբ հույզերը ճնշվեն, քանի որ ընդունելի չեն, վերջին հաշվով կարտահայտվեն ոչ պատշաճ ձևով: Ընդհակառակը, եթե հույզերն արտահայտվեն առանց զսպվածության, դուռ կբացեն մեղքի համար: Աստված Ինքը ընդունում է մարդու բարկությունը: Սակայն շատերս չենք հասկանում դա: Մի՞թե բարկանալը իրեր նետելն է, գոռալը և ճչալը մեր սիրելիների վրա: Արդյո՞ք դա ոխ պահելն է դավաճանության նկատմամբ: Ո՛չ, սրանք բարկության անտեղի արտահայտման օրինակներ են: Կա հստակ գիծ բարկության և մեղքի միջև:

*Ամերիկյան ժառանգության բառարանը* բարկությունը սահմանում է որպես «ուժեղ, սովորաբար ժամանակավոր դժգոհություն՝ առանց արտահայտման հստակ ձևի»: Բնական

է սաստիկ կամ ուժեղ տհաճություն զգալ ինչ-որ իրադարձությունից կամ ինչ-որ մեկի արարքներից: Հավանություն չտալու, հակակրանքի կամ բարկության զգացողությունները հատուկ են բոլորիս և կարող են ի հայտ գալ ամեն օր: Սուրբգրային խոսքի «սակայն մի՛ մեղանչեք» հատվածն է, որ որոշակի ջանք է պահանջում: Սխալ կլիներ փոքր երեխայից ակնկալել նույն արձագանքը, ինչ մեծահասակից: Մեր հասունացմանը զուգընթաց պետք է զարգանա ինքնատիրապետման մեր կարողությունը: Սխալ չէ վրդովվելը, բայց սխալ է պատժելը ուրիշներին, որովհետև վրդովված ենք: Որպես քրիստոնյաներ՝ մենք այլևս չենք ներկայացնում միայն մեզ: Մենք Նրա ներկայացուցիչներն ենք, ինչը նշանակում է, որ մեկ քայլ հետ կանգնենք և մտածենք, թե ինչպես է մեր արձագանքն ազդում ուրիշների վրա: Ոչ մեկս չենք կարող վերահսկել այն, ինչ կատարվում է մեզ հետ, բայց բոլորս վերահսկում ենք այն, թե ինչպես արձագանքենք:

*Տե՛ր, խնդրում եմ, օգնի՛ր ինձ իմաստորեն կառավարելու իմ զգացմունքները այն հասունությամբ և շնորհքով, որ հարիր են Քո զավակին: Ցո՛ւյց տուր բարկության և մեղքի նուրբ սահմանը և առաջնորդի՛ր Քո Հոգով, երբ չափից շատ մոտենամ դրան:*

*Ես ուզում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՆՔՍ ԵՄ ԸՆՏՐՈՒՄ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԲԵՐՎԵՄ ԻՄ ԲԱՐԿՈՒԹՅԱՆԸ:

4

# ՀԵՏԵՎԵ՛Ք ՁԵՐ ԽՈՍՔԵՐԻՆ

*«Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենքս: Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է, որ կարող է իր ամբողջ մարմինը սանձահարել»:*

ՀԱԿՈԲՈՍ 3.2

Հակոբոսի գիրքը շարունակում է բացատրել լեզուն սանձելու կարևորությունը 3-րդ և 4-րդ խոսքերում.

> «Տե՛ս, ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նրանք հնազանդվեն մեզ, և նրանց ամբողջ մարմինը կառավարում ենք: Ահա նավերն էլ, որ այսչափ մեծ են և սաստիկ քամիներից քշվում են, մի փոքր ղեկով կառավարվում են՝ որ կողմը որ ղեկավարի միտքը կամենա»:

Այն, ինչ ասում ենք, կարող է շրջել մեր կյանքը լավ կամ վատ ուղղությամբ: Խոսքերը ոչ միայն ուղղորդում են մեզ, այլև կարող են կործանարար լինել: Հակոբոսը շարունակում է՝ մեր խոսքերը համեմատելով կայծերի հետ, որոնք կարող են հրդեհ բռնկել: Ոչ ոք չի ցանկանում խնդիրներ առաջացնել: Մյուս կողմից՝ Հռոմեացիների գիրքը հայտնում է խոսքերի զորության մասին՝ փրկելու և փոխադրելու մեզ խավարի թագավորությունից լույսի թագավորության մեջ: Հռոմեացիների 10.9, 10-ում մեզ խոստում է տրվում.

«Որովհետև եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Քանզի սրտով հավատում ենք արդարանալու համար և բերանով դավանում ենք փրկվելու համար»:

Այն, ինչը մեզ անախորժության մեջ է գցում, կարող է և հանել դրանից. «Մահն ու կյանքը լեզվի ձեռքին են, և նրան սիրողը կուտի նրա պտուղը» (Առակաց 18.21): Մենք ստեղծված ենք մեր երկնային Հոր օրինակով, որն օգտագործում է Իր խոսքերը՝ ստեղծելու և կյանք տալու համար: Սա նշանակում է, որ մենք կարող ենք ընտրել՝ օրհնենք թե անիծենք մեր խոսքերով:

Ես հավատում եմ, որ սա մշտապես սովորելու հնարավորություն է: Եկե՛ք խոսենք այնպես, որ կյանք բերենք, ոչ թե մահ և կործանում: Ձեր կյանքը կհետևի ձեր շուրթերից դուրս եկող խոսքերին, ուստի համոզվա՛ծ եղեք, որ ասում եք այն, ինչին ցանկանում եք հետևել:

*Սիրելի՛ Տեր, հսկի՛ր իմ շուրթերը: Թո՛ղ իմ խոսքերը գործեն որպես ղեկ, որը տանում է ինձ ճիշտ ուղղությամբ՝ հռչակելով ճշմարտություն և լույս՝ կործանման փոխարեն:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԵՄ ԻՄ ԽՈՍՔԵՐԸ:

5

# ՓՐԿԱՐԱՐ ԶՂՋՈՒՄ

*«Որովհետև Աստծո ուզած կերպով տրտմությունը ապաշխարություն է գործում փրկության համար՝ առանց զղջալու. բայց աշխարհի տրտմությունը մահ է գործում»:*

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 7.10

Բոլորս ունենում ենք ափսոսանքի զգացում, բայց չպետք է թույլ տանք, որ դա ղեկավարի մեր կյանքը: Ափսոսանքը կարող է հանգեցնել, ինչպես Պողոսն է անվանում, «աշխարհի տրտմության»: Դա վշտանալն է այնպիսի բաների կորստի համար, ինչպիսիք են հեղինակությունը, փողը, ունեցվածքը, փոխհարաբերությունները կամ այս աշխարհի հետ կապված այլ բաներ: Այսպիսի տրտմությունը կենտրոնանում է կորուստների վրա՝ չգիտակցելով այն ցավը, որ մեր արարքներով կարող ենք պատճառել ուրիշներին: Այս դեպքում ափսոսանքը ստիպում է մեզ կատարել փոփոխություններ մեր ուժերով կամ կրոնի միջոցով:

Աստվածային տրտմությունը կենտրոնանում է վնասի վրա, որ հասցվել է Աստծո կամ մարդկանց հետ հարաբերություններին: Այն կառուցողական է, ոչ թե կործանարար: Դավիթն աստվածային տրտմության օրինակ է ցույց տալիս Սաղմոս 51.1-ում. «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Քո ողորմության պես և Քո մեծ ողորմության պես ջնջի՛ր իմ անօրինությունները»:

Նա դիմում է Աստծո անմնացորդ սիրուն և խոստովանում, որ մեղանչել է Նրա դեմ: Նրա խոսքերում չկա պաշտպանական երանգ: Չկա մեղադրանք: Նա ընդունում է իր սխալը և բացահայտ ճանաչում իր մեղքը: Երբ ընդունում ենք մեր սխալները, դրանք մեզ բաց են թողնում: Բոլորս անսահման ողորմության

կարիք ունենք. երբ խոնարհվենք, Աստված կբարձրացնի մեզ մեր հանգամանքներից:

Դավիթը գիտեր, որ չէր կարող ինքն իրեն մաքրել, ուստի դիմեց Տիրոջը: Միայն Աստված է ի զորու ներելու մեզ և ջնջելու խավարի ամեն հետք և բիծ:

Դավիթը հասկանում էր, որ մեղքը թմրեցնում է սիրտը և թուլացնում վճռականությունը. «Դարձյա՛լ տո՛ւր ինձ Քո փրկության ուրախությունը և կամավոր հոգով հաստատի՛ր ինձ: Ապա անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհները, և մեղավորները հետ կդառնան Քեզ մոտ» (Սաղմոս 51.12, 13):

Սրանք իմ սիրելի խոսքերն են այս սաղմոսում, որ խոստանում են ուրախության վերականգնում և նոր սկիզբ այնտեղ, որտեղ եղել են զղջում և տրտմություն: Աստված կարող է գեղեցիկ բան ստեղծել մեր տգեղությունից, և մեր ձախողումները դառնում են հնարավորություն՝ սովորեցնելու մյուսներին Աստծո ողորմության և սիրո մասին: Աղոթքս է, որ մեր երկնային Հայրը ափսոսանքի ամեն խավար անկյուն վերածի Իր հավատարմության և ճշմարտության լուսավոր փարոսի: Այսպես տեսնում ենք Նրա հաղթանակը մեր փրկագնման մեջ: Կոչ եմ անում, որ ամեն ցավոտ վերապրում վերածեք գեղեցկության և ազատության կենդանի օրինակի՝ ուրիշներին սովորեցնելու սիրո և այն ճշմարտության մասին, որը ձեզ ազատ է արձակել: Սա է աստվածային տրտմության փայլուն արդյունքը:

*Տե՛ր, թո՛ղ իմ տրտմությունը լինի աստվածային՝ աշխարհի տրտմության փոխարեն: Երբ ափսոսանքի զգացում ունենամ, ապաշխարությամբ կբերեմ այն Քեզ մոտ և կվերապրեմ Քո բժշկությունը: Շնորհակալություն, որ մեր խառնաշփոթից գեղեցիկ բաներ ես ստեղծում:*

*Ես ուխտում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՄ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԲԵՐՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈ ԱՌՋԵՎ:

6

# ՀԱՍՏԱՏՎԵԼ ԽՈՍՔԻ ՄԵՋ

*«Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և ցերեկ նրա վրա մտածես, որ պահես և կատարես բոլոր նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամուտ կլինես»:*

ՀԵՍՈՒ 1.8

Ոչինչ մեզ չի զորացնում այնպես, ինչպես Աստվածաշնչի խոսքերը: Ահա թե ինչու է այդքան կարևոր Աստծո Խոսքի մեջ ամեն օր խորամուխ լինելու սովորություն ձևավորելը: Երբ կարդում և կիրառում եք Աստծո Խոսքը, դուք նույնը չեք մնում: Ձեր սիրտը փափկում է և զգայուն դառնում այն ամենի նկատմամբ, ինչ վերաբերում է ձեր Հորը: Սա ստիպում է, որ ավելի բաց լինեք Նրա առաջնորդության համար: Աստվածաշունչն ուսումնասիրելը հոգևոր սովորություն է, որը կյանք և եռանդ է հաղորդում հոգևոր մյուս սովորություններին:

Համաձայն թագավորության սկզբունքների՝ կարևորը ոչ թե այն է, թե քանի սուրբգրային խոսք գիտեք, այլ այն, թե քանի սուրբգրային խոսքով եք ապրում: Այսպես է Խոսքը մարմին դառնում ձեր կյանքում և պտուղ բերում:

Իսկ որտեղի՞ց սկսել:

Կան շատ տեղեր, որտեղից կարելի է սկսել, հասանելի են Աստվածաշնչի ուսումնասիրության տարբեր ծրագրեր: Անկախ նրանից՝ դուք ընտրում եք Աստվածաշնչի ընթերցանության ծրագիր, ձեզ հետաքրքրող թեմայի գրավոր ուսումնասիրություն թե ձեր կյանքի խնդիրներին վերաբերող սուրբգրային խոսքերի

պարզ որոնում՝ նպատա՛կ դրեք ամեն օր որոշակի ժամանակ անցկացնելու Խոսքի մեջ: Մի՛ ստանձնեք այնքան շատ, որ սպառվեք, այլ նպատա՛կ դրեք՝ ամեն օր բացելու Գիրքը: Այդ ժամանակը շուտով կդառնա խարիսխ ձեր կյանքում:

Գրիչով և օրագրով աղոթե՛ք և խնդրե՛ք, որ Սուրբ Հոգին խոսի ձեզ հետ Սուրբ գրքի միջոցով: Խորհրդածե՛ք այն խոսքերի շուրջ, որոնք ընտրել եք, այնուհետև մեկ քայլ առա՛ջ անցեք. գրե՛ք ձեր օրագրում, թե ինչպես եք կիրառելու ձեր սովորած ճշմարտությունները: Ո՞րն է ձեր գործողությունների ծրագիրը՝ այս ճշմարտությունները ձեր կյանքում ներառելու համար: Ի՞նչ եք անելու հաջորդ քսանչորս ժամվա կամ շաբաթների ընթացքում, որպեսզի հոգ տանեք ձեր սրտում ցանված ճշմարտության սերմի համար: Կա՞ն միջոցներ՝ ձեր առաջընթացը ստուգելու համար:

Երբ մտածում ենք կարգապահության մասին, հաճախ պատկերացնում ենք այն, ինչ չենք ցանկանում անել, կամ էլ մտածում ենք պատժի մասին: Բայց Աստծո Խոսքի մեջ անցկացրած ժամանակը նման է առողջ սնվելու սովորությանը: Դա կարգապահություն է, որը թարմացնում և աշխուժացնում է, միաժամանակ հանգստացնում է: Սա մի գաղտնի վայր է, որտեղ պետք է փնտրեք այն, ինչ Աստված ուզում է ասել ձեզ, և նպատակադրված թույլ տաք, որ Նրա խոսքերը կենդանացնեն ձեր կյանքի ամեն մասնիկը: Այսօր, լինի հինգ րոպե, թե մի ամբողջ ցերեկ, սկսե՛ք Աստվածաշնչի ուսումնասիրությունը որպես բժշկարար սովորություն և տեսե՛ք, թե ինչպես է այն զորացնում ձեզ:

*Հա՛յր, շնորհակալություն Քո խոսքերն ինձ մափակարարելու համար: Առաջացրո՛ւ իմ մեջ ծարավ՝ ամեն օր դրանց մեջ կյանք գտնելու:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՏՆԿՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԵՐՆ ԻՄ ՍՐՏՈՒՄ ԵՎ ՋՐՈՒՄ ԵՄ ԴՐԱՆՔ ԱՂՈԹՔՈՎ, ԽՆԱՄՔՈՎ ՈՒ ՃԻՇՏ ՄՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ:

7

# ՑԱՆԵԼ ԵՎ ՀՆՁԵԼ

*«Մի՛ խաբվեք. Աստված չի ծաղրվի: Որովհետև ինչ որ մարդ սերմի, այն էլ կհնձի. իր մարմնի մեջ սերմողը մարմնից ապականություն կհնձի, և Հոգու մեջ սերմողը Հոգուց հավիտենական կյանք կհնձի»:*

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 6.7, 8

Սա ցանելու և հնձելու օրենքն է: Երբ ցանում ենք ճիշտ բաներ, հնձում ենք աներևակայելին: Աստվածաշնչյան սերմերը տալիս են հզոր և սննդարար պտուղ:

Տարիներ առաջ սրտումս ցանեցի սուրբգրային խոսքեր՝ հույս ունենալով, որ դրանք կբերեն արդարության պտուղ: Իմ սիրելի խոսքերից մեկը Հակոբոսի գրքում է. «Ուստի իմ սիրելի՛ եղբայրներ, թո՛ղ ամեն մարդ շուտ լինի լսելու համար և ծանր՝ խոսելու համար և ծանր՝ բարկանալու համար» (1.19):

Իմ վարքագիծը ճիշտ հակառակն էր: Ես արագ էի խոսելու համար, ծանր կամ դանդաղ էի լսելու համար և արագ էի բարկանալու համար: Ես ճիշտ չէի ոչ մի ոլորտում:

Ես խնդրեցի Աստծո օգնությունը իմ շուրթերի համար: Աղոթեցի այնպես, ինչպես Դավիթն աղոթեց. «Տե՛ր, պահապա՛ն դիր իմ բերանին, իմ շրթունքների դուռը պահպանի՛ր» (Սաղմոս 141.3):

Այս պահապանը դրվում է, որպեսզի շուրթերից սխալ բառեր դուրս չգան և վնաս չպատճառեն: Ես հասկացել եմ, որ Սուրբ Հոգին կվերցնի ձեր սրտում ցանված սուրբգրային խոսքերը և ճիշտ ժամանակին դուրս կհանի: Սա գործում է որպես զգուշացում, նախքան դուրս կգան սխալ խոսքերը:

Գիտությունն ասում է, որ քանմեկ օր է անհրաժեշտ սովորությունից ազատվելու համար: Սովորություններն ուժեղ են: Դրանք

այն արծագանքն են, որ ունենում ենք առանց երկար մտածելու: Կար ժամանակ, երբ զայրույթը դարձել էր սովորություն իմ կյանքում: Անհնար էր պատկերացնել քանմեկ օր առանց զայրանալու: Քանմեկ տարին նույնիսկ բավական չէր լինի դրանից ազատվելու համար: Զայրույթն այդքան արմատացած էր իմ մեջ:

Ինչպե՞ս եք ազատվում սովորությունից: Այնպես, ինչպես ծևավորել եք: Ամեն անգամ՝ մեկ միջադեպ. սկզբում՝ հինգ րոպե, հետո՝ մեկ ժամ, այնուհետև՝ մեկ օր: Սա այն մոտեցումն էր, որ ես որդեգրեցի զայրույթի շղթան քանդելու համար: Նախքան անկողնուց վեր կենալը ես աղոթում էի. «Աստվա՛ծ, ես Քո կարիքն ունեմ այսօր: Չափազանց անգութ և խիստ պահապա՛ն դիր իմ շուրթերին: Ես չեմ ուզում մեղանչել Քո կամ մեկ ուրիշի դեմ: Օգնի՛ր, որ դանդաղ լինեմ խոսելու, արագ՝ լսելու և դանդաղ՝ բարկանալու համար»: Սուրբգրային այս հիշեցումները դարձան իմ ամենօրյա աղոթքը և ուժը:

Ես չեմ պատրաստվում ստելու և ասելու, որ դա հեշտ էր. հեշտ չէր: Բայց կարող եմ ասել, որ Աստծո հետ ամեն բան հնարավոր է: Արդեն երկու տասնամյակից ավելի է, որ ես ապրում եմ զայրույթի վերահսկողությունից ազատ: Սա իմ հրաշալի պտուղն է, որ ստացել եմ սուրբգրային երկու փոքրիկ սերմ ցանելու և դրանց հիման վրա գործելու շնորհիվ:

Ի՞նչ կցանեք այսօր ձեր սրտում: Ի՞նչ բերք եք ուզում հավաքել: Քննե՛ք Խոսքը սերմերի համար, ցանե՛ք դրանք, և Աստված կբազմացնի:

*Աստվա՛ծ, ցո՛ւյց տուր սուրբգրային այն խոսքերը, որոնք պետք է ցանեմ իմ հոգում: Ես հավատում եմ, որ երբ հավատքով ցանեմ և գործեմ դրանց համաձայն, Դու պտուղ կտաս:*

*Խոստում,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՑԱՆՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ԻՄ ՍՐՏՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՄ ԵՄ ԴՐԱ ՀԱՄԱՁԱՅՆ:

8

# ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

*«Եվ Աստված կատարեց յոթերորդ օրում Իր գործերը, որ արեց, և յոթերորդ օրը հանգստացավ Իր բոլոր գործերից, որ արեց»:*

ԾՆՆԴՈՑ 2.2

Երբ ծագում է Շաբաթի հարցը, շատերս մեղքի զգացում ենք ունենում: Որպես կին՝ մենք հազվադեպ ենք ազատ զգում մշտական կարիքներից, որոնք պահանջում են մեր ուշադրությունը: Մենք ջղաձգվում ենք լվացքի կույտերից և շարունակ հիշում մեր անելիքների ցանկը, որն անկառավարելի է: Մենք ունենք ընտանիք, որն իրավացիորեն կարիք ունի, որ մենք ակտիվ լինենք: Նույնիսկ եկեղեցի գնալու համար ամբողջ ընտանիքին տնից դուրս հանելը աշխատանք է: Այնպես չէ, որ մենք ուզում ենք անտեսել չորրորդ պատվիրանը («Հիշի՛ր հանգստության օրը՝ նրան սուրբ պահելու համար», Ելից 20.8). մենք պարզապես չենք մտածում, որ կարող ենք մեզ թույլ տալ հանգստանալ: Վերջին հաշվով, սա վստահության հարց է: Մենք մտահոգվում ենք, որ եթե կանգ առնենք, եթե հանգստանանք, Աստված չի կարողանա հոգ տանել մեզ համար:

Իրականում հանգստի (Շաբաթի) օրվա գաղափարը առողջության և վերականգնման հրավեր է: Շատ հաճախ կիրակին ինձ համար հանգստի օր չէ, ուստի ես սովորել եմ Շաբաթը պահել այլ կերպ: Նույնիսկ Հիսուսն Իր աշակերտներին առաջարկեց ընդմիջում վերցնել ծառայությունից. «...Դուք առանձին անապատ տե՛ղ եկեք և մի քիչ հանգի՛ստ առեք...» (Մարկոս 6.31): Նա գիտեր, որ եթե նրանք շարունակեին այդպես ծառայել և ուժասպառ լինել, օգուտ չէին տա որևէ մեկին և կտանջվեին: Դառը փորձից հասկացել եմ, որ երբ հոգնած

եմ, ունակ չեմ ճիշտ որոշումներ կայացնելու: Երբ չափազանց ճնշված եմ զգում, ասում եմ «ոչ» այն բաներին, որոնց պետք է ասեի «այո», և ասում եմ «այո» այն բաներին, որոնց պետք է ասեի «ոչ»: Այնուհետև ուժասպառ եմ լինում՝ ապրելով այս սխալ որոշումներով:

Ինչո՞ւ չընդունել հանգստանալու Նրա իրավերը: Ընտրե՛ք որևէ օր, կես օր կամ նույնիսկ մի քանի ժամ (և պարտադիր չէ, որ դա կիրակի լինի) և հատկացրե՛ք այն ձեր մարմնի և շնչի վերականգնմանը: Եղե՛ք նպատակասլաց, ծրագրե՛ք նախապես, անջատե՛ք ձեր հեռախոսը, համակարգիչը և մարդկանց նախօրոք ասե՛ք, որ կապի մեջ չեք լինելու և վայելելու եք ձեր կյանքը: Սա հրաշալի ժամանակ է ձեր երեխաների հետ ծիծաղելու, ընկերների հետ զվարճանալու կամ ամուսնու հետ շփվելու համար: Սնվե՛ք դրսում կամ կերակուր պատրաստե՛ք նախօրեին: Դադարե՛ք անելիքների ցանկը կրկնելուց: Փակե՛ք լվացքասենյակի դուռը: Մի կո՛ղմ դրեք ցանկացած գործ, որ բերել եք ձեր աշխատավայրից: Այդ ամենը կարվի, բայց ո՛չ այդ օրը: Վայելե՛ք Աստծուց տրված հանգստի օրը: Օգտագործե՛ք այս ժամանակը ձեր սիրտը պաշտպանելու, սնուցելու և պահպանելու համար: Այս ընթացքում դուք կթարմանաք այն աշխատանքի համար, որ Աստված ունի ձեզ համար:

Երբ աշխատանքի եք, աշխատե՛ք ջանասիրաբար և ամբողջ կարողությամբ, իսկ հանգստի ժամանակ հանգստացե՛ք: Ընդունե՛ք հանգստանալու Աստծո հրավերը՝ որպես վերականգնվելու հնարավորություն:

*Տե՛ր, ես չեմ ուզում ուժասպառ լինել: Ցո՛ւյց տուր, թե ինչպես հավասարակշռեմ աշխատանքը և հանգիստը, որպեսզի իսկապես մտնեմ Շաբաթի հանգստի մեջ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ ԵՄ՝ ՎՍՏԱՀ ԼԻՆԵԼՈՎ, ՈՐ ԱՍՏՎԱԾ Ի ՎԵՐՋՈ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ Է ԱՄԵՆ ԲԱՆ:

9

# ԱՍՏԾՈ ԴԵՍՊԱՆ

*«Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք Նրա առաքինությունները, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ: Որ դուք ժամանակով ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստծո ժողովուրդ եք, որ ողորմված չէիք, բայց հիմա ողորմվածներ»:*

Ա ՊԵՏՐՈՍ 2.9, 10

Օլիմպիական խաղերում հաղթողները պարգևատրվում են մեդալով, իսկ նրանց ուսերին գցում են այն երկրի դրոշը, որը նրանք ներկայացնում են: Ի՞նչ կկատարվեր, եթե մրցանակաբաշխության ժամանակ Ամերիկայից ոսկե մեդալակիր մարմնամարզուհին որոշեր, որ ցանկանում է ներկայացնել Կանադան: Արդյո՞ք թույլ կտային նրան: Իհարկե ոչ: Նա ընտրված էր որպես Ամերիկայի, ոչ թե Կանադայի ներկայացուցիչ. նա այնտեղ էր, որպեսզի ներկայացներ ամերիկյան մշակույթը և ոգեշնչեր մարդկանց:

Շատ առումներով նույնը վերաբերում է մեզ: Մենք երկնքի ներկայացուցիչներ և դեսպաններ ենք: Մենք այստեղ ենք, որպեսզի տպավորություն գործենք նրանց վրա, ում հանդիպում ենք՝ ցույց տալու, թե ում ենք պատկանում և ինչ թագավորություն ենք ներկայացնում: Պողոս առաքյալը մեզ անվանում է «Քրիստոսի պատգամավորներ» (Բ Կորնթացիների 5.20): Իսկ Պետրոսը Աստծո ժողովրդին անվանում է «թագավորական քահանայություն»: Մենք պատիվ ունենք լինելու և՛ պատգամավորներ, և՛ Նրա քահանաների թագավորական ընտանիքի մաս: Ինչո՞ւ երբևէ պետք է ցանկանանք շեղվել մեր

հավատարմությունից և ներկայացնել այնպիսի թագավորություն, որը մեր Հորինը չէ: Պետրոսը շարունակում է.

> «Որ դուք ժամանակով ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստծո ժողովուրդ եք, որ ողորմված չէիք, բայց հիմա՝ ողորմվածներ: Սիրելինե՛ր, աղաչում եմ ձեզ, ինչպես պանդուխտներ և օտարականներ, հեռո՛ւ կացեք մարմնավոր ցանկություններից, որ կռվում են հոգու դեմ: Ձեր վարքը հեթանոսների մեջ բարի՛ պահեք, որ ինչ բանով որ ձեզ չարագործների պես բամբասում են, ձեր բարի գործերը տեսնելով, փառավորեն Աստծուն այցելության օրում (Ա Պետրոս 2.10-12):

Առաջ մենք Աստծունը չէինք, հիմա Նրանն ենք: Նախկինում մենք Աստծո դատաստանի տակ էինք, հիմա վերապրում ենք Նրա ողորմությունը: Այլ խոսքերով՝ մի ժամանակ այս աշխարհում էինք և նրա դատավճռի ներքո, բայց այժմ այս աշխարհից չենք, Աստծո թագավորությունից ենք: Սա դարձնում է մեզ օտարականներ այս երկրի վրա, որտեղ նախկինում քաղաքացիներ էինք: Որպես քահանաներ՝ մենք Աստծո ներկայացուցիչներն ու դեսպաններն ենք այս երկրի վրա:

Այսօր, երբ ընտրություն կատարեք, երբ գործեք և արձագանքեք, հիշե՛ք, թե ում ամբիոնի մոտ եք կանգնում: Ապրե՛նք այնպիսի կյանքով, որ մարդիկ փառավորեն Աստծուն և միանան մեզ՝ փառաբանության հզոր օրհներգերով:

*Տե՛ր, ես այնքան հպարտ եմ, որ Քո դեսպանն եմ: Թո՛ղ իմ կյանքը և իմ գործողություններն արփացոլեն Քո բարությունը և շնորհքը:*

*Ես ասում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ ՓԱՌՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՊՍԱԿՎԱԾ ԱՍՏԾՈ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՄԲ:

# Ուժեղ՝ ապարության մեջ

# ԱՐՁԱԿՎԵԼ ՄԵՂՔԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԻՑ

*«Հիսուսը պատասխանեց նրանց. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ամեն ով որ մեղք է գործում, մեղքի ծառա է: Ծառան էլ հավիտյան չի կենում տան մեջ. որդին կենում է հավիտյան: Ուրեմն եթե Որդին ազատի ձեզ, հիրավի ազատ կլինեք»»:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ 8.34-36

Սրբ Որդին մեզ ազատում է... մենք «հիրավի ազատ» ենք: Ի՞նչ է նշանակում «հիրավի»: «Հիրավի» նշանակում է առանց կասկածի, իսկապես և հաստատ: Մարդիկ կարող են կասկածել ձեր ազատության իրավունքին: Ձեր անցյալը կարող է փորձել ամաչեցնել ձեզ և հիշեցնել ձեր սխալները, բայց Աստծո տեսանկյունից մեղքը և ամոթը այլևս ազդեցություն չունեն ձեր կյանքում: Մարդիկ գուցե ցանկանան քարեր նետել ձեզ վրա, բայց Հիսուսի խոսքերն արձագանքում են ձեր կյանքում՝ արձակելով ձեզ մեղքի կապանքներից: «...Ես էլ չեմ դատապարտում քեզ. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր» (Հովհաննես 8.11):

Երբ խոստովանում ենք, ժամանակն է առաջ շարժվելու և հետևում թողնելու մեղքը, ամոթը, ուրիշներին և ինքդ քեզ մեղադրելը: Երբ մեր խավարից տեղափոխվում ենք Նրա լույսի մեջ, լիազորվում ենք գնալու և այլևս չմեղանչելու: Եթե Աստված ասում է, որ ձեզ չի դատապարտում, դուք ազատ եք քայլելու այդ

ճշմարտության մեջ: Այս հարցում դուք չեք կարող վստահել ձեր զգացմունքներին, որովհետև դրանք կխաբեն ձեզ: Մենք երբեք արդար չենք զգա, որովհետև մեր մեջ և մեզնով արդարություն չկա: Մենք Աստծո արդարությունն ենք ոչ թե մեր գործերով կամ վարքագծով, այլ միայն Քրիստոսում: Սա լիազորում է մեզ թողնելու մեր անցյալի ձախողումներն ու սխալները և առաջ շարժվելու: «Առաջինները մի՛ հիշեք և հին բաները մի՛ մտաբերեք» (Եսայի 43.18):

Մեր այսօրն այլևս կապված չէ երեկվա մեր անհաջողությունների հետ: Մենք ազատ ենք ոտք դնելու նոր ապրելակերպի մեջ՝ մաքրված ողորմությամբ, որն ամեն առավոտ նոր է:

*Երկնայի՛ն Հայր, ես ընդունում եմ Քո ողորմությունը: Ես թույլ կտամ, որ այն իմ կյանքում հաղթանակի դատապարտանի հանդեպ: Ես թողնում եմ մեղքի զգացումը և ինքնապարսավանքը: Ես վեր եմ կենում և այլևս մեղք չեմ գործում:*

*Ես ուժեղ եմ:*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՎՈՐՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿԵԼ ԻՆՁ ԱՄԵՆ ՄԵՂՔԻՑ ԵՎ ԱՄՈԹԻՑ:

2

# ՆՈՐ ՍԻՐՏ

*«Եվ Ես ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղեն սիրտը և ձեզ մարմնեղեն սիրտ պիտի տամ»:*

ԵԶԵԿԻԵԼ 36.26

Որպես քրիստոնյաներ՝ մենք մշտապես փորձում ենք ունենալ փափուկ սիրտ կամ, ինչպես Աստվածաշունչն է անվանում, «մարմնեղեն սիրտ»: Սա այն սիրտն է, որն աճում է կարեկցանքի, սիրո և Աստծո առաջնորդության նկատմամբ զգայունության մեջ: Երկինքը կառավարում է մեր սրտում գրված սիրո ծածկագրի միջոցով: Քարի վրա փորագրված մահացած, անկենդան կանոնները մահացած, կարծրացած սրտերի համար են: Ազատության օրենքը ոչ թե քարեղեն, կարծր սրտերի, այլ մսեղեն, փափուկ սրտերի համար է:

Սակայն պետք է զգուշացնեմ, որ փափուկ սրտերն ավելի տարրողունակ են թե՛ սիրո, թե՛ ցավի համար, քան քարեղեն սրտերը: Եթե թույլ տանք, ցավը կարող է կարծրացնել մեր սիրտը, ու եթե չզգուշանանք, այն դանդաղ, բայց հաստատապես դուրս կմղի մեր կյանքից այն ամենը, ինչ վերաբերում է Աստծուն: Ծանրության և սպառված լինելու զգացողությունը դրա ախտանշանն է: Ծանրացած սիրտը դժվարանում է ներել ուրիշներին: Հոգնեցուցիչ է ապրել դառնացած կամ վիրավորված:

Բարի լուրն այն է, որ նույնիսկ ամենակարծր սիրտը կարող է ազատագրվել Աստծո Խոսքի ճշմարտությամբ: Ես հայտնաբերեցի ատելություն իմ սրտում նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն քրիստոնյա էի, բայց ընտրեցի թույլ չտալ, որ այն մնա

իմ սրտում: Ձեր սիրտը պահանջում է հսկողություն, որպեսզի ազատ լինի չբացահայտված հանցանքներից՝ զայրույթից, ատելությունից, նախանձից կամ այլ մեղքերից, որոնք հեշտորեն ծուղակն են գցում ձեզ: Սիրտը պահպանելու միջոցներից մեկը այն մշտապես ճշմարտության ազդեցությանը ենթարկելն է: Սա պահանջում է աշխատանք, խոնարհություն և ազնվություն: Բայց ձեր սիրտն արժանի է այդ պայքարին:

Նույնիսկ հիմա ձեր մտքում կարող է բանականության պատերազմ ընթանալ: Մի կողմը հիշեցնում է ձեզ ցավ պատճառած մարդկանց անունները՝ խնդրելով ներել և բաց թողնել նրանց: Մյուս կողմը պնդում է, որ նրանց հանդեպ ձեր ատելությունը կամ զայրույթը արդարացված է: Տեղի՛ տվեք առաջին ձայնին: Մի՛ կարծեք, որ կարծրացած սիրտը կպաշտպանի ձեզ... Չի պաշտպանի:

*Հա՛յր, ես խոստովանում եմ ամեն խստասրտություն: Կոտրի՛ր ցանկացած արտաքին պատյան Քո Խոսքի ապառաժով, որպեսզի հայտնվի մարմնեղեն սիրտը:*

*Ես աղոթում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀՍԿՈՒՄ ԵՄ ԻՄ ՍԻՐՏԸ,
ՈՐ ԱՅՆ ՓԱՓՈՒԿ ՄՆԱ ԵՎ ԶԳԱՅՈՒՆ
ԼԻՆԻ ԱՍՏԾՈ ՁԱՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

3

# ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*«Իրար խոստովանե՛ք ձեր հանցանքները և իրար վրա աղո՛թք արեք, որ բժշկվեք, շատ զորավոր է արդարի աղոթքը՝ ներգործելով»:*

ՀԱԿՈԲՈՍ 5.16

Խոստովանությունը հոգևոր սովորություններից ամենադժվարն է: Ինչո՞ւ է այն անհրաժեշտ: Մենք գիտենք, որ ներվում ենք, երբ մեր մեղքերը խոստովանում ենք Հորը: Բայց Հակոբոսի գիրքը մեկ քայլ առաջ է անցնում և ասում, որ անհրաժեշտ է միմյանց խոստովանել որոշ մեղքեր և աղոթել միմյանց համար, որպեսզի բժշկվենք: Կարծում եմ, որ սա ճշմարիտ է երեք պատճառով:

Առաջին՝ թագավորությունը չի գործում բնական սկզբունքներով: Հիշե՛ք, Հիսուսը փարիսեցիներին ասաց, որ ով կնոջը նայեց՝ նրան ցանկանալով, իր սրտում շնացավ նրա հետ: Սրտի հարցերն ամենից կարևորն են թագավորության մեջ: Մեր սիրտը լավ կամ վատ սերմերի ջերմոց է: Ինչ վերաբերում է փարիսեցիներին, մեղքը ֆիզիկապես չէր դրսևորվել, բայց այն հղացել էր նրանց սրտում:

Երկրորդ, երբ խոստովանում ենք մեր մեղքը և հավատակից քրիստոնյաների հետ աղոթում, մենք խոնարհվում ենք և պատրաստում մեր անձերը բժշկության համար: Բժշկությունը հոսում է սրտի մութ խորքերը, երբ մեղքը բերում ենք բաց և ապահով միջավայր: Խոստովանությունը լույս է սփռում մեղքի

և ամոթի վրա, և լույսի այս մթնոլորտում աղոթքը սկսում է բժշկել է և վերականգնել:

Երրորդ պատճառն այն է, որ խոստովանությունը ենթադրում է պատասխանատվության որոշակի աստիճան: Խոստովանությանը հետևում է պատասխանատվությունը: Խոսքն ասում է. «Անկեղծ են բարեկամի տված վերքերը…» (Առակաց 27.6): Երբ խոստովանում եմ, կարեկցանքի կարիք չունեմ. ես կարիք ունեմ, որ ինչ-որ մեկը ցավեցնի ինձ ճշմարտությամբ: Եվ միասին աղոթելուց հետո ես զգում եմ, թե ինչպես է ամոթի բեռն ընկնում իմ ուսերից:

Բայց չմոռանանք նաև սովորությունների մասին: Հիսուսը Մատթեոսի 16.24-ում ասում է. «…Եթե մեկը կամենում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչն առնի և Իմ հետևից գա»: Խոստովանությունը խաչը վերցնելու մեկ այլ միջոց է, երբ ընդունում ենք մեր բացարձակ կախվածությունն Աստծուց: Մենք «հրաժարվում ենք» ինքնուրույն շտկվելու կամ մեղքի շղթան ինքնուրույն կոտրելու իրավունքից: Խոստովանությունը կարգապահություն է, որը ցույց է տալիս, որ մենք գիտենք, որ չենք կարող մենակ գործել: Բայց Աստծո և մեր ընտանիքի օգնությամբ մենք սկսում ենք բժշկվել:

*Հա՛յր, ցո՛ւյց տուր այն բժշկությունը, որ բերում է խոստովանությունը: Առաջնորդի՛ր ինձ ճիշտ մարդկանց մոտ և դարձրո՛ւ ինձ այնքան ազնիվ, խիզախ և անկեղծ, որ վերցնեմ իմ խաչը խոստովանության միջոցով: Ես ուզում եմ հետևել Քեզ և ընդունում եմ, որ ինքնուրույն չեմ կարող գործել:*

*Ես ուխտում եմ.*

ԵՐԲ ՎԵՐՑՆՈՒՄ ԵՄ ԻՄ ԽԱՉԸ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԼԻՆԵԼՈՒ ԻՄ ԱՐԱՐՔՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

4

# ԱԶԱՏՎԵԼ ՄԵՂՔԻՑ

*«Մենք պետք է իմաստությամբ, արդարությամբ և աստվածապաշտությամբ ապրենք այս չար աշխարհում՝ հույսով սպասելով այն երանելի օրվան, երբ մեր մեծ Աստծո և Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքը կհայտնվի: Նա Իր կյանքը տվեց, որ ազատի մեզ ամեն մեղքից, սրբի և Իր համար հատուկ ժողովուրդ պատրաստի՝ լիովին նվիրված բարի գործեր անելու»:*

ՏԻՏՈՍ 2.12-14, NLT

Սա հրաշալի լուր է: Մեղքն այլևս իշխանություն չունի մեզ վրա: Նշանակություն չունի, թե անցյալում քանի անգամ եք մեղքին ասել «այո». այն տեղ չունի մեր ապագայում: Մենք ունենք բոլոր իրավունքները՝ շրջվելու մեղքից և ասելու «ոչ» ամեն անգամ, երբ այն փորձի գայթակղել կամ ծուղակը գցել մեզ ամոթի միջոցով: Հիսուսը կոտրեց նրա իշխանությունը, ողորմություն ցույց տվեց մեզ և լիազորեց ապրելու Աստծո շնորհքով: Քրիստոսում մենք չենք ընդունում այն դատաստանը, որին արժանի ենք, որովհետև Նա Իր վրա վերցրեց մեր մեղքերը: Մենք ներված ենք և վերստին ծնված՝ մահից փոխադրվելով դեպի կյանք: Սիրելի՛ դուստրեր, ձեր հոգիների թշնամին չի ցանկանում, որ իմանաք սա: Նա ցանկանում է, որ մնաք ամոթի մեջ՝ հույս ունենալով կրկին ներքաշելու ձեզ մեղքի մեջ: Նա չի ցանկանում, որ դուք իմանաք, որ ունեք իշխանություն մեղքի վրա, բայց դա ճշմարտություն է: Անշուշտ,

եթե փորձենք պայքարել մեր ուժերով, կձախողվենք, բայց մենք այլևս մենակ չենք մեր պայքարում: Մենք Նրա մեջ ենք, և մեր զենքերը զորավոր են:

*Հիսո՛ւս, շնորհակալություն մեղքի իշխանությունը կոր-ծանելու համար: Ես մերժում եմ թշնամու ստերը և շրջվում եմ դեպի Քեզ: Քո մահը փվեց ինձ այն ամենը, ինչ անհրաժեշտ է այս պայքարում հաղթելու համար:*

*Ես ուժեղ եմ:*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՔՐԻՍՏՈՍԸ ՏԱԼԻՍ Է ԻՆՁ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

5

# ԵՐԲ ՉԱՓԱԶԱՆՑ ՑԱՎՈՏ Է

*«Եվ կջնջի Աստված ամեն արտասուք նրանց աչքերից, և մահն այլևս չի լինի, ո՛չ սուգ, և ո՛չ աղաղակ և ո՛չ ցավ այլևս չի լինի...»:*

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 21.4

Ուզում եմ քաջալերել, որ բաց թողնեք ձեր ցավը: Միգուցե զարմանաք. «Ինչպե՞ս կարելի է ցավը հետևում թողնել»: Դուք կարող եք առարկել, որ ես չեմ հասկանում ձեր ցավը կամ չգիտեմ, թե ինչ են արել ձեզ հետ, կամ որքան խորն են ցավեցրել ձեզ: Եվ դուք ճիշտ կլինեք: Ես չգիտեմ, բայց կա Մեկը, ով գիտի: Վերքերն ավելի շատ են, քան կարելի է թվարկել: Ես հաստատ գիտեմ, որ ձեզնից ոմանք բռնության կամ ոտնձգության են ենթարկվել ինչ-որ մեկի կողմից, որին վստահել են: Ոմանք սեռական ոտնձգության կամ բռնության են ենթարկվել անծանոթի կողմից: Միգուցե ձեզ լքել է ինչ-որ մեկը, ով խոստացել էր մշտապես լինել ձեր կողքին: Գուցե ձեր երեխան մահացել է դաժան կամ անհեթեթ մահով: Ինչ-որ մեկը, որին սիրել եք, անարդար է վարվել ձեզ հետ: Ձեր ծնողները մերժել են ձեզ, և դուք երբեք բավականաչափ լավ չեք զգացել: Շատ-շատերին ծաղրել են իրենց մաշկի գույնի համար: Մյուսներին ծաղրել են հաշմանդամության համար: Եվ ցավոք, շատերիս դավաճանել է մեր ընկերը:

Այս և չթվարկված այլ ողբերգություններից յուրաքանչյուրն այնքան ցավոտ է, որ խորապես վիրավորում է մեզ:

Այնուհետև երբ ամենից խոցելի վիճակում ենք, սատանան մեր վիրավորված սրտի մեջ ցանում է դառնության խոսքեր և վրեժխնդրության մտքեր: Նա խրախուսում է մեզ մտաբերել վիրավորանքը և հիշել ցավը: Նա ցանկանում է, որ ամուր սեղմենք դրանք մեր կրծքին ու երբեք բաց չթողնենք: Նա ստում է՝ խոստանալով, որ դրանք պահելը կպաշտպանի մեզ ապագա ոտնահարումներից: Բայց դա սուտ է:

Դուք բժշկվում եք, երբ ձեր ցավը տալիս եք Հիսուսին. Նա միակն է, ով իսկապես հասկանում է ձեզ: Եսայու գրքում գրված է, որ Հիսուսը «...մեր անօրինությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի 53.5):

Ձեր ցավից կառչելը միայն ավելի կվնասի ձեզ: Ուզում եմ, որ փակեք ձեր աչքերը և պատկերացնեք, որ Հիսուսին եք տալիս ամբողջ ցավը: Նա անկարևոր չի համարի այն, ինչ արել են ձեզ հետ: Բա՛ց թողեք ցավը և թո՛ւյլ տվեք, որ Նա հեռացնի այն:

*Հիսո՛ւս, ես հավատում եմ, որ Դու ես իմ բժշկությունը, այնպես որ, կարող եմ վստահել Քեզ ցավի յուրաքանչյուր մասնիկ: Ես հրաժարվում եմ կրելուց այն, ինչ ինձ համար չէ: Ես հանձնում եմ (անվանե՛ք ցավի բնագավառները) Քո խնամքին: Ազատի՛ր ինձ դրանից Քո փառքի համար:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՄ ՑԱՎԸ ՏԱԼԻՍ ԵՄ ԻՄ ԲԺՇԿԻՆ:

6

# ՀԱՍՏԱՏՈՒՆ՝ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*«Արդ այն ազատությունով, որ Քրիստոսը մեզ ազատեց, հաստա՛տ կացեք և դարձյալ ծառայության լծի տակ մի՛ մտեք»:*

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.1

Երբ ազատվում ենք, դժվարանում ենք հավատալ, որ իսկապես ազատ ենք՝ ընդմիշտ: Մեր մշակույթը և կրոնը ամբողջ ուժով կփորձեն կրկին ստրկացնել մեզ: Դրանք ցանկանում են, որ մենք կրկին մտնենք ստրկության կամ «ծառայության լծի» տակ՝ թույլ տալով, որ մեզ կորացնի ամոթի և մեղքերի ծանր, հոգնեցուցիչ բեռը: Ազատությունը ձեռք ենք բերում ինչպես անմիջապես, այնպես էլ ժամանակի ընթացքում: Հիսուսն ազատում է մեզ, երբ մեր կյանքը տալիս ենք Նրան, և այդ ազատությունը մեր իրավունքն է,: Այնուհետև՝ ժամանակի ընթացքում, շարունակաբար կիրառում ենք այս ազատությունը՝ «հաստատ կանգնելով» մեղքի դեմ, որով մի ժամանակ բեռնավորված էինք, և չենք ընդունում այն լուծը, որը ստիպում է մեզ կատարյալ լինել մեր ուժերով:

Այնպես որ, ամո՛ւր կանգնեք ձեր ազատության մեջ: Հակառա՛կ կանգնեք մեղքի տանջող զգացումին և ամոթին, որոնք կփորձեն գցել ձեզ ձախողման ընկճվածության մեջ կամ վերադարձնել դեպի մեղավոր ապրելակերպ: Հակառա՛կ կանգնեք անցյալի ամոթի ամեն ստվերի, որ վիճարկում է մեղավոր վարքագծին «ո՛չ» ասելու ձեր իրավունքը: Հավանաբար անցյալում դժվարացել եք ասել «ո՛չ» մեղքի զգացումի և ամոթի

պատճառով, բայց դուք ազատվել եք ձեր անցյալից, և ձեր ապագան լուսավոր է և ազատ:

Քանի որ Քրիստոսը տվել է մեզ ազատություն և փառավոր հույս, մենք պատճառ չունենք վախենալու մեր Տիրոջ և Փրկչի վերադարձից, որովհետև Նա ազատ է արձակել մեզ անօրինությունից և դարձրել Իրենը: Մինչ այդ մենք հակված էինք չարը գործելու... Այժմ մենք ցանկանում ենք բարին գործել: Երբ իսկապես վերստին ծնվում ենք, մեր բնական ցանկությունները փոխվում են: Նա ներում է մեզ, այնուհետև փոխում մեր էությունը հետևյալ խոսքերով. «Գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»: Սա ներման նախապայման չէ. ներումն արդեն շնորհվել է: Սա վստահության քվե է և ավելի լավ ապագայի հավատ:

Հիսուսի խոսքերը կարելի է վերաշարադրել այսպես. «Ես քեզ չեմ դատապարտում: Ես ներում և արձակում եմ քեզ մեղքի դատավճռից ու դատաստանից: Այժմ գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր: Դու ազատ ես» (Հովհաննես 8.11): Մենք երբեք չէինք կարող վաստակել այն ողորմությունը, որ մեզ շնորհվում է, ինչպես որ երբեք չէինք կարող քայլել աստվածապաշտության մեջ և ասել «ո՛չ» մեղքին ու աշխարհիկ ցանկություններին առանց Աստծո շնորհքի: Մեղքն այլևս պահանջներ չունի մեր կյանքի նկատմամբ, որովհետև Քրիստոսն ազատել է մեզ, որ ազատության մեջ ապրենք:

*Տե՛ր, ես այնքան շնորհակալ եմ, որ Քո ներումը և փրկագնումը իմն են: Ցո՛ւյց տուր, թե ինչպես կիրառեմ իմ ազատությունը՝ օգնելով ինձ շրջվելու այն ամենից, ինչը ստրկացնում է ինձ:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՔՐԻՍՏՈՍՆ ԻՆՁ ԱԶԱՏԵԼ Է: ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄԵՆ ՕՐ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ ԻՄ ԿՅԱՆՔՈՒՄ:

7

# ԱԶԱՏ՝ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՑ

*«Սրա համար, եղբայրնե՛ր, աղախնի որդիներ չենք, այլ ազատի»:*

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 4.31

Որբ փոքր էի, հայրս գրեթե չէր շփվում ինձ հետ՝ բացառությամբ, երբ հպարտանում էր, թե որքան անհողդողդ էի ես: Նա անվանում էր ինձ «վագրիկ» կամ «փոքրիկ կռվարար»: Զգեստը և կանացի իրերը չէին համապատասխանում այս կերպարներին: Ես վճռել էի երբեք չլինել կանացի:

Երբ դպրոցական էի, մի ֆիլմում հայտնաբերեցի կնոջ կերպար, որի հետ ինձ նույնացրի: Նա չէր հագնում նրբագեղ զգեստներ: Նրա կյանքը արկածային պատմություն էր: Նա Բոնդի (Ջեյմս) աղջիկներից էր: Ինձ, անկասկած, ավելի հարմար էր այն աղջիկների կերպարը, որոնք հագնում էին կարճ տաբատ, զինված էին ատրճանակով և վազում էին տղաների հետ: Այդ աղջիկները տղամարդկանց հավասար էին, և ոչ ոք չէր համարձակվում անհարգալից վերաբերվել նրանց: Նրանք չէին սպասում, որ ինչ-որ տղամարդ պաշտպաներ իրենց: Նրանք կարող էին պաշտպանվել:

Բայց ահա թե որն էր Բոնդի աղջիկների խնդիրը: Որքան հիշում եմ, այս կանանցից առնվազն մեկը սպանվում էր «Գործակալ 007»-ի յուրաքանչյուր ֆիլմում: Եվ Ջեյմսը միշտ անկողին էր մտնում ողջ մնացած աղջկա հետ, որից հետո նրանց այլևս միասին չէին տեսնում: Ջեյմսն առաջ էր շարժվում, որպեսզի դառնար հաջորդ արկածային պատմության մասը: Միշտ հայտնվում էր մեկ այլ գեղեցկուհի, որին նա կարող էր

հետապնդել, երբ ավարտեր գործը մյուսների հետ: Ենթադրում եմ, որ նրանք «աղախիններ» էին՝ ստրկացված այն համակարգի կողմից, որը չգիտեր նրանց արժեքը:

Այս անհողդողդ և ինքնավստահ կինը կարող էր առաջին հայացքից խիզախ թվալ, բայց այդպես չէ: Բոլոր կանայք վախենում էին, հատկապես, եթե վերահսկողությունն իրենց ձեռքում չէր (ահա ինչու էին նրանք ատրճանակ պահում): Նրանցից շատերը երբեք չեն ստացել պաշտպանություն և սեր իրենց հայրերից և որոշել են ամեն ինչ իրենց ձեռքը վերցնել: Մյուսները ենթարկվել են այն ազդեցությանը, որը խրախուսել է վստահել սեփական կարողությանը՝ Աստծո փոխարեն: Բայց, ի վերջո, աղախինները հայտնվում են հուսահատ վիճակում: Միայն այն, որ կինը սեռականորեն ցանկալի է, չի նշանակում, որ նա ազատ է:

Մշակույթը տալիս է մեզ հնարավորություններ՝ ավելի շատ նույնանալու գերի դստեր, քան ազատ կնոջ հետ: Բայց հարկ չկա, որ ընտրություն կատարենք այս երկուսի միջև՝ խաղալով քնքուշ, թույլ կնոջ կամ ագրեսիվ, գայթակղիչ աղջկա դեր: Աստված ստեղծել է կանանց նույնքան անթիվ հրաշալի հնարավորություններով՝ այնքան բազմազան, որքան դուստրերն են: Մի՛ տրվեք ստին, թե դուք սահմանափակված եք մարդու ստեղծած կարծրատիպով: Մենք Նրա արքայադուստրերն ենք, ոչ թե աղախիններ, որոնք ստիպված են վստահել բաների, որոնք ի վերջո հուսախաբ կանեն, և որպես Նրա զավակներ՝ ազատ ենք լինելու այնպիսին, ինչպիսին իրականում ենք՝ գիտենալով, որ լիովին և առանձնահատուկ կերպով ենք սիրված:

*Հա՛յր, ես ուզում եմ ընդունել ինձ այնպիսին, ինչպիսին ստեղծել ես ինձ: Երբ գայթակղվեմ կատարելու ավելի ցածր դեր, հիշեցրո՛ւ, թե ով եմ ես իրականում:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԿԱՊՎԱԾ ՉԵՄ ԿՆՈՋ ՄՏԱՑՅԱԾԻՆ ԿԵՐՊԱՐԻՆ. ԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈ ԴՈՒՍՏՐՆ ԵՄ:

8

# ԴՈՒՔ ՆՈՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՔ

*«Ուրեմն եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հները անցան, ահա ամեն բան նոր եղավ»:*

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.17

Երբ Քրիստոսը դառնում է մեր Փրկիչը և Տերը, մեր մեղքի հավիտենական պատիժը հեռացվում է այնքան հեռու, որքան արևելքը հեռու է արևմուտքից (Սաղմոս 103.12): Մեղքն այլևս չունի իշխանություն և օրինական հիմք՝ ձեր հոգին գերության մեջ պահելու համար: Դուք ազատ եք արձակվել: Սակայն ազատությունը և ներումը չեն վերացնում մեղքի գործնական կամ բնական հետևանքները: Եթե ես հանցանք գործեմ և դատապարտվեմ ազատազրկման, այնուհետև փրկվեմ, իմ հոգին ազատ կլինի, բայց մարմինս, միևնույնն է, կհայտնվի բանտում: Սա չի նշանակում, որ ես չեմ ներվել: Սա նշանակում է, որ ես փնտրում եմ Նրա իմաստությունը, երբ առերեսվում եմ իմ իրողություններին:

Այդ դեպքում գուցե զարմանաք, թե ինչպես է այս ճշմարտությունը կիրառվում. ես ներված եմ և դարձել եմ նոր արարած: Հներն անցել են, և ամեն բան նոր է ինձ համար: Այս ճշմարտությունը ներգործում է մեր մեջ: Մենք ներված ենք, և մեր մեղքերը ջնջվում են այն պահին, երբ խոստովանում ենք դրանք: Մենք հոգևոր առումով նոր ենք ստեղծվում այն պահին, երբ վերապրում ենք Քրիստոսի առատ ողորմությունը: Բայց սա չի

նշանակում, որ իմ նախկին ընտրություններն այլևս ազդեցություն չունեն ինձ վրա: Ես այլևս մեղավոր չեմ և հավիտենական դատաստանի տակ չեմ, բայց որոշ հետևանքներ մնում են:

Զուտ տեսականորեն՝ ի՞նչ կլիներ, եթե ես հղիանայի իմ երիտասարդ, անխոհեմ տարիներին: Հավանաբար դա ահազանգ կլիներ: Ի՞նչ կլիներ, եթե ես հղիանալուց հետո դառնայի քրիստոնյա: Մի՞թե երեխան կանհետանար: Իհարկե, ո՛չ: Երեխայի ներկայությունը ոչ մի կերպ չէր ժխտի իմ մեղքերի թողությունը, ինչպես որ իմ մեղքերի թողությունը չէր հերքի երեխայի գոյությունը: Երեխան մեղք չէ: Նա իմ կայացրած ընտրությունների արդյունքն է: Երեխան կսիրվի և կընդունվի որպես պարգև՝ չնայած նրան, որ բեղմնավորումը տեղի է ունեցել ամուսնության ուխտից դուրս:

Աստված ներում է մեր սխալները, անհաջողությունները և մեղքերը: Հրաշքները միշտ չէ, որ այնպիսի տեսք ունեն, ինչպիսին մենք ակնկալում ենք, և կոտրված կտորներից գեղեցիկ բաներ կարող են ստեղծվել: Աստծո համար անհնարին ոչինչ չկա, բայց երբ սիրտը կոտրվում է, դա դառնում է Նրա առաջին մտահոգությունը: Նա հեռացնում է քարեղեն կոտրված սիրտը և փոխարինում այն մսեղեն փափուկ սրտով: Մենք կարող ենք վստահել Նրան, երբ Նա ասում է, որ մենք նոր ստեղծված ենք:

*Տե՛ր, ցո՛ւյց տուր հավիտենական ներման և բնական հետևանքների տարբերությունը: Ես վստահում եմ Քո կարողությանը՝ դարձնելու ինձ լիարժեք բոլոր առումներով:*

*Ես ուժեղ եմ:*

ԵՐԲ ՎՍՏԱՀՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ՝
ԻՄ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՏԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

9

# ԱԶԱՏՎԵԼ՝ ՆՐԱՆԸ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*«Ես եմ Եհովան՝ ձեր Աստվածը, որ ձեզ Եգիպտոսի երկրից հանեցի՝ Քանանի երկիրը ձեզ տալու համար և ձեզ Աստված լինելու համար»:*

ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 25.38

Մեզնից քանի՞սն են լսել այս հարցը. «Եթե այս գիշեր մահանաք, հաստատ գիտե՞ք, թե ուր եք գնալու»: Հարցի նպատակն է, որ լսողն ինքն իրեն հարցնի. «Ես հաստատ գիտե՞մ, որ երկինք եմ գնալու»: Եթե չգիտեն, ունեն հնարավորություն՝ աղոթելու և ապահովագրելու իրենց հավիտենական դիրքը: Բայց հավիտենությունն ավելին է, քան հետմահու նպատակակետ. այն ապրելակերպ է հիմա: Հետևյալ խոսքը ներկայացնում է Իսրայելին Եգիպտոսից ազատելու Աստծո խորին ցանկությունը և նպատակը. «Դուք տեսաք, ինչ որ արի եգիպտացիներին և ձեզ արծվի թևերի վրա տարա և Ինձ մոտ բերեցի» (Ելից 19.4):

Ես սիրում եմ այս խոսքի գեղեցկությունը և զորությունը: Երկնքի հզոր Թագավորը հայտնվում է, որ վճռականորեն փրկի Իր ժողովրդին չորս հարյուր տարվա ստրկությունից: Այս ընթացքում Նա հարվածում է Եգիպտոսին՝ աշխարհում ամենահզոր տերությանը, և խայտառակելով վերածում այն ավերակի: Իսրայելցի ստրուկները ստանում են եգիպտացիների արծաթն ու ոսկին:

Սա պարզապես Նրա ցանկությունը չէր Իսրայելի համար. սա Նրա ցանկությունն է ձեզ համար:

Մեր սիրատենչ և սուրբ Աստված ձեզ է ցանկանում: Նա սպասում և հետևում է, որ դուք հայացք նետեք Իր ճանապարհին: Նա փափագում է, որ դուք կարդաք սիրո այն նոթերը, որ գրել է Սուրբ գրքում՝ հույս ունենալով, որ կարձագանքեք Իր սիրահետումներին: Նա ցանկանում է ազատել ձեզ խավարի մեջ թաղված աշխարհի գերությունից և տեղափոխել այն կյանքի մեջ, որն Իր լույսի աշխարհում է: Նա փափագում է խլել ձեզ անհավատարիմ սիրեկանների գրկից և բերել Իր հավատարիմ, հավիտենական գիրկը: Նա ցանկանում է ազատել ձեզ այս աշխարհի դաժան վերակացուներից և ծանր կապանքներից, որպեսզի ցույց տա Իր քնքուշ սերն ու ողորմությունը:

Փրկությունը երբեք կապված չէր միայն խոստման երկրի հետ, այն կապված էր Նրա հետ, ով տվել էր խոստումը: Ի վերջո Նա ցանկանում է բերել մեզ Իր մոտ: Հին կտակարանի խոստումները գալիք բաների նախանշաններն էին: Փրկության գործում Աստծո վերջնական նպատակը Իր զավակներին Իր մոտ բերելն էր: Սիրելինե՛ր, փրկագնումը շատ ավելին է, քան հրդեհից կամ կյանքի ապահովագրությունը:

Ո՞վ չի փափագում ազատվել այս աշխարհի դաժանությունից և փոխադրվել Աստծո սարը: Ի վերջո այս աշխարհը մեր տունը չէ, այնպես որ, ճիշտ կլինի, որ ջերմացնենք այս փափագը: Մենք պետք է գրկաբաց ընդունենք փրկությունը գերությունից և դատաստանից, բայց փրկությունն այսքանով չի ավարտվում: Եկե՛ք ձգտենք դառնալու Նրանը:

*Հա՛յր, շնորհակալություն, որ ազատում ես ինձ, որպեսզի ոչինչ չխանգարի լինելու Քոնը: Ես ընտրում եմ հետամուտ լինել Քեզ ճանաչելու խոստումին:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՓՐԿՎԵԼ ԵՄ՝
ՆՐԱՆԸ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

# Ուժեղ՝ սրբության մեջ

I

# ՈՉ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ

*«...աշխարհից չեք, այլ Ես ձեզ ընտրեցի աշխարհից...»:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.19

Յիսուսը հստակ ասում է, որ այս աշխարհինը չենք: Ինչպե՞ս պետք է այս իրողությունն ազդի մեր վարքագծի վրա: Այս աշխարհը, մասնավորապես՝ նրա մշակույթը, խրախուսում է մեզ համապատասխանել իր վարքագծին: Բայց մենք այլևս չենք պատկանում մեր մշակույթին. մենք փոխհարաբերության մեջ ենք մարդկանց և Աստծո հետ: Մենք կանչված ենք տարբերվելու մեր մշակույթից. սիրելու, երբ ատում են, և բարի լինելու, երբ դաժան են: Այս տարբերությունը տարածվում է նաև մեր բարոյական արժեհամակարգի վրա: Եփեսացիների գիրքը մեզ ուղղորդում է. «Բայց պոռնկություն և ամեն պղծություն կամ ագահություն թող չանվանվի ձեզնում, ինչպես սուրբերին կվայելի» (5.3):

Այս խոսքում ոչ մի անորոշություն չկա: Ինչո՞ւ այդքան խիստ: Իմ կարծիքով պատճառն այն է, որ նույնիսկ մի ակնարկը կարող է հաղորդել ոչ միանշանակ ուղերձներ, որոնք կարող են շփոթեցնել մարդկանց: Քանի որ մենք Աստծունն ենք, պատվում ենք Նրան այն ամենում, ինչ ասում ենք և անում: Սա նշանակում է, որ մեր խոսքերը և վարքը պետք է արտացոլեն Նրա ներգործությունը մեր կյանքում: Քրիստոսում մենք ավելի, քան ներված ենք. մենք սուրբ ենք: Մենք լույս ենք այնտեղ, որտեղ մի ժամանակ խավար էինք:

Եփեսացիների թուղթը շարունակում է. «Եվ գարշություն կամ հիմար խոսքեր կամ խեղկատակություն, որ

չեն վայելում, այլ մանավանդ գոհություն» (5.4)։ Պողոսը ցանկին ավելացնում է շփոթեցնող վարքագիծը, գարշությունները, հիմարությունը և խեղկատակությունը. այսպիսի խոսակցություններից ոչ մեկը չի համապատասխանում աստվածապաշտությանը և միայն խառնաշփոթ է առաջացնում նրանց համար, ովքեր փնտրտուքի մեջ են։

Անպարկեշտ խոսակցությունների փոխարեն երախտագիտություն արտահայտենք։ Երախտապարտ լինենք Աստծո բարեհաճության և շնորհի համար։ Գոհությունը միայն բավական է, որ ստիպի մեզ խոսել երկար ժամանակ։ Կոպիտ, փնթփնթան և դժգոհ լինելու փոխարեն կարող ենք ընդօրինակել մեր Հորը՝ օրհնելով և կյանք արծակելով մեր խոսակցությունների միջոցով։ Մեզ զգուշացվում է, որ թույլ չտանք, որ որևէ մեկը խաբի մեզ դատարկ խոսքերով։ Դատարկ խոսքերը ընկղմում են մեզ ինքնագոհության մեջ. «Ամեն բան լավ կլինի... Մեծ խնդիր չէ... Մյուսներն էլ են այդպես վարվում...»։ Եթե խոսքերը կարող են դատարկ լինել, կարող են նաև լի լինել։ Կյանքի խոսքերը կոչ են անում մեզ ավելի լավ բաների։ Դրանք հիշեցնում են, որ մենք նման չենք մնացած բոլորին, որովհետև Բարձրյալ Աստծո դուստրերն ենք։ Մենք աշխարհում ենք, բայց աշխարհից չենք (Հովհաննես 17.15, 16)։

*Ասպվա՛ծ, խնդրում եմ, ցո՛ւյց փուր աշխարհի և Քո գործելակերպի փարբերությունը։ Ես ուզում եմ պապվել Քեզ իմ խոսքերով և գործողություններով՝ առանց որևէ այլ բան ակնարկելու։*

*Ես ուզում եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԳՈՐԾՈՒՄ ԵՄ ՈՉ ԹԵ ԱՇԽԱՐՀԻ, ԱՅԼ ԱՍՏԾՈ ՉԱՓԱՆԻՇԵՐՈՎ։

2

# ՍՈՎՈՐԵԼ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

*«Երանի՜ այն ամենին, որ Տիրոջից վախենում են և Նրա ճանապարհներում գնում»:*

ՍԱՂՄՈՍ 128.1

Հաճախ երեխաներն ակնհայտորեն ցույց են տալիս այն, ինչի մասին մեծահասակները սովորում են լռել: Երբ մեր երկրորդ որդին՝ Օսթինը, փոքր էր, մի դեպք պատահեց, որը ցույց տվեց, թե ինչպես ենք մենք արձագանքում, երբ դժվարանում ենք հնազանդվել Աստծուն:

Երբ ընդամենը երկու տարեկան էր, նրա ընկերները եկան մեր տուն՝ միասին խաղալու: Նրանք պետք է գնային, և որոշեցի երեխաներին դոնդողե դինոզավրիկներ բաժանել: Մեծ քանակությամբ դինոզավրիկներ լցրի Օսթինի բուռը, որ նա փոխանցեր դրանք: Դուրս գալիս ամեն երեխա վերցնում էր, բայց երբ Օսթինի մոտ մնաց երկուսը, նա ամուր փակեց բռունցքը: Վերջին աղջիկն էր սպասում: Ես քաջալերեցի նրան. «Օսթի՛ն, տուփի մեջ դեռ շատ կա: Տո՛ւր նրան այդ երկուսը»:

Նա փախավ և փաթաթվեց փոստարկղի սյանը՝ գլուխը տարուբերելով: Նա չէր պատրաստվում հանձնվելու:

Ես վազեցի տուն և աղջկան տուփից դոնդողե դինոզավրիկներ առաջարկեցի: Հրաժեշտ տվեցի ընկերուհիներիս և նրանց երեխաներին՝ փորձելով որդուս «պոկել» փոստարկղից:

Երբ մտանք տուն, տրորված դոնդողե դինոզավրիկները վերցրի նրա ձեռքից և ուղարկեցի նրան իր սենյակ, որ հանգստանար:

«Ես չեմ գնա իմ սենյակ»,- հայտարարեց նա՝ դուրս գալով խոհանոցից: «Կգնաս»,- հանգիստ ասացի ես՝ մնալով խոհանոցում:

Դա կրկնվեց մի քանի անգամ, բայց նկատեցի, որ նրա ձայնն ավելի ու ավելի հեռվից էր հնչում: Նա գնում էր իր սենյակի ուղղությամբ: Մոտ տասնհինգ րոպե անց լսեցի, թե ինչպես նա ընդգծված տոնով ասաց. «Ես չեմ պատրաստվում քնելու»:

Հետո լռություն տիրեց: Ավելի ուշ կամացուկ բարձրացա և տեսա, որ նա հանգիստ քնած էր իր մահճակալին:

Ինչ-որ պահի Օսթինը հասկացավ, որ սխալ է, և նույնիսկ գիտեր, թե ինչ պետք է աներ: Ահա թե ինչու նա գնաց քնելու: Ինչի՞ համար էր այդ հոգնեցնող առարկությունը: Ինչո՞ւ էր նա այդպես ջանասիրաբար դիմադրում:

Իսկ ինչո՞ւ ենք մենք այդպես դժվարանում հնազանդվել: Կարծում եմ, հաճախ պատճառը նույնն է: Օսթինը տեսավ, որ իր ձեռքի կույտը փոքրանում է, և իրեն ոտնահարված զգաց:

Անկեղծ ասած՝ նրա մեջ ես ինձ ճանաչեցի: Ես պայքարել եմ հուսախաբության նույն զգացումների դեմ, որոնք չեմ կարողացել արտահայտել բառերով: Դա է պատճառը, որ անհեթեթ հայտարարություններ եմ արել՝ կարծես ասելով. «Աստվա՛ծ, ես կհնազանդվեմ, բայց միայն հարկադրված և երբ պատրաստ լինեմ»:

Հասունանալով մենք սովորում ենք հիստերիա չբարձրացնել կամ չարձագանքել եսասիրությունից դրդված, այլ վստահ լինել, որ Աստված գիտի, թե որն է լավագույնը մեզ համար: Շատ ավելի պակաս հոգնեցուցիչ է հենց սկզբում ճիշտ վարվելը, քան հետո դժվարությամբ դրան հասնելը:

*Տե՛ր, երբ չեմ ցանկանում հնազանդվել, սովորեցրո՛ւ ոչ թե հակազդել, այլ մոտենալ Քեզ հենց սկզբում և ոչ թե վերջում:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՀՆԱԶԱՆԴՎՈՒՄ ԵՄ ԱՌԱՆՑ ԴԻՄԱԴՐԵԼՈՒ:

3

# ՍՐԲՎԵԼ

*«Այլ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սո՛ւրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»»:*

Ա ՊԵՏՐՈՍ 1.15, 16

Աստված սուրբ է… ուստի մենք սրբությամբ ենք վարվում: Սրբությունը լավը լինելու ևս մեկ ձախողված փորձ չէ. դա հայտնություն է այն մասին, որ մենք Նրանն ենք: Սրբությունն ավելին է, քան աշխատանքի նկարագրություն ծառայողների համար. այն հրաման է բոլոր նրանց համար, ովքեր հավաքվում են սուրբ Աստծո առջև: Մենք սուրբ պետք է լինենք, որովհետև Նա սուրբ է: Մեզ չեն խնդրում սրբությամբ վարվել կամ սուրբ տեսք ունենալ. մեզ առաջարկվում է սուրբ *լինել*: Լինել ինչ-որ բան նշանակում է, որ այն դառնում է մեր էության մասը կամ կյանքի շարժիչ ուժը: Մենք լցված ենք և առաջնորդվում ենք Նրա Հոգով, որը սուրբ է՝ Սուրբ Հոգով:

Սրբությունը պետք է ազդի մեր անձնական փոխհարաբերությունների և սոցիալական վարքի վրա: Մենք կարող ենք սրբությամբ վարվել, բայց չլինել սուրբ. մենք կարող ենք սուրբ տեսք ունենալ, բայց չլինել սուրբ: Լինել ինչ-որ բան նշանակում է, որ դա մեր էությունն է:

Ի՞նչ է նշանակում լինել սուրբ: Այս խոսքը մեզ որոշակի հասկացողություն է տալիս. «Ինչպես որ ընտրեց մեզ Նրանով աշխարհի ստեղծելուց առաջ, որ մենք սուրբ և անարատ լինենք Նրա առաջ սիրով» (Եփեսացիների 1.4):

Նախքան ծնվելը մենք ընտրված էինք: Մենք Նրա մտքում

էինք, նախքան Նա կստեղծեր երկիրը: Դուք ընտրված էիք Աստծուց Քրիստոսում և նախասահմանված էիք լինելու սուրբ և անարատ: Քանի որ Հիսուսը և՛ սուրբ է, և՛ անարատ, մենք նույնպես ժառանգում ենք Նրա դիրքը Հոր առջև:

Քրիստոսից դուրս մենք օտար էինք թե՛ Նրա զորությանը, թե՛ խոստումներին: Բայց խաչի վրա վարագույրը երկու մասի պատռվեց: Այն ամենը, ինչ հակառակ էր մեզ, գամվեց խաչին, և մենք մեկացանք Աստծո հետ (Կողոսացիների 2.14):

Լինել սուրբ նշանակում է առանձնանալ հոգով, շնչով և մարմնով: Պարզ ասած՝ սուրբ նշանակում է լինել Նրանը:

*Հա՛յր, շնորհակալություն Քո գերագույն զոհով Ինձ սուրբ դարձնելու համար: Դու սուրբ ես: Թո՛ղ այն ամենը, ինչ անում եմ, սրբության մեջ ինձ ավելի մոտեցնի Քեզ:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍՈՒՐԲ ԵՄ ԵՎ ՆՐԱՆՆ ԵՄ:

4

# ՄԱՔՐՎԵԼ ԿՐԱԿՈՎ

*«Ահա ես քեզ մաքրեցի և ոչ թե արծաթի կերպով, ես քեզ փորձեցի նեղության հալոցում»:*

ԵՍԱՅԻ 48.10

Ոսկին ևածաթը մաքրում կամ զտում են վառարաններում՝ այնքան բարձր ջերմաստիճանում, որ դրանք հեղուկանում են: Այդ վիճակում նստվածքը և խառնուրդը բարձրանում են մակերես և տեսանելի դառնում: Մետաղագործը հեռացնում է նստվածքը, նախքան մետաղը կսառչի և կամրանա: Այս գործընթացը կարող է կրկնվել այնքան, մինչև մետաղը մաքրվի աղտոտ նյութերից և համաձուլվածքներից, որոնք թուլացնում են այն:

Աստված բառացիորեն չի զտում մեզ կրակի հնոցում: Նա ունի այլ միջոցներ մեզ զտելու համար: Նա օգտագործում է նեղության հալոցը: Նեղության հոմանիշներից են զրկանքը, անախորժությունը, դժվարությունը, անհանգստությունը և փորձությունը: Ոչ ոք չի սիրում նեղություն, բայց ավելի լավ է դիմանալ մինչև վերջ, եթե ցանկանում ենք տեսնել գործընթացի արդյունքը: Սա կարևոր է հիշել, որովհետև փորձությունների բախվելիս հարցը ոչ թե «եթե»-ն է, այլ «երբ»-ը:

> «Երբ որ ջրերից անցնես, ես քեզ հետ եմ, և եթե գետերով, նրանք քեզ չեն ողողի. երբ որ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի» (Եսայի 43.2):

Կյանքի նեղությունները կարող են շատ նման լինել հեղեղների և կրակի բոցերի: Մեզնից ոչ ոք չի ստանում անցաթուղթ, որը թույլ կտա խուսափել այս փորձություններից, բայց մեզ խոստացվում է, որ դրանք ընդամենը ինչ-որ ժամանակահատվածի համար են: Մենք անցնում ենք այս նեղությունների միջով, երբ հրաժարվում ենք թույլ տալուց, որ դրանք ճնշեն մեզ: Մեր Հայրը գիտի, թե ինչ է անում, և այս մաքրման գործընթացը ենթադրում է, որ մենք կրակից դուրս կգանք ավելի զորացած:

Ի վերջո Աստված ավելի շատ մտահոգված է մեր վիճակով, քան մեր հարմարավետությամբ: Սա նշանակում է, որ Նա թույլ կտա մեր կյանքում անհարմարություններ, որպեսզի բացահայտի մեր իսկական վիճակը: Շատ հաճախ մաքրման այս գործընթացը սկսվում է մեր աղոթքներով: Իրավիճակները սկսում են թեժանալ ամեն անգամ, երբ խնդրում ենք, որ Աստված հեռացնի այն ամենը, ինչը խանգարում է մեր աճին կամ չի հաճեցնում Իրեն: Կրակոտ փորձությունները միջոց են՝ բացահայտելու և՛ մեր ուժեղ կողմերը, և՛ մեր մոլորությունները: Կոչ եմ անում ձեզ երգելու բոցերի մեջ և թույլ տալու, որ ձեր գոհության աղոթքները հեղեղի ջրերից վեր բարձրանան, որովհետև Աստված մաքրում է ձեզ Իր նպատակի և ձեզ ուժեղացնելու համար:

*Սիրելի՛ Տեր, բացի՛ր իմ աչքերը, որպեսզի տեսնեմ, որ դժվարությունն ու նեղությունն իրականում ինձ կերպարանափոխելու միջոցներ են: Ես գիտեմ, որ ինձ չես թողնի այս մաքրման գործընթացում, ուստի արա՛ այն, ինչ ցանկանում ես:*

*Ես ուզում եմ,*

ԵՐԲ ԹՈՒՅԼ ԵՄ ՏԱԼԻՍ, ՈՐ ԻՄ ԿՅԱՆՔԻ ԿՐԱԿՆԵՐԸ ՁՏԵՆ ԵՎ ՄԱՔՐԵՆ ԻՄ ՍԻՐՏԸ:

5

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

*«Արդ հնազանդվե՛ք Աստծուն, հակառա՛կ կացեք սատանային, և նա կփախչի ձեզնից»:*

ՀԱԿՈԲՈՍ 4.7

Ծոմը հոգու ծանրության թեթևացման միջոց է: Հոգևոր ծոմն այն է, երբ հրաժարվում եք որևէ մտքից, գործողությունից կամ սովորությունից: Ֆիզիկական ծոմը կերակուրից հրաժարվելն է Աստծուն փնտրելու նպատակով:

Ինչո՞վ է ծոմը տարբերվում սննդակարգի հետևելուց: Սննդակարգը փոխում է ձեր տեսքը, իսկ ծոմը՝ այն, թե ինչպես եք դուք տեսնում: Մեկը փոխում է կշռաքարերը, մյուսը հեռացնում է աչքակալը (կշռաքարերը) ձեր աչքերից: Ծոմը արտահայտում է մեր հնազանդությունն Աստծուն: Երբ կանգ ենք առնում, ծնկի իջնում և անձնատուր լինում Աստծուն, թշնամին սարսափում է և փախչում: Երբ դադարում ենք սնվելուց, զարգացնում ենք քաղցի և ծարավի զգացողություն այն ամենի նկատմամբ, ինչը վերաբերում է Աստծուն: Մեր հակումները փոխվում են, երբ սնվում ենք Աստծո Խոսքով և հիշում Նրա բարությունն ու սերը: Ծոմը բարձրացնում է մեր զգոնությունը, որը նպաստում է, որ մեր սիրտը փափկի:

Եթե առաջին անգամ եք ծոմ պահում, սկսե՛ք առողջարար բաներից, օրինակ՝ հրաժարվե՛ք անառողջ սննդից, ինչպիսիք են սպիտակ ալյուրը և շաքարը: Կարող եք կարդալ Դանիելի ծոմի մասին: Կամ կարող եք հրաժարվել ճաշից: Եթե պատրաստվում եք ծոմ պահելու միայն ջրով և ունեք առողջության խնդիրներ

կամ դեղեր եք ընդունում, նախ խորհրդակցե՛ք բժշկի հետ*:

Ծոմն այն է, երբ մերժում եք ձեր մարմինը: Դա ֆիզիկական անհարմարություն է պատճառում: Բայց հոգևոր իմաստով սա տոնի և ուրախության ժամանակ է: Երբ պատվեք Թագավորին, Նա կպատվի ձեզ Իր ներկայությամբ: Ծոմը սուրբ արտոնություն է, ոչ թե պատիժ: Գիտակցե՛ք, որ սա կյանքի և մահվան հարց է. դուք վերջ եք դնում ստրկությանը:

Անիմաստ է հրաժարվել սննդից, եթե անձնատուր չեք լինում Աստծուն: Անջատե՛ք հեռախոսը, համակարգիչը և հեռուստացույցը: Միացրե՛ք փառաբանության և երկրպագության երաժշտություն: Սա Շաբաթի ժամանակ է, մի՛ զբաղվեք այլ բաներով: Հանգստացե՛ք, քնե՛ք և մոտեցե՛ք Նրան: Կարդացե՛ք Խոսքը, այդ թվում՝ Եսթերի գիրքը, կամ քրիստոնեական այլ գրքեր, որոնք ծոմապահության կոչ են անում:

Ծոմի ժամանակ դուք զորացնում եք ձեր հոգին: Պահե՛ք աղոթքի խնդրանքների օրագիր այս ժամանակի համար: Բա՛ց և ազնի՛վ եղեք Հոր հետ և գրի՛ առեք այն, ինչ Նա ցույց է տալիս Սուրբ գրքի և աղոթքի միջոցով:

Սա սիրելու ժամանակ է, և ես հավատում եմ, որ Նա կտա ձեզ կենդանի ջուր և սնունդ:

*Տե՛ր Աստված, երբ ծոմ պահեմ, մոտեցի՛ր ինձ: Փոխի՛ր իմ հակումները և փո՛ւր ինձ ծարավ Քո հանդեպ: Ես կլռեմ՝ հավատալով, որ Դու կխոսես: Ավելացրո՛ւ իմ զգայունությունը և ցո՛ւյց տուր այն բաները, որոնք բթացրել են ինձ:*

*Ես ուժեղ եմ,*

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՐԲ ԾՈՄ ԵՄ ՊԱՀՈՒՄ, ԽՆՋՈՒՅՔ ԵՄ ԱՆՈՒՄ ԻՄ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՏ:

* Այս գիրքը նախատեսված չէ բժշկական խորհրդատվության համար և չի կարող փոխարինել ձեր անձնական բժշկի խորհրդատվությանը և բուժմանը, ուստի խորհուրդ եմ տալիս խորհրդակցել ձեր բժշկի կամ առողջապահության ոլորտի որակավորված մասնագետի հետ ձեր ծոմապահության վերաբերյալ, եթե ունեք մտահոգություններ: Եթե տասնութ տարեկանից ցածր եք, ծոմ մի՛ պահեք՝ առանց նախապես քննարկելու ձեր ծնողների հետ:

6

# ԸՆԾԱՅԵԼ ՍԻՐՏԸ

*«Սակայն հիմա էլ,- ասում է Տերը,- դեպի Ի՛նձ դարձեք ձեր ամբողջ սրտով և ծոմով ու լացով և սգով: Եվ պատառե՛ք ձեր սրտերը ու ոչ թե ձեր հանդերձները և ե՛տ դարձեք դեպի ձեր Տեր Աստվածը, ըստ որում ողորմած և գթած է, երկայնամիտ և բազումողորմ և զղջացող չարիքի համար»:*

ՀՈՎԵԼ 2.12, 13

Աստված անդադար հետևում է մեզ: Անկախ նրանից, թե որտեղ ենք, ինչ ենք արել՝ Նա կհետևի մեզ մինչև երկրի ծայրերը: Աստված աղաղակում է այս սերնդին. «Հենց հիմա, երբ ամեն բան այնքան անհույս է թվում, և դուք այդքան աղտոտված ու անօգնական եք: Հենց հիմա: Երբ մյուսները ձախողվել են, և այն ամենը, ինչ փորձել եք, հիասթափեցրել է ձեզ... Ես չեմ հիասթափեցնի: Հենց հիմա: Երբ թվում է, թե արդեն չափազանց ուշ է... ուշ չէ: Վերադարձե՛ք դեպի Ինձ ձեր ամբողջ սրտով»:

Քանի որ Նա հետևում է մեզ, մենք ընդամենը պետք է շրջվենք դեպի Նա: Նա առաջարկում է, որ լինենք խոհեմ, խիզախորեն և ճշմարտացիորեն նայենք մեր իրավիճակին և գիտակցենք, որ դա հաճելի տեսարան չէ: Մեր մեղքերը բաց վարդագույն չեն... դրանք ալ կարմիր են: Բայց Աստված չի ցանկանում մեր բոսորագույն զոհը, որովհետև Իշխանն արդեն վճարել է գինը: Աստված փափագում է մաքրել մեզ: Փուչ «կերակուր»-ը (այն, ինչին ձգտում ենք այս աշխարհում) չի հագեցնի մեզ, փոխարենը Նա մեզ առաջարկում է երկրի բարիքը... եթե նախ հոժարենք, այնուհետև հնազանդվենք: Հոժարենք

ապաշխարելու և ասելու, որ շեղվել ենք: Հոժարենք ծառայելու Նրան ուրախությամբ, որովհետև Նա բարի է, հավատարիմ և ճշմարիտ: Հոժարենք հնազանդվելու Նրա խոսքին, որովհետև այն սիրո, կյանքի և ազատության օրենքն է: Հոժարենք վերցնելու մեր խաչը և ծածկենք մեր կյանքը Քրիստոսի՝ մարմին դարձած Խոսքի մեջ, և հոժարենք հետևելու Նրա օրինակին: Հովելի խոսքերն այսօր մեզ կոչ են անում. «Դեպի Ի՛նձ դարձեք ձեր ամբողջ սրտով»՝ անկախ նրանից, թե ինչ վիճակում է ձեր սիրտը: Միշտ պայքար է ընթացել կանանց սրտերի համար, և Աստված խնդրում է ձեր կոտրված, փշրված և վիրավոր սիրտը: Նա հրավիրում է, որ շրջվեք աշխարհի մղձավանջից և վերադառնաք դեպի Իր երազանքը, որովհետև ժամանակների սկզբից Նա հարսնացուի է փնտրում... հենց ձեզ նման:

*Հա՛յր, շնորհակալությո՛ւն, որ հեռևում ես ինձ*
*այնքան մոտիկից, որ ինձ մնում է միայն շրջվել*
*և ընկնել Քո գիրկը: Ես իմ սիրտը Քեզ եմ ըն-*
*ծայում և վերադառնում եմ Քեզ մոտ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ՇՐՋՎՈՒՄ ԵՄ ԴԵՊԻ ՆԱ,
ՈՎ ՀԵՏԵՎՈՒՄ Է ԻՆՁ:

7

# ՎԵՐՑՆԵԼ ԽԱՉԸ

*«Եվ ամենքին ասում էր. «Եթե մեկը կամենում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնի և Իմ հետևից գա: Որովհետև ով որ կամենա իր անձն ապրեցնել, կկորցնի նրան, և ով որ իր անձը կորցնի Ինձ համար, նա կապրեցնի նրան»:*

ՂՈՒԿԱՍ 9.23, 24

Աստված միշտ փափագում է, որ լինենք Իրենը, ոչ թե փորձենք լավը լինել մեր մարդկային թույլ ջանքերով: Նա փափագում է, որ տեսնենք կրոնի վարագույրից և մարմնի գործերից այն կողմ և համարձակվենք մոտենալ հավատքով՝ երբեք չկասկածելով Իր բարությանը: Նա ցանկանում է, որ երկրպագենք Իրեն հոգով և ճշմարտությամբ, ամեն օր վերցնենք մեր խաչը և հետևենք Իրեն:

Ի՞նչ է նշանակում, երբ Հիսուսն ասում է, որ վերցնենք մեր խաչը: Դա այնքան հեշտ չէ, որքան պարանոցին զարդ կրելը: Դա նշանակում է ամեն օր հռչակել, որ մենք կենդանի զոհ ենք Նրա համար: Բայց խաչը կրելն այդքանով չի սահմանափակվում. դա ենթադրում է ունենալ այն զորությունը և խոստումները, որ խաչի միջոցով ձեռք է բերվել յուրաքանչյուրիս համար կորսված և մեռնող աշխարհում: Խաչը վերափոխում է ամեն բան:

Հին կտակարանում քահանաներն ամենօրյա զոհաբերություններ էին կատարում Աստծո առջև: «Այն ժամանակ Սողոմոնը Տիրոջը ողջակեզներ մատուցեց... Մովսեսի պատվիրածի համեմատ...» (Բ Մնացորդաց 8.12, 13): Խաչը վերցնելը մեր ամենօրյա զոհաբերությունն է: Այն հրահանգ է՝ տրված ոչ թե Մովսեսի օրենքով, այլ հենց կյանքի Տիրոջ կողմից:

Ոմանք կարող են վիճել՝ ասելով, որ մենք կարիք չունենք խաչ կրելու, որովհետև Հիսուսը վերջին զոհն էր, այնպես որ դա կատարված աշխատանք է: Մեր խաչը կրելը մեղքի զոհաբերություն չէ: Ոչ մի զոհ, որ կարող էինք մատուցել, չէր կարող բավարարել մեզ ներկայացված օրենքի պահանջները: Միայն Հիսուսն արեց դա՝ մահանալով մեր մեղքերի համար: Նրա կյանքը ծածկված է Աստծո մեջ, ինչպես մերը պետք է ծածկված լինի Նրա մեջ:

Հարկ չկա, որ մենք թափենք մեր արյունը, որովհետև Նա թափեց Իրենը: Բայց լինել կենդանի զոհ նշանակում է ապրել այնպես, ինչպես Նա ապրեց՝ մահացած մեղքին, կենդանի Աստծուն: Մենք մեզ՝ մեր մարմինը և հոգին, ներկայացնում ենք Աստծուն որպես արդարության գործիքներ:

Ողորմությունը դնում է մեզ շնորհքի, ոչ թե օրենքի ներքո, և ի պատասխան այս շնորհաշատ պարգևի՝ մենք հետևում ենք Քրիստոսի՝ խաչի օրինակին: Մենք ամեն օր անձնատուր ենք լինում Աստծուն և արդարությանը, ոչ թե մարմնին և անօրինությանը: Մենք կամովին դնում ենք մեր կյանքը և ներկայացնում մեր մարմինը: Այնուհետև հավատքով մոտենում ենք Աստծո սրտին՝ ընդունելով խաչը:

*Հիսո՛ւս, շնորհակալություն, որ իմ փոխարեն Դու բարձրացար խաչը: Սովորեցրո՛ւ, թե ինչ է նշանակում վերցնել իմ խաչը և ապրել՝ հնազանդվելով և երախտապարտ լինելով Քեզ:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԱՄԵՆ ՕՐ ԿՐՈՒՄ ԵՄ ԻՄ ԽԱՉԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԻՄ ԱՆՁԸ ՈՐՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԶՈՀ:

8

# ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ

*«Եվ այս Իմ խոսքերը ձեր սրտի և հոգու մեջ դրե՛ք և նրանց նշանի համար ձեր ձեռքերի վրա կապե՛ք, և նրանք ճակատանոց լինեն ձեր աչքերի մեջտեղում: Եվ գրի՛ր դրանք քո տան դրանդիների վրա և դռներիդ վրա, որպեսզի շատանան քո օրերը և քո որդիների օրերը…»:*

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 11.18, 20, 21

Աստված հորդորեց Իսրայելի զավակներին գրել Իր Խոսքը իրենց տան դրանդիներին և իրենց սրտերում: Աստվածաշնչյան խոսքերի շուրջ խորհելուց կամ դրանք անգիր անելուց բացի՝ ես ընդունում եմ սա որպես ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հրավեր: Աստծո ժողովուրդն անշուշտ կատարեց այս պատվիրանը: Հրեա տղամարդիկ պատրաստեցին փոքրիկ տուփեր, որոնք կոչվում էին ճակատազարդեր, և դրանք լցրեցին Սուրբ գրքի փոքրիկ մագաղաթներով ու բառացիորեն կապեցին իրենց ճակատներին՝ որպես օրենքը պահելու հիշեցում: Հրեական «մեզուզա» բառը բառացի նշանակում է «դրանդի»: Դա դռան վերևում կախված գեղեցիկ մակագրված տուփ է, որի ներսում կա մագաղաթ՝ հետևյալ գրությամբ. «Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր Եհովա Աստված՝ Եհովան, մեկ է: Եվ սիրի՛ր քո Եհովա Աստծուն ամբողջ սրտովդ, ամբողջ հոգովդ և ամբողջ զորությունովդ» (Երկրորդ օրինաց 6.4, 5): Ի՜նչ գեղեցիկ հիշեցում: Ինչո՞ւ մենք էլ նույնը չանենք:

Իմ որդիներն իրենց հայելիներին փակցնում են աստվածաշնչյան խոսքեր, որոնց շուրջ մտորում են: Իմ ամուսինը

մեքենայի մեջ սեղմապնակով Աստվածաշունչ է լսում, իսկ մարզասրահում՝ քարոզներ: Համացանցում կան ներբեռնելի հեռուստա-ռադիոծրագրեր, երկրպագության երաժշտություն և քարոզներ: Իրականում հեշտ է Աստծո Խոսքը ներառել առօրյայի մեջ:

Իմ թոռնիկներն անգիր են անում աստվածաշնչյան խոսքերը, որպեսզի գրեն դրանք իրենց սրտում: Ոմանք դաջվածքներ են անում: Եթե ամբողջ ընտանիքով եք անգիր անում աստվածաշնչյան խոսքերը, փակցրե՛ք դրանք մի քանի տեղ և քննարկե՛ք, թե ինչպես կարող եք կիրառել դրանք գործնականում: Անձնական խորհրդածության համար ձեր օրագրում նշե՛ք, թե ինչպես կարող է այդ խոսքը փոփոխություն բերել ձեր առօրյայում, փոխհարաբերություններում և հոգևոր աճի մեջ:

Այսպիսի գործնական քայլերը հիշեցնում են, որ Աստծո Խոսքը ներկա է և կիրառելի է ամեն վայրում, ամեն իրավիճակում, մեր կյանքի ամեն խաչմերուկում: Գրե՛ք, փակցրե՛ք, անգի՛ր արեք և կրկնե՛ք, մինչև որ Աստծո խոսքերը ձեր մտքից տեղափոխվեն ձեր սիրտ:

*Տե՛ր, ցո՛ւյց փուր սփեղծագործական ուղիներ՝ Քո Խոսքը իմ ամենօրյա, գործնական կյանքի անբաժանելի մասը դարձնելու համար:*

*Ես ուխտում եմ,*

ԵՐԲ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԵՐԸ ՄՇՏԱՊԵՍ ՊԱՀՈՒՄ ԵՄ ԻՄ ԱՉՔԵՐԻ ԱՌՋԵՎ ԵՎ ԻՄ ՄՏՔՈՒՄ:

Գ

# ՀԱՄԲԵՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

*«Լիարժեք ուրախությո՛ւն համարեք, եղբայրնե՛ր, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատի փորձառությունը համբերություն է գործում»:*

ՀԱԿՈԲՈՍ 1.2, 3

Իսկապե՞ս: Դժվար ժամանակներն ուրախությո՞ւն պետք է ներշնչեն: Եվս մեկ անգամ դուք տեսնում եք, որ մեր վերաբերմունքը ուժի նկատմամբ հակասում է մեր մշակույթի վերաբերմունքին: Վերջին հաշվով, ո՞վ «ուրախությամբ», ուր մնաց, «լիարժեք ուրախությամբ» կարձագանքի տարատեսակ փորձություններին: Մինչդեռ սա հենց այն է, ինչ Հակոբոսը՝ Հիսուսի եղբայրը, քաջալերում է մեզ անել: Հասկանո՞ւմ եք, մենք սովորում ենք հաբերատար լինել ավելի շուտ դժվար, քան հեշտ ժամանակներում: «Համբերատարություն» բառի հոմանիշներն են՝ նպատակասլացություն, ձգտում, նվիրվածություն, հաստատակամություն, տոկունություն և վճռականություն: Մենք այս ամենի կարիքն ունենք, եթե պատրաստվում ենք ամուր կանգնելու մի աշխարհում, որը ձգտում է փոխզիջման գնալու մեր ուժի հետ: Մեկ այլ սահմանում այս հատկությունը անվանում է «աստվածային շնորհ»:

«Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք» (Հակոբոս 1.4): Կատարելության և հասունության այս խոստման լույսի ներքո դուք կարող եք հասկանալ, թե ինչու էր Հակոբոսը մտածում, որ «բոլորովին ուրախությունը» համարժեք արձագանք է: Փորձության ժամանակ է, որ բացահայտում ենք, թե ինչին է ուղղված մեր վստահությունը կամ որտեղից ենք

վերցնում մեր ուժը: Երաշտի ժամանակ է, որ բացահայտում ենք մեր ջրհորի խորությունը: Առատության ժամանակները հազվադեպ են բացահայտում, թե ինչ որակներ մենք ունենք: Շատ առումներով փորձությունները և նեղությունները մեր հոգևոր ուժի մարզիչներն են:

Կարդանք Պողոսի խոսքերը, որպեսզի տեսնենք, թե ինչ փորձությունների են ենթարկվել վաղ շրջանի առաքյալները.

> «Երեք անգամ ձաղկով ծեծվեցի, մեկ անգամ քարկոծվեցի, երեք անգամ նավակոծ եղա, մի ցերեկ ու գիշեր անդունդում մնացի: Շատ անգամներ՝ ճանապարհներում. գետերից վտանգներ, ավազակներից վտանգներ, ազգիցս վտանգներ, հեթանոսներից վտանգներ, քաղաքի մեջ վտանգներ, անապատի մեջ վտանգներ, ծովի մեջ վտանգներ, սուտ եղբայրներից վտանգներ» (Բ Կորնթացիների 11.25, 26):

Այս ցանկն ընդամենը սուրբգրային երկու խոսք է, որ Պողոսը գործածեց իր նեղությունները նկարագրելու համար: Երբ կարդում եմ դրանք, մի փոքր վատ եմ զգում մեր նեղությունների հետ համեմատելով: Այսօր դրանց ցանկը կարող է այսպիսին լինել՝ չունենալ հետևորդներ սոցիալական ցանցերում, հրավիրված չլինել ընկերների հավաքույթին, չգնահատվել արածի համար, դժբախտ լինել տեսքի կամ քաշի պատճառով: Թերևս այն ամենի լույսի ներքո, ինչի հետ բախվեց վաղ եկեղեցին, ժամանակն է բարձրացնելու մեր ուժի մակարդակը:

*Երկնայի՛ն Հայր, ես ընտրում եմ փորձությունները համարել բոլորովին ուրախություն ոչ թե այն պատճառով, որ հաճույք եմ ստանում դրանցից, այլ որովհետև շնորհակալ եմ այն համբերատարության համար, որ կներգործես իմ մեջ դրանց միջոցով:*

*Ես ուժեղ եմ,*

ԵՐԲ ԳԻՏԵՄ, ԹԵ ԻՆՉ ԵՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԳՈՐԾՈՒՄ ԻՄ ՄԵՋ:

# ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԵՏՈ ՔԵԶ ԿԹՈՂՆԵՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՋ

**Ինչո՞ւ են կանայք ունենում կորուստներ, երբ նվիրվում են**




Կանայք մշտապես կորցնում են ավելին, քան կարող են թույլ տալ իրենց, երբ տեղի են տալիս: Տղամարդիկ սիրում են արկածներ և մակերեսային սիրային կապեր, այնինչ կանայք ստեղծված են մտերմության, ռոմանտիկ փոխհարաբերությունների և սիրո համար: Մենք շատ ավելին ենք, քան սեռական գործիքներ՝ տղամարդկանց համար. որպես կանայք՝ մենք ցանկանում ենք արժանանալ ավելիին, քան պարզապես սեռական վերապրումներն են:

«Համբույրներ, որոնք հետո քեզ կթողնեն արցունքների մեջ» գրքում Լիզա Բիվերը աստվածային պատասխաններ է տալիս դժվարին հարցերին: Այս գիրքը արժանապատվության և հույսի ուղերձ է ցանկացած տարիքի կանանց համար, որոնք այլևս չեն ցանկանում կորուստներ ունենալ: Այն ամենը, ինչ չափազանց վաղ է արթնացել ձեր մեջ, կրկին կարելի է քնեցնել: Դուք կարող եք քայլել ազատության, զորության և մաքրության մեջ՝ անկախ ձեր անցյալից:

Բացելով ձեր սիրտը Աստծո անսահման ներման համար՝ դուք կհայտնաբերեք ազատություն, որի նմանը երբևէ չեք ճանաչել: Ժամանակն է այս երկրի վրա վերականգնելու Աստծո թանկագին դուստրերի պատիվը, ուժը և նույնիսկ աստվածային զորությունը:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

# ԿՅԱՆՔ ԱՌԱՆՑ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ




Մենք դիտարկում ենք մարդկանց որպես մրցակիցների և սահմանափակում ենք մեր կյանքը՝ շարունակ համեմատվելով և մրցակցելով նրանց հետ: Նման վերաբերմունքը խոր հիմքեր ունի: Մենք թշնամի ունենք, որը հարձակվում է մեր մտքի, կամքի և զգացմունքների վրա: Նրա նպատակն է թշնամացնել ինքներս մեզ և մեկս մյուսի հետ: Մենք ասես փակ շրջանում ենք, որը մեկուսացնում է մեզ մարդկանցից, կասկածի է ենթարկում մեր ինքնությունը և սահմանափակում է մեր արդյունավետությունը:

«Կյանք՝ առանց մրցակցության» գրքում Լիզա Բիվերը ցույց է տալիս, թե ինչպես է հայտնությունն Աստծո սիրո մասին քանդում այս սահմանափակումները: Դուք կսովորեք չդիտարկել մարդկանց որպես մրցակիցների և սերտ հարաբերություններ կառուցել ձեր Ստեղծողի հետ, ինչի շնորհիվ կբացահայտեք ինքներդ ձեզ և կճանաչեք Նրան:

Լիզայի առողջ աստվածաշնչյան ուսմունքը՝ հագեցած մեր օրերի վերաբերյալ մարգարեական խորաթափանցությամբ և համեմված հումորով ու ավյունով, կոչ է անում ձեզ՝ օգտագործել մրցակցությունը, որպեսզի այն արթնացնի լավագույնը ձեզնում, չթաքնվել այն խոսակցություններից, որոնց դուք պետք է մասնակցեք, պատասխանել փաստարկներին, թե կանայք հարմար չեն որոշ գործերի համար և և դյուրահավատ են, պատռել սեռական մրցակցության դիմակը և համագործակցել տղամարդկանց հետ, որոնք կան ձեր կյանքում:

Ժամանակն է, որ քայլ անեք դեպի կյանք՝ առանց մրցակցության:

Հասանելի է MessengerX.com կայքում

# ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ
## Ինչպես հերոսաբար կրեք ձեր խաչը




Եթե երբևէ եղել է ժամանակ, որ կանայք պետք է զինված լինեն, ապա հիմա՛ է: Աշխարհով մեկ նրանք նախապաշարմունքների, թրաֆիքինգի, բռնության և նույնիսկ սեռասպանության թիրախներ են: Լիզա Բիվերը գրում է, որ այս հարձակումներն ավելի շատ ցույց են տալիս, թե ինչպիսին կարող են կանայք լինել ապագայում, քան թե ինչպիսին են նրանք եղել անցյալում:

«Թրեր կրող կանայք» գրքում նա ցույց է տալիս, որ մեր հոգևոր թշնամին ձգտում է զինաթափելու կանանց բոլոր առումներով: Ժամանա՛կն է, որ կանայք դառնան այնպիսի հերոսուհիներ, ինչպիսին Աստված ստեղծել է նրանց, և զբաղեցնեն իրենց դիրքը՝ լինելով խիզախ, զանազանող, ներող և իմաստուն:

Հասանելի է MessengerX.com կայքում

# MessengerX

*Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր*




- **Անվճար ավելի քան 125 լեզուներով**
- Հասանելի՝ որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն



Ստացե՛ք «Messenger»-ի
աշակերտական նյութերի
ամբողջական դարանը՝ էլեկտրոնային
գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ
ֆիլմեր, վիդեո ուսուցումներ,
Աստվածաշնչեր և ավելին.
դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք
ձեր բոլոր սարքերով:

**MessengerX.com**




Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

**ՈՒԺԵՂ ԼԻՆԵԼԸ ՍԽԱԼ ՉԷ:** **Աստված արարել է ձեզ՝ ուժեղ լինելու կյանքի ամեն բնագավառում: Սակայն սխալ է ուժեղ չլինելը: Այսօրվա մշակույթում մենք պարտավոր ենք ոչ միայն լինել ուժեղ կանայք, որը Աստծուց տրված մեր կոչումն է, այլև լինել ուժեղ Նրա Խոսքի ճշմարտության մեջ և փոխզիջման չգնալ արդարության մեր որոնումներում:**

**Ուժեղ լինելը կոչում է և հրաման, բայց այն, թե որտեղից ենք ստանում մեր ուժը, նույնքան կարևոր է, որքան այն, թե ինչպես ենք դա դրսևորում: Մեր մշակույթը կասի, որ ուժը գալիս է ներսից, բայց ճշմարտությունն այն է, որ ուժն Աստծուց է:**

**«Ուժեղ» գրքում Լիզա Բիվերը, որը ամենավաճառվող գրքերի հեղինակ է՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, թարմ տեսակետ է ներկայացնում այն մասին, թե ինչ է նշանակում լինել ուժեղ մի աշխարհում, որտեղ հաճախ ամեն բան սխալ է: Իր 90 ուղերձներում Լիզան անդրադառնում է այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ ինչպես լինել և՛ ուժեղ, և՛ հեզ, բժշկություն փոխհարաբերություններում, գոհունակություն, փրկարար զղջում, հանգստության ուժը և այլն: Նա կներշնչի ձեզ զորանալ, աճել հավատքի մեջ և վերապրել Աստծո, մարդկանց և ինքներդ ձեզ հետ ներդաշնակ ապրելու ուրախությունը:**



Լիզա Բիվերի անկեղծ, ջերմեռանդ և զվարթ մոտեցումը միահյուսում է աստվածաշնչյան խոր ճշմարտությունները գործնական քայլերի հետ: Նրա գրքերը, այդ թվում՝ «Պայքարի՛ր կնոջ նման», «Երբ արթնանում են կին առյուծները» և «Թրեր կրող կանայք», թարգմանվել են ավելի քան 65 լեզուներով և հասանելի են միլիոնավոր մարդկանց ամբողջ աշխարհում: Լիզան և նրա ամուսինը՝ Ջոնը, հանրաճանաչ հեղինակներ են և «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրները:

Իմացե՛ք ավելին **MessengerX.com** կայքում:

Messenger
INTERNATIONAL

Այս գիրքը նվեր է հեղինակից
և վաճառքի ենթակա չէ:

Ցանկանո՞ւմ եք ավելին:
Տեսածրե՛ք ծածկագիրը: